

891.99-82
Re-53

2. 44

ՈՒՆԵՎՈՐ

ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՈՎ



ԺՈՂՈՎԱԾՈՒ ՆՎԻՐՎԱԾ

1933 թ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ

ԳՅՈՒՂՅՐԱՏ ★ 1934 ★ ՅԵՐԵՎԱՆ

338.1
ՈՒ-56



211

Յուզեղանի Տպարան
գլխավոր № 205
պատվեր № 211
տպագրված 3000

2011-05

891899-82

1006-53

սփ

ՈՒՆԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՅՈՎ



ԺՈՂՈՎԱԾՈՒ
Ն Վ Ի Ր Վ Ա Ծ 1933 ԹՎԻ
ԴՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՐԳԱՆԻՇԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ

3119 1006
29548

ԴՅՈՒՂԱՐԱՏ

1934

ՅԵՐԵՎԱՆ



27.08.2013

Կազմեց յեմ խմբագրեց



Շապիկը յեմ սիսուլը
Ա. ԳԱՐԻՐԵԱՆԻ

12682

ԳՅՈՒՂ ՀՐԱՏԻ ԿՈՂՄԻՑ

Անցյալ 1933 թիվը կոլսնեստական շինարարության բնագավառում խո-
նոր բեկման սարի հանդիսացավ:

Կոլեկտիվ սնեստությունների բուշե-
վիկացման յեվ կոլսնեստականներին
ունեվոր դարձնելու հանապարհին
խոնոր պատմական գործ կատարվեց:
Անցյալ սարի մեր դաշերում հաջող
պայքար ծավալվեց բեքասվության
բարձրացման համար:

Ներկա ժողովածուն նպասակ ունի
սպու առանձին եպիգոդներ այդ պայ-
քարից, վերհանելու առաջավոր կոլ-
սնեստությունների յեվ կոլսնեստական-

ների հերոսական աշխատանքի փորձը:

Այդ փորձը պեժք է ոգտագործել այս
սարի ավելի կազմակերպված պայ-
քար մղելու կոլսնեստությունների ամ-
րապնդման, նրանց դաշերի բեքա-
սվությունը բարձրացնելու համար:

Դրան էլ հեժապնդում է ժողովա-
ծուն:

Ժողովածուն կազմել է «ՍոցԴյուդ»-ի
խմբագրությունը, 1933 թվի ընթաց-
քում խմբագրության բեքադների
կատարած ուսումնասիրությունների
յեվ բեքում յույս շեռած լավագույն
նյութերի հիման վրա:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐՈՂ ՇԻՐՎԱՆՁԱԴԵՅԻ ԽՈՍՔԸ

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿՈՆՏԵՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Ընկեր կոլտնտեսականներ, Հայաստանի Խորհրդային Դրոշմների Միությունն ինձ վրա շատ հաճելի ու պատվավոր պարտականություն է դրել՝ շնորհավորելու ձեր համագումարը:

Հարվածային կոլտնտեսական ընկերներ, մինչև այժմ ձեզ ճանաչել եմ հեռվից, և առաջին անգամ հաճույք ունեմ դեմ առ դեմ լսելու ձեր պայքարի և հաղթանակի պատմությունը:

Թե ինչ է կոլեկտիվ տնտեսությունը, — այդ դուք մեզնից լավ գիտեք: Մենք՝ գրողներս, վողջունում ենք կոլեկտիվ տնտեսության հաղթանակները և գյուղում այն հաղթանակները, վոմոնք գալիս են վերջնականապես շախշախելու մասնավոր սեփականությունը, այդ սեփականության զգվելի կարգերից բղխող շահագործումը, նախանձն ու ատելությունը: Դուք միացրել եք ձեր մասնավոր սեփականությունները և կոլեկտիվ տնտեսություն եք կազմակերպել, կոլեկտիվ կյանք եք ստեղծել:

Վստահ եմ, վոր այլևս տեղի չեն ու-



Ժողովրդական գրող Ս. ՇԻՐՎԱՆՁԱԴԵ

նենա այնպիսի յերևույթներ, յերբ նախանձից դրված հարևանը հարևանի դեմն եր այրում, վոչխարը գողանում, արտը փշացնում: Յեվ շատ անգամ գյուղացու մի վոտն արտումն եր, մյուսը՝ դատարաններում:

Թող կորչի մասնավոր սեփականությունը, կեցցե սոցիալիզմի հաղթանակը քաղաքում և գյուղում:

Ընկեր կոլտնտեսականներ, դուք կառուցում եք մի այնպիսի հոյակապ մոնումենտ, վորով վոգեվորվում են կապիտալիստական աշխարհում շահագործվող միլիոնավոր բանվորներ և գյուղացիներ:

Դուք մարդկության պատմության համար մի փառավոր եջ եք բացում: Դուք գնում եք դեպի յերջանիկ ու հրաշալի կյանք:

Թույլ տվեք շնորհավորել ձեր առաջին բայերը: Լենինի մեծ կուսակցության և նրա պողպատե ղեկավար ՍՏԱՆԻՆԻ գծած ուղին միակն է ձեր փրկության համար:



Ա. Բ Ա Ժ Ի Ն

ԿՈՆՏՆԵՆԱԿԱՆ ԶՈԿԱՏՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ
ԽՆԱՄՔՈՎ ՑԱՆՔԻ ՅԵՎ ԽՆԱՄՔՈՎ
ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՅՍ ԲԱԺՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ

1. Գ. Հ.
2. Ա. Վ.
3. ԱՐՄ. ԹՍՄԱԶՅԱՆ
4. Դ. ԳԻՄԻՐԶՅԱՆ
5. ԱՐԱՐԱՏՈՒՆԻ
6. ԱԳԱՎՆԻ
7. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԶՈՒՄԱՆԻ ԲՐԻԳԱԴԻ ԱՌԱՋԻՆ ԳՐՈՀԸ

Սանահինի աշխատավորների մաքից դեռ չի ջնջվել կնյազ Արդության Յերկայնաբազուկների նողկալի հիշատակը, այն կնյազների, վորոնք սարդի պես ծծում էին չարքաշ գյուղացիների արյունը, նրանց դառն քրտինքով դատած աշխատանքը:

Այնտեղ յերբեմն փայտյա չուխն եր քերում հողի կուրծքը և հողի շերտերը հյուսիսի ուսմալի տակից դուրս թափվող բարակ տաշիկների նման մի կողմ էին ընկնում:

Հիմա տրակտորը, պողպատյա գութանը խոր ակոսներ ե ձևում ու հողի հաստ շերտերն ալիքաձև կամարներ կապելով պառկում են գետնին, ուղիղ, միալար:

Ներսեսի ապին, Ներսեսի պապը կնյազ Արդությանների արտերը վարել են անսիրտ ու կիսատ-պլատ: Բայց հիմի Ներսեսն ու նրա ողակը խամ տեղ չեն թողնում:


— Նա ել հո Արդությանի հողը չի, ես իմ հողն ա, կոխողի հողն ա:

— Ա 2-րդ բրիգադը—Արդումանի բրիգադը ցանքը կատարեց,—ասավ կոտնտեսականներից մեկն ու պառավի բեռը դրեց Վաղոյի շալակին:

— Գովական ա, յես իմ հողին —ասավ մյուսը:

Արդումանի բրիգադում մըջունի պես ե աշխատանք կատարվում: Ամեն մեկն աշխատում ե մյուսից առաջ անցնել, մյուսին տղեր ազանցել:

— Ո՛ր, եդ քարերը, քարերը—ասում ե Ա 2-րդ բրիգադի բրիգադավար Արդումանը, —վարի ժամանակ տրակտորի ու գութանի հողին են հանում, իսկ հնձի ժամանակ հո, գերանդու բերանին սալամաթ տեղ չեն թողնում: Ամա մենք—այնպես ենք հավա-



Տրակտորների յով կալսիկների վերանորոգումը Վաղպատի ՄՏ կայանում

քում եղ քարերը, վոր նրանց հետքն ել
չերեա:

Գարեբն ել ունեն իրենց պատմությունը:
Են ժամանակ, յերբ գլուղը խեղդվում
էր թավաղի, կնյաղ Արդությանների լծի
տակ, սանահնեցին սիրտ չուներ քարերը
մաքրելու: Ո՞ւմ համար մաքրեր, ի՞նչ իմա-
նար, վոր վաղն այդ հողակտորն ել չեն
խլելու: Ու սերմը շաղ եր տալիս քարերի
մեջ:

Հիմա այդ հողերի համարյա կեսը մշա-
կում է Արդումանի բերդաղը: Գարնանային
ծիծղուն արևի տակ կոլտնտեսական դաշ-
տերում քրտինք են թափում Սոնան, Սի-
րանուշն ու նրանց նման շատ շատերը: Վաղ
առավոտից նրանք դուրս են թռչում տա-
նից ու գրոհում դաշտերի վրա, մաքրում
քարերից:

— Սիրանուշն ու Սոնան իմ հարվածային
աշխատողներն են,— ասում է Արդումանը,
— գործի համար գլուխ են տալիս ու իրենց

պլանները միշտ կատարում են լրիվ:

— Ցանք արե՞լ եք, հարցնում է ընկերս:

— Վոնց չէ: Ասեմ ինչքան:

Ու նա ծոցագրպանից հանում է փոքրիկ
մի բլուկնոտ, թերթում ու բաց անում մի յե-
րես:

Նա արագ հաշվում է իրենց կատարած
ցանքն ու հայտարարում:

— Ցանել ենք 12 հեկտար: Իմ դարնանա-
ցան ցորենի պլանն ել հենց 12 հեկտար էր:
Մարտի 9-ին սկսել ենք վարը, ես ա մար-
տի 30-ն ա, պլանս կատարեցի:

— Անլորակ վար ու ցանք չի՞ լեղել քո
հողում, — հարցնում է մեկը:

— Ի՞նչ ա, դուշմանի ապրանք ա, — դեմքը
խոթոռելով պատասխանում է Արդումանը,
ապա ավելացնում:

— 14 հեկտար ել գարի յենք ցանելու,
14 հեկտար հողից 10 հեկտարի ճրնդոցը
հանեցինք, արդեն վարված ա է հս ա շուտով
ցանքն սկսելու յեմ:

Ես ա շուտով ել կարտոֆիլի հողի ջանին
եմ ընկնելու:

Ցանքը գնում է թափով:

— Գլուխ պահողներ չկան բերդաղում, —
հարցնում եմ յես:

— Կան: Իմ թույլ կողմը հենց են ա յեղել,
վոր դրանց հախիցը դեռ չեմ յեկել:

— Որինակ մի է գլուխ պահողը:

— Ավագ Մոսինյանը, 2 որ դալիս ա աշ-
խատանքի, 2 որ չի դալիս: Յեղներն ել լավ
չեն, լղար են: Ախր եղ հայվանների պատաս-
խանատուն նա յա:

— Եղ չեղավ, դու թույլ ես, նրա հարցը
չես քննում ու վարչության նիստին չես
տեղափոխում, — նկատում է մեկ ուրիշը:

— Իսկ սոցմրցման պայմանագիրն ի՞նչ
վիճակումն է, — նորից հարցնում եմ յես:

— Ինչ դուղն ա, դուղը: Եղ գործի վրա
շատ քիչ եմ ուշադրություն դարձրել, հենց
վաղը կսկսեմ եղ գործը. դրա համար բջիջն
եկ ինձ ասեց:

ԵԼԵԿՏՐՈԳՈՒԹԱՆԸ ՓԱՐԱՔԱՐԻ ԴԱՇՏՈՒՄ

1.

Փարաքարից ցած այժմ կռիվ է անապատի դեմ, հզոր տեխնիկայի և մեր բանվորական ջոկատների կռիվը՝ դարավոր ավազի ու ամլության դեմ:

Այդ կռվում մենք սանձում ենք բնության տարերքը և առաջ ընթանում քայլ առ քայլ: Արագությամբ փոխվում է անապատի կերպարանքը: Մեզ հաջողվեց հսկա դրենաժների միջոցով լճացած ջուրը հողի ստորին շերտերից հանել և խառնել Սև ջրին: Հասնել ենք չորացած, չքացած մոծակի ամպերը և ստացվեց հումուսով հարուստ հողը: Նորահասուն ջրանցքն իր ճյուղերը փոխեց անապատում՝ արյունադար անոթների նման և Ձանգվից կյանք բերեց խոպան հողին: Հողը լվացվեց և ազատվեց իրեն կաշկանդող հազարամյա աղից: Առվույտի և այլ մշակույթների միջոցով բարելավվեց հողի կառուցվածքը: Յեվ ահա, պատրաստ է հողը՝ նոր, սոցիալիստական այգեգործության համար: 3-րդ սովխոզի դիրեկտորի տրամադրության տակ արդեն կա այդ պայքարի հանրագումարը:

Տասը տարի առաջ կալվածատեր Աթարբեկյաններից ժառանգություն կար 11 հեկտար այգի և 30 հեկտար չալթուկի ու հացի հողամաս:

Նույն տերիտորիայի վրա այժմ ունենք 11 հեկտար հին այգի, 190 հեկտար խաղողի նոր այգի, վորից 54 հեկտարն արդեն բերք

է տալիս, իսկ մնացածը բերք կտա հետզհետե՝ առաջիկա յերկու տարվա ընթացքում: Այս դարնանը տասն որում գցել ենք 89 հեկտար նոր այգի: Պողատու այգիներ գցված են 270 հեկտար տարածություն վրա: 180 հեկտար զրկած և յոնջայի տակ: Հացահատիկների և այլ կուլտուրաների համար յուրացված է 750 հեկտար հող: Հանրագումարը—մի քանի տարվա ընթացքում անապատից խլված է 1300 հեկտար ընտիր հող, վորն սքանչելի յե այգեգործության համար:

Բայց դեռ հազարավոր անմշակ տարածություններ կան, վոր մենք պետք է առաջիկա տարիներս պիտանի դարձնենք այգեգործության համար:

2.

Այդ տարածությունները մենք խլել ենք բնությունից ավելի շուտ բազկի ուժով, վորդորության ուժով: Այժմ մեզ սցնություն է յեկել ելեքտրոգութանը: Անցյալ աշնանից Վաղպատում հիմնվեց մեքենակեկտրոնայանը—առաջինը և առայժմ միակը Խորհրդային Միության մեջ: Առաջին ագրեգատը գործի անցավ և մեր ուժը տասնապատկվեց:

Մարդը խրամատներ է փորել այդ դաշտում և տնկել է խաղողի վոստը: Փորել է որեր, ամիսներ, տարիներ: Իսկ գործն առաջ է գնացել թիզով, արշինով, սաժնով: Այժմ

խրամատը փորվում է վարկյանում յերկու մետր և ըոպելում՝ 120 մետր արագությամբ, իսկ ելեկտրոգութանի խոփն իջնում է ցած 60 սանտիմետր՝ մինչև հողի ընդերքը: Ամենի այդ գութանը, վորը 400 փութ է կշռում, պատում է Ղոբրի կուրծքը, ծածում է խիճը հեքիաթային վիշապի նման ու առաջ է վաղում վայրենի մի հոնդյունով: Պողպատե լարն ուժ է ստանում Յերեանի հիդրոկայանից 14 կիլոմետր հեռավորության վրա և խրամատները շարվում են դարմանալի արագությամբ:

Մի փոքր հաշիվ, վորն առաջին հայացքից անհավատալի կթվա: Մայիսի կեսերին ելեկտրոգութանը մեկ որում (16 ժամում) չորս հեկտար պլանտած է արի:

Մեկ հեկտար ձեռքի պլանտածը պահանջում է 2000 մարդ-որից ավելի, յեթե պլանտածը կատարվում է ելեկտրոգութանի կատարած աշխատանքի վորակով: Ուրեմն, այդ որն ելեկտրոգութանը չորս բանվորով 8000 մարդու գործ էր կատարել: Յեվ այն այդ ժամանակ, յերբ մեքենան աշխատում է որական յերկու հերթի, աշխատում է առաջին արագությամբ, մինչդեռ նրա կարողությունը հասնում է 4-րդ արագության, այսինքն՝ նա կարող է վարկյանում 5 մետր առաջ վազել ներկա 1,22 մետրի փոխարեն: Մեքենան աշխատում է հիվանդագին ընդհատումներով. յեթե նա աշխատեցվի յերեք հերթի և լրիվ բեռնվածությամբ, ալդ դեպքում նա կտա որական

6—7 հեկտար պլանտած և կխնայի 12—14 հազար բանվորական ձեռք:

Իսկ յերբ յերկրորդ ագրեգատն ել ստացվի, վորն արդեն ճամբա յե ընկել Ռուսաստանից, այն ժամանակ կարող ենք համոզված լինել, վոր Փարաքարի տակ ձգվող ընդարձակ տափաստանը 1—2 տարում պլանտածի կենթարկվի:


Ընթերցողն արդեն սխալմամբ յենթա-

դրեց, վոր ամենի այդ մեքենան բերված և արտասահմանից: Մենք ել այդ մոլորության մեջ ընկանք, քանի դեռ չեյինք կարգացել ելեկտրական բեռնորդի ճակատին փայլող մակագրությունը:

Իսկ թե վոր աստիճան ամենի յե այդ գութանը, բավական և ասել, վոր նա ունի 120 ձիու ուժ և որական մի քանի անգամ կտրում և յերկաթալարից հյուսած հաստ

«պարանը»: Մարդը, վոր կանգնած և գութանի խոփի մոտ, թվում եր թի մի ահագին ու փայլուն պատի առաջ և կանգնած. այդ խոփը մոտ յերեք մետր լայնություն ունի, իսկ գութանի ձեւը (դանակը) մեկ մետրից ավելի յե: Վիթխարի այդ խոփը հողը շուռ և տալիս ու բարդում կողք կողքի, ովկիանոսից բարձրացած ալիքների նման:

Ա. Վ.



Գառու հողի վարը Սամաղարի կոլեկտիվի անուն

Թ Ո Ղ Ճ Ա Յ Թ Ե Ն Հ Ա Տ Ի Կ Ն Ե Ր Ը

(«ԱՐՁԱԿ ՅԵՐԳԵՐ» ՇԱՐՔԻՑ)

(ՀԱՏՎԱԾ)

Հողվորը շրջում է դաշտերում, կանգնում իր արտի ծայրին և կակծից վառվող աչքերով նայում հասկերին՝ արտում ու տամուկ, վորբի պես վտիտ, նայում և մրհնջում:

— Ուշ արի վարը, խարակներով արի, թշնամու սրտով: Դրանից է, վոր նվազ են աճում հասկերը: Յեվ Հողվորին թվում է, վոր յերբ դառնա տուն, յերկու մանուկներն իրենց փափուկ թեղերով փաթաթվելու յեն իր վզով և հեծկտալու:

— Հայրիկ, հայրիկ... ինչու լավ չեն ծլել, աճել մեր հասկերը... վոր բարձրանան, հաց տան մեզ, վոր սոված չմնանք մենք ..

Հողվորը ձեռքերով փակում և ականջները, վոր չլսի մանուկների հեծկտոցը, նրանց արդար բողբոջ: Յեվ արցունքներ են մղվում Հողվորի աչքերից: Ու նա, աչքերը լի դառնադի կաթիլներով՝ անցնում է առաջ: Յերազ և այս, ցնորք: Այստեղ արտերը մարդարոյ են, հասկերը ծանր, գլխիկոր, որորուն ցողունով: Թվում է, թե արեվը փովել է միայն այս դաշտերի վրա և շողշողում է արտերի վոսկեձույլ հայելու մեջ:

— Սրանք համայնական արտերն են, կուխողինը,—հիշում է Հողվորը: Դյուզի հարյուրավոր կոշտ բազուկները, իր յեղբայրներն են ցանել միասին, միատեղ: Նրանց ուժից է, վոր միլիոն հասկերն արեվի դեմ խողովողում են դրոշների պես:

Հողվորը նայում է հասկերին, նայում, ու չի կշտանում: Սիրտը խփում է տնայի

կարտից և բացվում են խավար աչքերը ինչպես արեվն արշալույսին:

Կրկին գարուն է, կրկին սեր ու յեռանդ: Արեվն իր վոսկեղեն մատներով պատում, հետ է յաշում սարերի ձյունեղեն սավանը, ջրերը քթիջով հոսում են ցած:

Քնել է Հողվորը հողի ոճորքի տակ, բայց նրա դեմքին մի ժպիտ է ծլում: Տեղի մեջ շուռ է գալիս Հողվորն ու ականջին են հանում ինչվոր ձայներ: Ծանոթ են այդ ձայները նրան: Այդ վոսկեղեններն են նորից վոտնում, կողկոնձում լուսնի դեմ: Նրանք մոտենում են գյուղին և ափելի ուժեղ են լսվում հուսակալուր վոտնոցները: Ահա, նրանցից մեկը մենակ մտավ գյուղ և դալիս է դեպի իրենց տուն: Նա մարդու պես բացում է դուռը և ներս մտնում մարդու հագուստով: Բայց... ներս մտնողը զազան չէ: Նա մարդ է, իսկական մարդ, միայն աչքերն են պապում գայլի աչքերի պես: Մարդն իր հարեվանն է, վոր նստում է աթոռին և մրմրում ինքն իրեն:

— Ասացի՛ր գամ հարցնեմ քեֆդ: Հետո ել, գիտես, բարեկամ, հատիկ չտանես դաշտ, անիծված է հողը.. ի դուր է: Նրանք այս տարի վերցնելու յեն բոլորը, հենց արտում, կապած խրձերը...

Տեղի մեջ շուռ է գալիս Հողվորը և նայում հարեվանի սառած հայացքին: Հրդեհ է ծագում Հողվորի աչքերում և ցատկով յեկնում է տեղից, բոռնցքը բարձրացնում

Վիսախալարում:

— Կորիւր...

Ոճորքը դողում է նրա ձայնից, բայց չկա հարեվանը—նա դուրս է սողացել: Դրսից ել ուժգին են լսվում վոտնոցները:

— Հենց վաղը, այո, հենց վաղը կերթամ նրանց մոտ և կասեմ,—հնչում է Հողվորի ձայնը և նրան թվում է, վոր իր բառերը հիմա ձեղքում, անցնում են արտերի ովկիանոսները,—կասեմ՝ յեղբայրներ, առե՛ք իմ կյանքը, իմ կյանքն ել միացրեք ձեր կյանքին: Իմ արեն ել խառնեցե՛ք ձեր արեկին: Յես նրանց կասեմ.—ահա իմ մի թիզ հողը, խառնեցե՛ք այն ձեր հողերին և նրանց վրա մեր բարձր սարերի թափով շաղ կտանք ցորենի, գարու, հաճարի հատիկները: Յես նրանց կասեմ.—քանդեցե՛ք սահմանները՝ սե կապանքները կույր, խեղդեցե՛ք բոլոր վոտնոցները չար: Յես նրանց կասեմ...

Հողը հեղում է, հողը շնչում: Պողպատ լեզուները թերթում, թերթում են հողի սև թերթերը: Յերկաթե սերմնացանները շաղ են տալիս վոսկե հատիկները և նրանք ծվալում են հողի փխրուն կրճքի տակ: Նրանք պիտի սնվեն, աճեն այնտեղ ու մի որ ել հողի տակից կարոտով ժպտան Հողվորին, արեվին, աշխարհին.. հետո, յերբ արեկի շողերից տաքանան, ցնծութունից ձայթեն պիտի — հատիկները կարմիր, հատիկները վաղվան հույս:

Թող ձայթեն հատիկները:

ԱՐՔ. ԹԱՄԱՋԱՆ

Հ Ս Կ Ա Ն Ե Ր Ի Թ Ռ Ի Զ Ք Ը

Դաշտերի կանաչ հատակություն և խաղաղություն: Առաջ ենք գնում: Մեզ համրա յեն տալիս խաղողի գանգրաժոր այգիները, բամբակի դեղևն լերկ արտերն ու մեջմեջ ցորենի, գարու ցանքները: Ամեն տեղ կանաչ, կանաչ, կանաչ: Բերքը գալիս և լիառատ, հեղեղի պես, տիրական թափով:

Արտաշարի կոլեկտիվի դաշտերն են սրանք: Այգիների, բամբակի դաշտեր, վոր անցանկապատ, համատարած, ինչպես կոլեկտիվ տնտեսությունը՝ գնում են կորչում հեռվում:

Ահա և կանանց բերդագները: Նրանք մեզ տեսնելիս ուրախ-ուրախ բարևում են — աշխատանքը վոգեվորել և՛ յերևում և՛:

Յերկ-յերկու, յերեք-յերեք կամ ավելի՝ հողիանոց շարքերով նրանք կոպցած առաջ են շարվում իրենց փոքրիկ «առաջադրանք-ներին»՝ գծով և ուրազներով քաղհան են անում:

Դրանցից և ընկ. Արուս Սափարյանը: Ահա գալիս և նա դեպի ծառի ստվերը: Կանանց բերդագը նրան և ուղարկում գրողի մոտ: Յերիտասարդ, առողջակաղմ նախկին բաղրակուհին մոտենում և ինձ հանգիստ ժրպտով:

Դաշտի, աշխատանքի, հույսի և ուրախության շունչ և փչում նրանից:

Նրա վերելքը մի հեքյաթական թռիչք և: Ամուսինը, նախկին հովիվ, խիստ մարդ, իսկի միտք չունենր կոլեկտիվ մտնելու: Մի «յորդան» ևլ չունենր—բայց դեմ եր:



ԳԵՐԵՆԻԿ ԳԵՄԻՐՃՅԱՆ

—Արի խեղ ինձ կոլխող, կոլխող թողած ուր ենք ընկնում սրա-նրա դուռը: Դեմ եր: Վոր եղպես և՛ վիզս ևլ կտրես՝ պիտի մտնեմ կոլխող: Կրածանվեմ: Յեկնվ... Առաջի տարին վատ եր... ըստ շնչի եր... «Աշխատողն եր տուժելի:

Հիմի: Հիմի քանակ ու վորակ կա, հիմի եով կաշխատի՝ նա կուտի: Աշխատողը չի տուժի:

—Հա՛, դժար եր առաջին տարին... Հիմի: Յերկու ձեռք յորդան-դոշակ, թախտեր, խալի, հացի սեղան, գրամաֆոն... Ծիծաղում ե:

—Ամեն բան ունենք, վոչ մի բանից պակասություն չենք քաշում: Զորս փութ հաց ստացա, մի փութը փոխ տվի հարևա-

նիս: Հացից բավարար ենք 100 տոկոս՝ մինչև հունձն ընկնի:

—Հիմի ամուսինդ գո՞հ և:

—Հարյո՞ւր տոկոս: Հարվածային և—ծիծաղում և:

—Կին բերդագի:

—Յես փոխ-բերդագի եմ—Դե ենքան կրթված չունենք, վոր աշխուր դուրս բերի: Բայց կազմակերպիչներ՝ ունենք:

—Կանայք ի՞նչպես աշխտվացան:

—Վո՞նց... լերկու տարի առաջ զոռով եյին դուրս գալիս դաշտ: Անպատիվ խոսքեր եյին ասում: Վերջն ինձ տեսան, ապրուստս, ճաշը, մսուրը՝ յեկան: Հիմի գիտակից են, հիմի մսուրն իրենց սեփական տունն են հաշվում: Ասում են՝ քոռանամ, հնչի՞ լսեցինք կուլակներին՝ հետ մնացինք կոլխողիցն ու աշխատանքից:

—Կուլակներ կան:

—Քի՛ն ևնք, 28 թվից աչքները հանել: Բայց ելի կան... մենակ չենք թողնում, վոր դորանան:

—Ընկեր Արուս, կուսակցական եր:

—Վոչ:

—Ամուսինդ ել՝

—Նա ևլ՝ վոչ

—...

—Լիկկայան գնացել եր:

—Ամեն որ գնում եմ (չեղում և «ամեն» բառը): Մարդս անգրագետ և... (Ծիծաղում ե): Այդ ծիծաղը նրա հաղթանակի ծիծաղն և:

* *

Ահա և Յեղիաթեբ Շահոյանը: Ամուսինը
զրազեա, ինքն անզրազեա: Ամուսինը կու-
սակցական՝ ինքը վուշ: Ամուսինը պնդել էր
մտնել կոլեկտիվ, ինքը հակառակ է յեղել:
Հիմի հարվածայիններ են—ամուսինն էլ,
ինքն էլ:

— «Մարգա կասեր՝ կոլխոզ լավ է, ուրիշին
սկանջ մի դիր: Յես էլ վերջն ասի՝ դու
վոր մտնես՝ յես էլ խեղ քե»:

Առաջին տարին վատ եր: Կոլխոզ շատ եր,
յեկամուտը քիչ, ըստ շնչիյեր: Կոլխոզ փող-
նվաճ: Մկա կոլխոզ լավ է՝ թե աշխատես:
Ու մկա լյավ է, քանս են անհատ ժամանակ:

— Հարվածային ես, ընկեր Շահոյան, բայց
թնչ բան է հարվածայնությունը:

— Հարվածայնությունն ուրիշին սովորեց-
նելու մեջ է: Մենակ իմ աշխատելը չի բանը:
Յես կասեմ՝ խարեանս էլ դա ինձի խաանի
Բոլորս պիտի դառնանք հարվածային—եդ
է հարվածայնությունը:

— Ամուսինդ թնչպես է, իբրե հարվա-
ծային:

— Նիկոն կիմանա (նախագահը), մեկ գան-
գատավոր չկա, 4 տարի յե բրիգադիր է:
Վատ վոր ըլեր՝ կփոխեյին:

— Ապրուստներդ:

— Անցյալ տարի 325 աշխուր ստացանք
յես ու մարդս: Յես 80 աշխուր: Հեչ պակա-
սություն չունենք: Տան մեջ, շոր, փալաս,
յորդան-դոշակ, ամեն բան ինչքու իրացերը
հասնի՝ շատ լավ կլի:

— Բա եսպես գնալով ուր ենք հասնելու,
ընկ. Շահոյան:



Նոր ստացված քրակտի մասերի հավաքումը
Ախսայի ՄՏ կայանում

— Շատ լավ տեղ կխաանի, փիս տեղ չի
խաանի: Լյավ տեղ ենք երթալի—սոցիալիզմ:

* *

Արդյոք յերազ չե և կամ հեքիաթ: Սա
իմ կողքին նստած հայ գեղջկուհին, վոր
առաջ տղամարդ տեսնելիս քիթ ու բերանը
ծածկում էր կեղտոտ փալասով ու փախչում:
Ուր է թոնի սա, և ով է թոցրել սրան
մինչև այս բարձունքները:

Ահա այստեղ, կոլեկտիվի դաշտերում աշ-
խատանքի, սոցիալիստական շինարարու-
թյան դրոհի մեջ ծնվում են ու աճում հերո-
սուհիները: Նրանցից ամեն մեկն իրակա-
նացնում է իր առաջադրանքի մասը, ապա ո-
ղակողակ, բրիգադ-բրիգադ, կոլեկտիվ, ջրը-
ջան, յերկիր—լցվում, տիրականորեն գնում
է դեպի մի մեծ, ընդհանուր առաջադրանքը
—սոցիալիզմ:

Չե. հին գյուղը չկա, նա փոխվել է հիմ-
նովին: Հին գյուղը թոխք է կատարել:
Հսկաների թոխք:

Դ. ԴԵՄԻՐՉՅԱՆ



ԻԶՈՏՈՎՅԱՆ ՄԱՄԻԿՈՆԻ ԲՐԻԳԱԴԸ

Մամիկոն Բայրամյանի բրիգադը Վաղարշապատի շրջանի Վերին Գյուլանլվի կոլտնտեսության բամբակագործական № 2 բրիգադն է։ Այս բրիգադն իսկական իդրոտվյան բրիգադ է։ Բրիգադի բամբակի մշակման բնագավառում տվել է աշխատանքի սոցիալիստական հիանալի փորձ, վորից պետք է ոգտվեն մյուս կոլտնտեսությունները։

Նախ պետք է ասել, վոր Մամիկոնի բրիգադը 34 $\frac{1}{2}$ հեկտար բամբակի վարն ու ցանքն ավարտել է ժամկետից շուտ՝ մայիսի 6-ին, առաջին քաղհանն սկսել է մայիսի 20-ից և ավարտել է նույն ամսի 30-ին, որական 2 $\frac{1}{2}$ հեկտար քաղհան

նեղու փոխարեն, քաղհանել է 3 $\frac{1}{2}$ - 4 հեկտար։

Վորն է Մամիկոն Բայրամյանի աշխատանքի նոր փորձը և վորն է նրա հաջողության «գաղտնիքը»։

ՄԱՐԴԵՐԸ ՀԱՄԱՐԱԿԱԼՆԷ ՆՆ ՅԵՎ ԿՑԵԼ ՈՂԱԿՆԵՐԻՆ

Բամբակի բոլոր մարգերի գլխներին հաստ ձողերի վրա մեխված են տախտակի կտորներ, վորոնց վրա գրված են հերթական համարներ։ Այդ մարգերը բաժանված են ողակների միջև։

Ամեն մի ողակ բրիգադի բոլոր դաշտամասերում ունի քաղհանի ժամանակամիջոցում իրեն ամրացված մարգեր, վորոնց ամեն մեկի տարածությունը 26—30 լիտրի յե հասնում։ Բրիգադի կազմել է ցուցակ, վորտեղ նշվել է, թե վոր ողակը, վոր դաշտամասում, վոր համարի մարգին և պատասխանատու։ Ողակները վորջ բրիգադի հետ միասին ընդունում են իրենց մարգերն ու բրիգադի տված կոնկրետ առաջադրանքները։ Ահա մի որինակ։

Մի-Մանադի ողակը բաղկացած է 3 հոգուց։ Նա «Շորարխում» ունի 24 լիտր հողամաս, «Ուզուն» հանդում՝ 36 լիտր, «Սամերի» կտորում՝ 23 լիտր։ Այդ հանդերի № 1, № 2 և № 32 մարգերը պատկանում են այդ ողակին։ Յեթե մի վորեն ողակ կամ



Մեքենաների վերանորոգումը Ղուրդու գուլիում

անհատական գործավարձով աշխատող քաղհանաժնոր վատորակ աշխատանք ե կատարում, այլևս կարիք չկա վորոնելու, թե ով ե մեղավորը, ով ե անփութը: Դուք այդ համարներով արդեն կարող եք ճանաչել հանցավորին, այնպես վոր, անորակ աշխատողն այլևս հնարավորութուն չունի ծածկվելու: Յեթե մի վորեւ ողակ վերջացնում ե իր քաղհանի ամբողջ աշխատանքը, վորակն ստուգող հանձնաժողովն ընդունում ե, ապա բրիգադիւրը յերբեմն նրան ուղարկում ե բուքսիւրի այն ողակին, վորը քաղհանի ճակատում դանդաղում ե: Յեթե բուքսիւրայինները վատորակ աշխատանք են կատարում, ողակավարն իրավունք ունի նրանց ազատելու «իր» հողամասից, և այդպիսիք անսպասան տուգանվում են համապատասխան աշխորի չափով: Որինակ՝ Մեխակ Աղաջանյանը № 26 մարզում անորակ քաղհան եր կատարել. կոլտնտեսութեան նախագահը դաշտին ստուգելու ժամանակ տեսնում ե այդ և հայտնում բրիգադիրներին. բրիգադիրը բրիգադի վորոշման հիման վրա նրան տուգանել ե, զրանից հետո Աղաջանյանն այնքան մաքուր գործ ե կատարում, վոր բրիգադրում աչքի ընկնող հարվածայիններից մեկն ե դառնում և այժմ վորխանակ որական 625 մետր քաղհանելու, քաղհանում են հազար հարյուր մետր տարածութուն, լավ վորակով:

ՓՈԽԱՆԱԲԱՐՁ ՍՏՈՒԴՈՒՄԸ ՅԵՎ ՓՈԽԱՆԱԲԱՐՁ ԱԶԻՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Բրիգադի ողակները շատ հաճախ ստուգման են գնում բրիգադի մյուս ողակներին: Յեթե նրանք հայտնաբերում են վատորակ աշխատանք, մի քանի բուքսի ընդհատում են հարեման ողակի աշխատանքներն ու ամո-

թանք են տալիս, նախատում նրանց: Այսպես՝ Մեխի Ջամալյանի ողակը քաղհանը վերջացնելու ժամանակ, իր ողակով «արեալ» ե կազմակերպում բրիգադի մյուս ողակների վրա: Իր արեալի բերացում ևս հայտնաբերում ե, վոր Շուշան Բալայանի ողակը (№ 9) քաղհանը կատարել ե վատորակ: Մեխիքը դաշտի միջին բուքսի առաջ նախատում ե՝

—Տո, դու չես իմանում, վոր վատ քաղհանի պատճառով համ իմ տունն ես քանդում, համ քոնը: Դու լավ իմացիր, վոր այս դաշտից համ յես յեկամուտ ունեմ, համ դու, ախր դու չես հասկանում, վոր քո եղբայրդ թե պետութեան առաջ, թե կոլտնտեսութեան առաջ սեղանին եմք դուրս դալիս: Դե թաքուցաք ձեռք առնակսի նորից քաղհանել: Բրիգադիր ազդրովաք ե ընտրված Դանել բիճան, վորը ե՝ աշխատում ե ե՝ հսկում ե բրիգադի ողակների աշխատանքների վրա: Կոլտնտեսութեան նախագահ Սաչիկը և Դանել բիճան շրջելով բրիգադի բամբակի դաշտերը, նկատում են, վոր Լեվոն Գրիգորյանի ողակը վատ ե քաղհանել. նախագահն սկսում ե քաղհան կատարել. Դանել բիճան Լեվոնին կանչում ե կոլտնտեսիկների առաջ ամոթանք տալիս.

—Այ տղա, բոլիցդ չես ամաչում, վոր նախագահը քո մարդում քաղհան ե կատարում: Բա մի հազար անգամ չեսք ասել, վոր ես վոսկի քոյի կողքից թաքուցակը պիտի պահաս չանես:

Լեվոնը կարմրում ե, նա այդ բուքսին կուգեր գետինը ճեղքվել և ինքը մեջը մտնել: Աշխատանքի նման ձեզի կազմակերպումը ե ընկերական ազդեցութունն այնքան ուժեղ կարգապահութուն երևադեմ բրիգադիների և ողակների մեջ, վոր բուքսի կոլտնտեսականները՝ թե տղամարդիկ և թե՝

կանայք առավոտյան ժամը 4-ին դուրս են գալիս, հավաքվում ողակներով և գնում «երենց» մարդերը մշակելու Իսկ յերը նրանք վերջացնում են իրենց մարդի քաղհանը, յերկոյան, նույնիսկ կես գիշերին բրիգադիրի մոտ են գնում և պահանջում, վոր իրենց նշանակի բուքսիւր: Ապա, նրանք անմիջապես հասնում են բուքսիւրի կարիք գրացող ողակին և նրանց հետ լուսադեմին դաշտ են գնում:

ԱՄՈՒՐ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԲԱՐՁՐԱՐՏԱՆԻՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գարնանացանի աշխատանքների ընթացքում Մամիկոնի բրիգադի 37 անդամից հարգելի պատճառով ուշացել ե միայն մեկ կին: Բրիգադեն ունի վորոշում, վոր բրիգադի աշխատանքներից անհարգելի պատճառով ուշացողը տուգանվելու յե կես աշխորով: Որինակ՝ բրիգադի անդամ Սերգեյ Մուսայելյանն աշխատանքից անհարգելի բացակայութեան պատճառով տուգանված ե կես աշխորով, և վարչութունը հաստատել ե այդ վորոշումը:

Բրիգադում լողրի անունն ոտար ե. Թող մեկը դաշտում փորձի մի փոքր լողրութեան նշաններ ցուց տալ,—արդեն նրա վիճակը պարզ ե: Շնորհիվ այդ յերկաթյա կարգապահութեան, դեպի այդ թանկարժեք կուլտուրան ունեցած նրանց սոցիալիստական վերաբերմունքի, պլանները գերակատարում են:

ՁՈՒՐԸ ԲԱՇԵՆՈՒ ՀՆԱՐԸ ԳՏԵՎԵՑ

Գյուլանովի կոլտնտեսութեան բամբակի հոգերը նախկին ճահճոտ տարածութուններն են, վորոնք մշակված և պիտանի յեն դարձված բամբակի համար: Հենց այդ բամբակի յերկու հսկայական արտերի միջից հոսում ե

անհատական դործավարձով աշխատող քաղհանապար Վրաստանի աշխատանք և կատարում, այլևս կարիք չկա վերոնկար, թե ով և մեղավորը, ով և անվույթը: Դուք այդ համարներով արդեն կարող եք ճանաչել հանցավորին, այնպես վոր, անորակ աշխատողն այլևս հնարավորություն չունի ծածկվելու: Յեթե մի վորեն ողակ վերջացնում ե իր քաղհանի ամբողջ աշխատանքը, վորակն ստուգող հանձնաժողովն ընդունում և, ապա բրիգադիբը յերբեմն նրան ուղարկում և բուքսիբի այն ողակին, վորը քաղհանի ճակատում դանդաղում և: Յեթե բուքսիբայինները վատորակ աշխատանք են կատարում, ողակավարն իրավունք ունի նրանց ադատելու «իր» հողամասից, և այդպիսիք անալայիսն տուգանվում են համապատասխան աշխորի չափով: Որինակ՝ Մեխակ Աղաջանյանը № 26 մարդում անորակ քաղհան եր կատարել. կոտնտեսության նախագահը դաշտերն ստուգելու ժամանակ տեսնում և այդ և հայտնում բրիգադիբին: Բրիգադիբը բրիգադի վորոշման հիման վրա նրան տուգանել և, դրանից հետո Աղաջանյանն այնքան մաքուր գործ և կատարում, վոր բրիգադում աչքի ընկնող հարվածայիններից մեկն և դառնում և այժմ վոխանակ որական 625 մետր քաղհանելու, քաղհանում են հազար հարյուր մետր տարածություն, լավ վորակով:

ՓՈԽԱՂԱՐՁ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՅԵՎ ՓՈԽԱՂԱՐՁ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Բրիգադի ողակները շատ հաճախ ստուգման են գնում բրիգադի մյուս ողակներին: Յեթե նրանք հայտնաբերում են վատորակ աշխատանք, մի քանի բուքս ընդհատում են հարեման ողակի աշխատանքներն ու ամո-

թանք ևն տալիս, նախատում նրանց: Այսպես՝ Մեխի Ջամալյանի ողակը քաղհանը վերջացնելու ժամանակ, իր ողակով «արտա» և կազմակերպում բրիգադի մյուս ողակներին վրա: Իր արտալի բերացում նա հայտնաբերում և, վար Շուռան Բալայանի ողակը (№ 9) քաղհանը կատարել և վատորակ: Մեխիբը դաշտի միջին բուքսի առաջ նախատում և՝

—Տո, դու չես իմանում, վոր վատ քաղհանի պատճառով համ իմ տունն ես քանդում, համ քոնը: Դու լավ իմացիբ, վոր այս դաշտից համ յես յեկամուտ ունեմ, համ դու, ախր դու չես հասկանում, վոր քո եդ արածով թե պետություն առաջ, թե կոխողի առաջ սեվերես ենք դուրս դալիս: Դե թաքուջադ ձեռք առու սկսի նորից քաղհանել: Բրիգադիբ ադրոավագ և ընտրված Դանել Բիճան, վորը և՝ աշխատում և և՝ հսկում և բրիգադի ողակների աշխատանքների վրա: Կոտնտեսության նախագահ Մահիկը և Դանել Բիճան շրջելով բրիգադի բամբակի դաշտերը, նկատում են, վոր Լեվոն Գրիգորյանի ողակը վատ և քաղհանել. նախագահն սկսում և քաղհան կատարել. Դանել Բիճան Լեվոնին կանչում և կոխողներինների առաջ ամոթանք տալիս:

—Այ տղա, բոյիցդ չես ամաչում, վոր նախագահը քո մարդում քաղհան և կատարում: Բա մի հազար անգամ չեսք ասել, վոր ես վոսկի քոյի կողքից թաքուջակը պիտի պակաս չանես:

Լեվոնը կարմրում և, նա այդ բուքսին կուգեր դետինը ձեռքով և ինքը մեջը մտնել:

Աշխատանքի նման ձեվի կազմակերպումը և՝ ընկերական ազդեցությունն այնքան ուժեղ կարգապահություն երևադեմ բրիգադներին և ողակներին մեջ, վոր բուքս կոտնտեսականները՝ թե սղամարդիկ և թե՝

կանայք առավոտյան ժամը 4-ին դուրս են գալիս, հավաքվում ողակներով և գնում «երենց» մարդերը մշակելու Իսկ յերբ նրանք վերջացնում են իրենց մարդի քաղհանը, յերեկոյան, նույնիսկ կես գիշերին բրիգադիբի մոտ են գնում և պահանջում, վոր իրենց նշանակի բուքսիբ: Ապա, նրանք անմիջապես հասնում են բուքսիբի կարիք գագացող ողակին և նրանց հետ լուսադեմին դաշտ են գնում:

ԱՄՈՒԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԲԱՐՁՐ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գարնանացանի աշխատանքների ընթացքում Մամիկոնի բրիգադի 37 անդամից հարգելի պատճառով ուշացել և միայն մեկ կին: Բրիգադն ունի վորոշում, վոր բրիգադի աշխատանքներից անհարգելի պատճառով ուշացողը տուգանվելու յես կես աշխորով: Որինակ՝ բրիգադի անգամ Մբուհի Մուսայանյանն աշխատանքից անհարգելի բացակայություն պատճառով տուգանված և կես աշխորով, և վարչությունը հաստատել և այդ վորոշումը:

Բրիգադում լողրի անունն ոտար և. թող մեկը դաշտում փորձի մի փոքր լողրություն նշաններ ցույց տալ,—արդեն նրա վիճակը պարզ և: Շնորհիվ այդ յերկաթյա կարգապահության, դեպի այդ թանկարժեք կուլտուրան ունեցած նրանց սոցիալիստական վերաբերմունքի, պլանները գերակատարում են:

ՁՈՒՐԸ ՔԱՇԵԼՈՒ ՀՆԱՐԸ ԳՏԵՎԵՑ

Քյայանլի կոտնտեսության բամբակի հոգեբը նախկին ճանճոտ տարածություններն են, վորոնք մշակված և պիտանի յես դարձված բամբակի համար: Հենց այդ բամբակի յերկու հսկայական արտերի միջից հոսում և

դեպի Հալթուկի հողերը տանող առու: Զուրը հողի տակից ծծվում է առվի կողքին ընկնող բամբակի դաշտերի մեջ: Բրիգադիերը տեսնում է այդ, մտածում, վոր յեթե միջոցներ ձեռք չառնվեն, մի քանի հեկ. բամբակ պիտի փչանա այդ ջրից: Նա խորհրդակցում է բրիգադի ադրո-ավագ Դանել Բիձի, կուսակազմակերպչի և կովարչության նախագահի, ապա բրիգադի անգամների հետ: Հնարը գտնում են—պետք է արտերի կողքին առուներ հանել, վորպեսզի ջուրը նրա միջով դնա և թափվի արտերից հեռու: Հանում են առուն և այդպիսով բամբակը փրկվում է:

ՆՈՍՐԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Ե ՎԱՐՊԵՏՈՐՆ

Մամիկոնի բրիգադի բոլոր անդամները դիտեն, վոր առաջին քաղհանի ժամանակ նոսրացումը պետք է կատարվի 12 սանտիմետր տարածությամբ՝ ամեն մի բնում թողնելով 2—3 հատ բամբակի թուփ: Բրիգադիերը 12 սանտիմետրից փայտի մի չափ ձեռքին, բոլորի առաջ սկսում է նոսրացում կատարել, ապա չափը հանձնում է մեկ ուրիշին, դիտում է նրա կատարածը և այդպիսով գործը շարունակում են: Այսպիսով նոսրացումը կատարվում է համաչափ ու

վարպետորեն: Ըստ արտադրական պլանի, յուրաքանչյուր ողակ պետք է որական նոսրացնի $\frac{1}{4}$ հեկտար, իսկ ԻՆՔԸ ԲՐԻԳԱԴԻՐԸ ԿԱՏԱՐՈՒՄ Ե ԿԵՍ ՀԵԿՏԱՐ: Կուտնտեսական Մեյիֆ Զամալյանն որական նոսրացնում է 21 լիտր և այլն:

յ Մամիկոնի բրիգադի աշխատանքի վերահիշմալ գրական կողմերին պետք է ծանոթ լինեն ներ բամբակագործական կուտնտեսությունների բոլոր բրիգադները և Մամիկոնի նրան կազմակերպեն բամբակի մշակության գործը:

Գ. ՀԱԿՈՐՅԱՆ



Բամբակի քաղհանը Նեջրվի կոլսնեսուբյունում

Ա Ղ Հ Ա Մ Զ Ա Լ Ո Ի

1. ԳՅՈՒՂԸ

Թվում է, թե վաղո՛ւց, շատ վաղուց նրանց մեջ ինչ վոր վեճ է ծագել, իբար ծանր խոսք են տակ, հետո զգացել են ու ամոթի գիտակցությամբ չեն վստահում իբար յերեսի նայել և մեկ-մեկու յետև արած՝ չոքել են նրանք լայն փողոցի յերկու կողմում: Տնե՛րը, հողաշեն, գորշ ու բարձրապարիսպ տները, վորոնց գորշությունը կանաչով է դունապեղում թթենին—Արարատյան դաշտի այդ դարավոր ծառը: Տների խռովկան պանորաման կլանելով անցնում է... Յերևանի Արավյան փողոցը: Աղմկում են ավտոները և սայլերը դանդաղաշարժ: Յեվ ձգվում է «Արավյանը» մինչև սիրտն Արարատյան դաշտի—մինչև Ղամարու: Արավյանը... այդ միայն անձանոթ այցելուն այդպես կասեր, իսկ Աղհամալույի բնիկը նրան կոչում է իր գյուղի դիտավոր փողոցը—Ղամարուի խճուղին:

2. ՓՈՂՈՅԸ

Մովսեսը տեսավ, թե ինչպես ավակի ափին խրած իր ձեռի դալար ճիպտան արմատներ արձակեց: Կառվիկները մազլցեցին ճիպտանի վեր, և բողբոջեց նա...

Ճիպտաք դարձավ նախրուհու պես ճկուն մի ուռենի:

Հետո ուրիշները—նախրուհիների մի ամբողջ շարք:

— Այստեղ յես կշինեմ իմ տունը:

Յեվ Մովսեսը փորեց:

Դու այդ թնչ ես անում...

— Տու՛ն եմ շինում:

Յերբ պատերը բարձրացան ու տախտակը պառկեց կառուին, ուռենիներն արդեն մեծ, շատ մեծ էյին: Նրանք պառկել էյին Մովսեսի տունը:

— Վերցրու քլունգը,—ասաց Պետրոսը, և հարևանի հետ նրանք փորեցին Մովսեսի տան կողքի ազատ տարածությունը:

— Յես ել եմ դալիս...

— Յես ել...

— Յես...

Յեվ Աղհամալուն քլունգ վերցրեց:

Յերբ կանգնեցին սպիտակ տները և ուռենիները դալարեցին,

Մովսեսը կանգնեց նրանց զորաշարքի ծայրին և նայեց զեպի արևմուտք...

— Պահ, ինչքա՛ն վատն է յեղել մեր հին թաղամասը:

— Այո, մենք քանդեցինք այն.—ասացին հարևանները:

Այդ ժամանակ յեկեղեցին շրջապատող ծառերն որոզվեցին, յետ դնացին ճեղքված պատերը, իսկ ողում ծիրում էյին աղավախները:

— Մի բան, վոր յես այնտեղ տուն չեմ ունեցել, յես յերեք տուն չեմ ունեցել, մտածեց Մովսեսը:

Ինչպիսի արեւիք՝ կանաչ ժապավենի պես ձգվում է նոր փողոցը, արևում եր նոր փողոցը և ճառում էյին նոր տների նոր դռները: Մի ծիծեռնակ եր թռտել Մովսեսի տնից ուռենու վրա և ճովողում եր:

— Ծիծեռնակ Մովսես,—կատակեց հարևանը:

— Այո, մի կատակիր, նոր փողոցի առաջին ծիծեռնակը նա յես:

3. ԱՐԱԳԻԸ

Ուշ, շատ ուշ յեկավ նա: Կառեցին չունեք կանաչ խոտ—բերքի այդ դարավոր խորհրդանիշը: Կասկածն անեց արտերում: Դրոսում է՛ մայիս եր, է՛ ձյունահալ:

Գյուղում նստած եր սարդը և յերեք տարեկան այն մանուկը, վորին ծնված որից «Փարոս» կոլտնտեսություն էյին ասում, կերկրի պես յետ եր գնում, դեղնում ու գորշանում եր՝ խնամքը հանձնված եր խորթ մորը:

Ու սարդը հյուսում եր իր վոստայնը:

Այդ մասին լսեց նա՝ Ղամարուի քառասունամյա բոլշևիկը—նորածին Գաղաթինը:

— Փոխել զեկավարությունը, ազատվել խորթ մորից.

— Փոխել...

Իսկ դրսում՝ մայիսյան ձյունահալ, ուշացած դարուն:

Մովսեսը ներս մտավ իր նորաշեն շեմքից և մտածեց.

«Ա՛յ թե ու՛մ ենք հանձնել «Փարոսի» խնամքը...»:

Հետո դուրս յեկավ տնից ու մտածեց.

«Բայց մենք կցաննե՞ք...»:

Սե՛, սուրճի հատիկի պես սև սերմը, վոր բնկավ խոնավ հողի մեջ, ծանր եր նա իր հետ տանում եր ուշացած ցանքը կատարողների կտակածը..., իսկ պատերի տակ նստած ՎՊԶ ՎԱՂՎԱ «կոլտնտեսականները» փափրսում էյին՝ հաղար ճեղք ունեք... ցանեցե՞ք... ցանեցե՞ք, տեսնե՞ք ո՞վ—ու՛մ... մինչև հիմա մերը ձերից լավ է յեղել...»:

Մովսեսները շրջում էին բամբակի ծլող արտերում:

Մարգեր, մարգեր, մարգեր...

Բրիգադ № 0.

Ողակ № 0:

Մարգ՝ այսինչի—աշխատիր այս մարդի վրա, մինչև դաշտից խլիս բամբակի վերջին փաթիլը:

—Մովսեսներն աշխատում էին: «Հեկտարին 6 ցենտներ...»:

Գաճաճ յերեխաների կտրված ժպիտով նայող արտերն այդ էին խոստանում:

Արյունը յուսաց բազմաթիվ յերակներում: Աշխատանքից տուն դարձող վաշտերն անցնում էին բամբակի դաշտերով: Իրիկնային կապույտ մշուշի վրա արևը, վորպես կինո-ապարատ իր նիղակներն էր ճոճում և լույսի նիղակների մեջ վառվառում էին թեվերը՝ $6+1...6+1+2...6+3...$ հեկտարին 9 ցենտներ:

— Իհարկե, կանաչ:

Այդ այն ժամանակ ասացին, յերբ բամբակն արդեն պիտներ էր դարձել:

4. ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉ ՏԵՍԱՆՔ ՄԵՆՔ

— Զի՛ կարող պատահել...

— Ինքը՝ Վարդապետյանը հաշվեց, ամեն թփին 70 կոկոն...

— Յեկեք ստուգենք Վարդապետյանին:

— Ստուգենք...

Հաշվեց Սողոմոնը, Հարյոսը:

Այդ այն ժամանակ էր, յերբ մեծ դժվարությամբ քայլում էին բամբակենու անտառներով, վորոնք այնքան նման էին կաղնի ծառերի մակետներին:

— Տեսնում եք՝ ո՞վ—ում, — ժպտաց Պողոսը՝ ցույց տալով մեր կողքին ձգված փոքրիկ մի տարածություն, վորի թմբերին որորվում էին չերքեղուհու պես ճկուն յեղեղվերը:

— Այդ ի՞նչ բան է:

— Բամբակենին մենատնտեսի:

Դե, իհարկե է, դու՛ք—նրանց...

— Այո, մենք նրանց...

Յեվ ամեն տեղ դուրս յեկավ «մենք նրանց...»:


Միքայելն այնքան առաջ գնաց այդ «մենք նրանց» տեսության մեջ, վոր փարթամորեն փոված կոտնտեսական բամբակենուց յերբ անցանք փարթամագույն այգիները, նա ձեռքը մեկնեց դեպի արևմուտք, և ասաց՝ «Մա յե այգին մենատնտեսի»: Նա չեր սխալվում: «Մա յե այգին մենատնտեսի», այսինքն՝ այնտեղ կային միայն խաղողահերպ ինչ վոր ճթեր և տերևներ դեղնահասնաչ:

Իսկ այգիներում կոտնտեսային խաղողի վողկույղների մեջ նստած՝ ժպտում էին հարյուրավոր «ծիծեռնակ» Մովսեսներ, վորոնք արեն էին ամբարել այդ վողկույղներում:

Այգիները նիրհում էին, հարբած իրենց վաղվա գինիով:

— Հասան, հասան, հասվե-հաս են ե՛...:

Ու լցվում էր կոտնտեսական բերքի թասը: Յեվ յեղավ այն, ինչ պիտի լիներ— բերքից՝ տնքացին կոտնտեսական ամբարները:



5. ՄԻ ԱՂԱՎՆԻ, ՎՈՐ ՄԿՐՏՉՅԱՆՆ Ե

— Չգրվենք...

— Գրվենք...

— Չգր...

— Հո՛... հո՛... ճամբան, ճամբան, դենը քաշի՛ր... քշի՛ր, հո՛...

Փողոցի աղմուկի մեջ խլացավ նրա բառի կեսը՝ «...վենք...» Յեվ յերկուսն էլ գլուխները դուրս հանեցին լուսամուտից։ Գոմեշները ծանր բեռան տակ կքած՝ քայլում էին։ Յեղները, սայլերը, ֆուրգոններ...

Սեխերի մի ելբրուս նստել էր սայլին։ Բամբակի ճերմակ Մասիսը բռնում էր— «ճամբան, տուր, առաջ յես»։

«Յես... Յես»,— ճչում էին արևային վողկուղիները և դալիս էր բերքը կոլտնտեսային ու Աղավնին գլուխը ներս տարավ լուսամուտից՝ նայեց ամուսնուն։ Վերջինիս շուր-

թերին ստուկ էր «գր...»։ Աղավնին լրացրեց «վենք...»

— Գրվենք...

Աղավնի Մկրտչյանը հիմա կոլտնտեսուհի յե. նրանից հետո, անեյացող թաղամասից տասնութը աղավնիներ թնան և առանց ողում ճախրելու նրանք իջան «Փարոսի» շեմքին։ Յեվ արևմուտքում անեյացան 19 տուն և արևելքում— նոր փողոցի վրա կանգնեց դարձյալ մի տուն՝ 19 դռնանի։ Կոլտնտեսությունն աճեց 19 տնտեսությամբ, իսկ բերքը դեռ դալիս էր։

6. ԶՐՈՒՅՑ ՈՒՆԵՎՈՐԻ ՀԵՏ

— Ծիծեռնակ Մովսես, վճնց են դործերդ...

Այդ ժամանակ Մովսեսի Յ-ամյա աղջիկը յերգում էր «Մեր կոլխոզի արտերը...»։

— Լավ են,—ասաց կարի մեքենան.

— Լավ, են,—ճչաց պրիմուսը։

— Լավ, լավ,—ճոճվեցին մահճակալների զսպոնակները։

— Լավ, ալվան լավ,—թավշեց խալին

— Կաթի պես անուշ,—ասացին կովը և մատակը։

— Ունեվոր Մովսես,—ասացինք մենք։

— Բոլշեիկ կոլտնտեսություն,—լրացրեց Մովսեսը։

Յեվ այնուհետև Միքայելի և Սողոմոնի հետ ինչքան Մովսեսների տներ մտանք, սեղանի մոտ նստած էր ունեվորությունը, յերգում էր պատեֆոնը, կաթը յեռում էր՝ սերի սավանը յերեսին, ու կարագն էր ժըպտում ճերմակ լանջը բացած։

Աղհամդալույից դուրս դալիս, նրա նորաշեն լայն փողոցի վրա կանգնած, ժպտում էր ունեվոր դարձած Մովսեսների մի ամբողջ բանակ։

ԱՂԱՎՆԻ



Գարնանացանի համար պահված խնամած լավ յեզր

Ճ Ե Ր Մ Ա Կ Ա Ր Տ Ե Ր Ո Ւ Մ

Այն արտերի անձիւր զեփոտութիւն հեռւում
Որորովում են ինչքան բացփող ճերմակ վարդեր,
Արտի յեզրին ուրախ կարկաչում եւ առուն
Ու լսում եւ նրան վշտաննի մի ձեր:

Կնգուղները զվարթ բարձրանում են վերեւ
Թալ վարսերով գանգուր, նման լուսնի լույսին,
Իսկ վերնում պայծառ մի վիթխարի արեւ,
Բարձրացել եւ դեմի անամպ սարի ուսին:

Յեւ այդ կարմիր, կարմիր մեծ վահանի ներքո,
Արշավում են ահա գեղջկուհիներ խնդուն.
Ու նրանց հետ ուրախ, կատակում եւ Սեթոն—
Ու մասներով իր կոշտ կնգուղներ եւ պոկում:

Ու վառվում են արտում լաչակները կարմիր
Ու յերգում են յերգը բամբակածով բերքի,
—Բավական եւ Մանուշ, եւ մի կատակ անի,
Բիշ եւ մնում դուրս գանք մրցողների շարքից:

Ու քաղցին նրանք բերքը ճերմակ արտի
Արեւագից մինչեւ արփին հասավ զենիթ
Յեւ ձայն տվեց Սեթոն, հասած արտի ձերին,
—Մրցանակը տարանք յես ու Մանաս քեռին:

* *

—Մրցանակը տարանք, դեռ լսվում եր արտում
Ու կանչում եր Սեթոն—յեկեք-յեկեք այստեղ...
Կանչում եր ու շտապ բարդանները կապում,
Իսկ մոտակա սարից մուկն եր իջնում արդեն:

—Յեկեք, խնդուն քույրեր, բերքը՝ բառնանք սայլին,
Մութը կոխեց ահա, ժամանակը ուշ ա,
Իսկ այս գույգը Մանաս, թույլ տուր խփեմ կրծքիդ,
Վորպես մարտում տարած հաղթանակի նշան,—

Սեթոն ուներ ձեռքին յերկու բացված կնգուղ,
Վոր մոտեցավ արագ ու տվեց Մանասին,
Իսկ հերարձակ քամին իր յերգերն եր հյուսում
Ու լուսինը յերկրին համբույրներ եր տալիս:

Գ. ՄԱՍԵԱՆ

Ա. Գ. Ր. Ո. Ա. Վ. Ա. Գ. Մ. Ո. Ի. Կ. Ո. Ի. Չ. Ը

Մի առավոտ Արթուրի կուտնտեսության Ասկյարի բրիգադի 11 հեկտար փարթամ բամբակենու վրա յերևաց կառադրինան։ Կարադրինան ամուր, շատ ամուր կպել եր թանկարժեք բույսի տերեւներին ու մեծ գոհունակությամբ, դուռն աջ ու ձախ պտտեցնելով՝ ազահորեն խոսում եր բամբակենու թարմ, հյութառատ թփերը։ Հպարտ բամբակենին ընկճվեց այդ փոքրիկ միջատի առաջ։ Գարճ ժամանակում բամբակի կանաչ դաշտն այլանդակվեց, Հաղթական կարադրինան մերկացած բամբակենու կոկոնի միջից ուռած ու փքված՝ դուրս յեկավ և ծուլորեն տեղափոխվեց մի այլ կոկոնի մոտ հանգստանալու։ Երբ նորից քաղց զգաց, նա իր սև, սուր քիթը մի քանի անգամ պտտեցրեց չորս կողմը և ելի սկսեց իր հարձակումը կոկոնի և թփի վրա, կրծեց, ծակեց կոկոնը և մեջը մտավ։

* * *

Դաշտ ե մտնում Ասկյարի բրիգադի ագրոտիկա Մուկուչ Միրադյանը։

Նա իր համար կանոն ե դրձրել՝ ամենից շուտ դաշտ վրտք դնել, մեկիկ-մեկիկ ուսումնասիրել բոլոր արտերը, անգամ թրփերը, ապա վերադառնալ ու հանգիստ սրբտով անցնել իր սիրած աշխատանքին։

Մակայն այդ առավոտ Մուկուչի հանգիստը կորավ։ Նա շժմեց, կարծես կացնի հարված ստացավ իր ճակատին, յերբ տեսավ յերեկվա փարթամ, կանաչ դաշտի այստրվա տիուր վիճակը։ Մի ըուպե Մուկուչը մեխվեց իր տեղում, սակայն շուտով

զգաստացավ, վորոշեց իր անելիքը և վազեց դեպի գյուղ։ Քիչ հետո բրիգադի բոլոր անդամները դաշտումն են։

— Են բրիգադի անդամը, վոր ես կյանքի ու մահու մոմենտին ջանքերով յայն կանի, վտանքը կախ կգցի, պոչին կտանք, աշխտը կկարենք ու գյուղից դուրս կանենք, — ջղայնացած ըղավում ե բրիգադի անդամներից մեկը։

— Ձենդ, ճառդ քեզ պահի, — վրա յեն պրծնում բրիգադի անդամները, — ի՞նչ ե, մենք մեր մային դուշման ենք, թե՞ անգոր

ենք վորդի դեմ։

Վեճը դադարեց։ Մուկուչ բիճան հրահանգում ե կրկին քաղհանել, արմատներից պոկել արտերի և առուների թփերին բուսած բոլոր մոխխոտերը։ Մի քանի ողակ արագությամբ նետվում են դեպի արտերը պաշարող առուներն ու կատաղի գրոհով մաքրում են կարադրինայի և Շչոռ-ի համար նպատավոր պայմաններ ստեղծող մոխխոտերը և շարտում արտերից հեռու, արևի տակ։

— Եդ անտեր կարադրինան ենքան արագ եր տարածվում, վոր մեր բրիգադի 44 անդամով հնարավոր չեք մեկ որում վերջացնել, — իսկ մենք ուզում եյինք, վոր կես որ ել չթողնենք, դրա համար մեզ բուք-



Հացահատիկի կախումը Ալլախվերդու օրջանի Արմիո գյուղի կոյսնեստրյունում

սիրի յեկան ևս 44 հոգի: Յուրաքանչյուր չորս հոգուն ամրացրեցինք մեկ մարդ: Նրանք իրենց հետ բեթել եյին լազան, վեզրո, սինի, վորոնց մեջ հավաքում եյին կարադըրինան: Բոլորի համար արագ պատրաստեցինք փոքրիկ փայտիկներ, վորոնցով խփում եյին ցողունի մեջքին և կարադըրինան լեփում ցած թփի տակին դրված ամանների մեջ: Իսկ ով կփորձեր ձեռքով թափ տալ, մի լավ սեպնում եյինք:

Նոյ աներես թրթուրին պիտի հավաքել առավոտյան և յերեկոյան հովին, յերբ նրանք հեշտությամբ կթափվեն, իսկ կեսորին նրանց հավաքելը չափազանց դժվարանում է, վորովհետև նրանք շողի չեն կարողանում դիմանալ և վազում, մտնում են թփերի տակ ու իրենց չանչերը պինդ խրում թփի մեջ. են ժամանակ ինչքան կուղես՝ թափ տուր, թեկուղ ձեռքով, հազիվ 2—3 հատ թափվեն: Հավաքված կարադըրինան տանում եյինք դաշտերից հեռու, հա-

տուկ պատրաստած սաքարի վրա, վորտեբով տրորում և լցնում եյինք փոսի մեջ, հողը վրա տալի:

Մենք մի ուրիշ միջոցի յեկ դիմեցինք: Առաջին հերթին կանգնեցրինք քաղհանը: Քաղհանը կանգնեցրինք նրա համար, վորովհետև եղ անտերները մոլախոտ ել են սիրում. նրանց մի մասն ել ուտում եր մոլախոտը: Տեսնում եյինք, վոր թփերի վրա այլևս կարադըրինա չկա, այնուհետև վերսկսում եյինք քաղհանը:

Սակայն կարադըրինան արձատից կտրելու համար այս միջոցները դեռ բավական չեյին, վորովհետև դրանց մի մասը հողի մեջ է լինում: Դրո՞ւ համար անհրաժեշտ է քաղհանը կանգնեցնել ու ջրել, վորովհետև ջուրը բավականին ազդում է նրանց վրա:

ԱՅԺՄ ՄԵՐ ԴԱՇՏՈՒՄ ԿԱՐԱԴՐԻՆԱ ԶԿԱ

Նրանք վոչնչացվել են: Սակայն չի կարելի ասել, վոր նրանց բոլոր ձվերն ել են

վոչնչացել, և ահա 10—12 որ հետո այդ ձվերից առաջանալու յե նոր սերունդ:

Հայտնի յե, վոր կարադըրինան կերպարանափոխվում է և դառնում թիթեռ, վորը նախաամոր պայմաններում բամբակենու թփի տերևների տակի մասում մեկ սնդամից ածում է 400—500 ձու: Դրա համար հարկավոր է հավաքել ձվերը և փարեղյան կանաչով վոչնչացնել:

Սակայն մենք չենք թողնի վոչ մի քու, վոչ մի թուփ կարադըրինային, «չոռ»-ին գոհ գնա:

Մուկուչ բիձան վերջացրեց: Մի քանի րոպե տիրեց լուռությոն: Գոհունակության ժպիտը յերեսին՝ նա դուրս յեկավ կոլտընտեսության գրասենյակից և ուղեվորվեց դեպի տուն՝ մի փոքր հանգստանալու, վորովհետև յերեկոյան նա պիտի մասնակցեր քաղսմբակի պարապմունքին:

Մ Ե Ր Ա Ր Տ Ը

Հասուն հասկեր սպիտակ,
Ինչքան լավն է արտը մեր,
Ով հասուն արտ հողի տակ
Ընդմիջտ թաղիր դարդը մեր:

Հասուն հասկեր, լիքն եք, լիք,
Քառաշար եք, քիստավոր,
Քամի ալիք առ ալիք՝
Որորում է Զեզ որոր:

Սպասում ենք անհամբեր,
Սպասում ենք այս բերքին,
Մենք ուրախ ենք քանդի մեր
Բերքն է մնում մեր ձեռքին:

Հասուն հասկեր սպիտակ,
Ինչքան լավն է արտը մեր,
Ով հասուն արտ, հողի տակ
Ընդմիջտ թաղիր դարդը մեր:

ԱՄԻՐՆ ԱՎԴԱՆ

Բ. ԲԱԺԻՆ

ՁԱՅՆԸ ՏՐՎՈՒՄ Ե ԲԵՐՔԻՆ...

ԲԵՐՔԱՅԱՎԱՔԸ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՇՏԵՐՈՒՄ

ԱՅՍ ԲԱԺՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ

- | | |
|--------------------|--------------------|
| 1. ՊԱՅՍԱԶԱՏ | 9. ՌՈՒԲԵՆ ԴԱՎԹՅԱՆ |
| 2. ԱՐԱՐԱՏՈՒՆԻ | 10. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ |
| 3. Մ. ԿՈՐՅՈՒՆ | 11. ԱԼԱԶԱՆ |
| 4. ԱԼ. Ա. | 12. ԳԱՐՈ ՀԱԿՈԲՅԱՆ |
| 5. ԲԱՏՐԱԿ ՀԱԹԿ | 13. Ա. ՇԱՀԲԱԶ |
| 6. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ | 14. Գ. ՄԱՀԱՐԻ |
| 7. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | 15. Հ. ՅԵՂԻՍՏԱՐՅԱՆ |
| 8. Զ. ՎՈՍԿԱՆՅԱՆ | 16. Ն. ԶԱՐՅԱՆ |

ԱՐՏԵՐԸ ՀԱՍՈՒՆԱՆՈՒՄ ԵՆ

Նա շատ ուշացավ: Կոստանն ամեն որ մտքում նախատեսց նրան: Բայց նա յեկավ կարծես հեռու հորիզոնից, անցավ դաշտերի վրայով, մտավ տուն ու մարագ, հետո բարձրացավ լեռները:

Դա Շիրակի գագուռնն էր:

Մի որ Կոստանը գաշտերից վերադարձավ գյուղ:

— Պետք է սկսել. — ասաց նա:

Դիրաքլարցիք մուսթուլուսին լծեցին յեղները, յեղան գաշտերը՝ հողը շուռ տալու: Նրանք աստղերով գնացին ու աստղերով վերադարձան գյուղ:

Պետք էր վարել ու ցանել 326 հեկտար ցորեն ու գարի:

Հող չկար:

Կոլտնտեսության նախագահ Կոստանը ժպտաց քթի տակ ու մի որ ձի հեծած բարձրացավ սարերը: Նա գնաց, սրտում հաստատ հավատ պահած՝ նոր հող ու արտեր վորոնելու:

Ձիավորը ձեռքի ափը ճակատին դրած՝ նայեց լեռների գագաթներից: Ներքևում փովել էյին հարթ լեռնադաշտերը, ավելի ներքև՝ կապույտ ափսեյի պես յերևում էր մի լիճ, իսկ ձորերից բարձրանում էյին մշուշոտ ամպերը: Նա ձին քշեց ներքև: Լճափի մոտ իջավ ձիուց, սանձը գցեց թեվին ու մի քիչ տեղ քայլեց վտուցով: հետո բռավ վերցրեց կոշտ հողն ու նայեց: Բարերբեր հողի հոտն զգաց նա, նորից նայեց լեռնադաշտերին ու ձին հեծած վերա-

գարձավ: Իսկ լեռների կապույտ լճափին որորվում էյին գարնան սեղ ու ծաղիկ, և ծաղիկների առատ բուրմունքից հարբած, հսկա թիթեռնիկի թեւերի պես բացված, արևը մարգերի վրա վոսկի յեր մաղում:

Նա գյուղ վերադարձավ նոր յերկիր գտած Կոլումբոսի հպարտությամբ ու բրիգադները հավաքեց ժողովի:

— Պետք է վարել գյուղի հողերը, — ասաց նա:

Հետո նորից գիշերով արթնացան նրանք, լծեցին յեղները, աստղերի լույսով ճանապարհ ընկան ու բարձրացան մութ լեռները...

Նրանք շուռ տվին խոպանացած հողն ու ցանեցին արտերը: Կանաչեցին դաշտերը, նրանք յեղան խմբերով ու գնացին արտերը, թշնամու դեմ բանակ կազմած, գրոհ տվին ու դաշտերից քշեցին ամեն տեսակ մալխոտ...

Հետո գարնան ամպը գոռաց ու արտերի վրա թափվեց վարար անձրևը...

* * *

Ու մի որ, յերբ Կոստանը կանգնեց արտի ծայրին՝ տեսավ հասկերը հասնում են ծընկներից վեր՝ մինչև գոտին: Նա մի հասկ պոկեց ու հատիկը ծամեց ատամներով:

— Դարին կաթ է տվել, քիչ մնաց...

* * *

Կոլտնտեսական բերքի պահանջները շրջեցին, արթուն կեցան, վոր թշնամին գաշտերից մի հասկ անգամ չտանի: Յերբ արևը կախվեց արտերի վրա՝ նրանք գնացին, յեղան նորերը՝ հսկելու մինչև լուսարաց...

Դիշերն իջավ լեռներից ու տարածվեց դաշտի վրա: մթնում կորան քերծերը և կիսավեր ու կույր մատուռները: Մթնում սվավացին գարու անափ արտերը:

Մուկուլը պահակ է: Նա շրջում է աչքը լարած մութ հեռուներ և ականջը ձենի պահած:

Այն հասուն գարին էր սվավում, թե ինչ վոր մութ ստվերներ անցան արտի ծայրով: Գնաց Մուկուլը՝ սրտում խորը կասկած ու տեսավ՝ յերկու ստվեր որորվում են արտի վրա:

— Եղ ո՞վ է...

Ստվերները միացան իրար, քչփչացին:

— Եղ ո՞վ է, ե՛յ...

— Բաղաք կերթանք, Մուկուլ:

Ձենը ծանոթ է: Մուկուլը մոտեցավ ու ճանաչեց նրանց: Մեկը Սամսոն Շահաբաջյանն է, մեկելը՝ Կարապետ Նաչատրյանը:

Բաղաք: Բայց գիշեր է և մութ, և ուշ, իսկ ճանապարհն ուր է. չե, նրանք չեն կորցրել...

— Դարձեք հիմի գեղ. կերթաք լուսով, հիմի չեն թողնի, հեռացեք:

* * *

Կոստանը շրջում էր արտերում, ստուգում էր աշխատանքն ու շարունակ մտածում, վոր շուտով, շատ շուտով նոր բերքը կգա, պահեստներն ու պարկերը պատրաստ են. բայց կշեռքներ չկան:

— ՄՏԿ-ն չորս կշեռք, յեղաններ, պարաններ և տալու, բայց դեռ չի ուղարկել... տասն որ ել անցավ:

— Զին թամբեք՝ քաղաք երթամ,—ասաց
Կոստանն ու զնաց:

Մյուս որը նա Զակսելխոդսնաբին 500 ու
տվեց ու մի կշեռք գյուղ բերեց, մինչև
գինը պարզվի:

Յերբ Կոստանը վերադառնում էր գյուղ,
ձին քշեց վերի կալը: Եղ ժամանակ թռմո-
յենց Մեխակը, Հովակն ու մյուսները՝ հոր
եյին փորում, իսկ մի քանիսը գնացել էին
առու քաշելու, վոր հորը ջրով լծնեն՝ բերքի
պահպանման համար...

— Գեղի տակի արտերը տեղ-տեղ հասել
են, առավոտը թե անձրև չգա՝ պիտի քաղվի,
Հովակ բիձա,—ասաց Կոստանը, նայելով
բրեզադիր Թոմոյենց Մեխակին:

Հետո Կոստանը ձին քշեց, նորից գնաց
պահեստներն ստուգելու:

Դիրաքլարում յերիտասարդ մի մարդ
կա, վորն ամենայն ճշտությամբ գիտե, թե՛
կոլտնտեսականերից յուրաքանչյուրը քանի
աշխոյր ունի, իսկ տանը՝ ինչ տնտեսու-
թյուն: Նա մյուսներին նման գիտե, վոր մաս-
սայական հոսնձն սկսվելու յե հուլիսի 22-ից
և տեղիւր յե 12 որ, Կոլտնտեսությունն
որական հնձելու յե 39 հեկտար, իսկ ՄՏԿ-ն՝
14 հեկտար: Նա գիտե նաև, վոր առաջին
կալից պետությանը պիտի հանձնեն իրենց
պարտքը՝ 190 ցենտներ հացահատիկ, 1931
—32թ. ֆետցած 222 ց. ցորենը, իսկ ՄՏԿ-ին՝
195 ց. և այդ բոլորը վորոշեցին տալ մինչև
ոգոստոսի 5-ը:

Վերջապես այդ նույն մարդը գիտե, վոր
Հովակ բիձեն ունի 4 կով ու 10 վոչխար. հետո
մենակ ինքը՝ 90 աշխոյր, իսկ վաղն առա-

վոտ գնալու յե արտը հնձի:

Դա կոլտնտեսության հաշվետար Ադաթի
Դաբոյանն է:

* * *

Առաջին գերանդին քաշեց Հովակ բիձեն,
ու դարու հասկերը պտղեցին գետին, իսկ
նրա հետևից գնում էին փոցխողները, հե-
տո՝ կուռթ հավաքողները:

Սայլերը յեկան, տարան դեղերը:

— Փոցխով ափսիք, ճամփին չթափես,—
ասաց Հովակ բիձեն առաջին սելվորին ու
նորից համաչափ շարժումներով գերանդին
քաշեց:

Ու դարու բոց արտերում ալիք-ալիք
առաջ եր շարժվում հնձվորի արծաթանման
գերանդին:

Կեսուրին, յերբ հողնած հնձվորները պառ-
կեցին դեղերի ստվերներում, բարձրա-
հասակ, չեչոտ ու խառը բեխերով մարդը
թոնթորալով յերկու անգամ անցավ հնձած
արտերի յերկարությամբ:

— Եղ ի՞նչ ես փնտրում,—հարցրեց նրան
Հովակ բիձեն:

— Հեսանս չկա, հեսանս, ձեն տվեց նա:
Հնձվորները հրհռացին:

— Վա՛յ քո մարդ ըսողի, տեղովդ թերթի
նյութ ես:

Հետո գերանդին նա զցեց գետին ու զը-
նաց հեսանը փնտրելու: Բայց ճանապարհին
տեսավ Կոստանին ու կանգնեց:

— Իմ աշխոյրերն ախր վնց պիտի լինի,
զրքույկս կորցրել եմ...

Իսկ այդ ժամանակ մեկը «Իլիչովիկ» հա-
մար սև մատիտով նկարում եր նրա կարի-

կատուրան:

... Յերբ կալը շուռ տվեցին, դարմանի
աակը յերևացին դարու խողը հատիկները:
Կոստանը նայեց հորիզոնում կուռակվող
անձրևաբեր ամպերին ու ասաց.

— Հարդը դարուց պիտի ջոկել քանի անձրև
չի յեկել: Պարկերը բերեք:

Ու մի յեղան վերցրած՝ զնաց մոտիկ դեղը
շտկելու, վոր քամին չքանգի:

Քիչ հետո Հովակ բիձեն առաջին պարկը
լցրեց դարով, առավ ուսն ու զնաց կշեռքի
մոտ: Նա տարավ շալակած առաջին պարկը,
վոր պետության պարտքը տան կալի գլխից:
Իսկ պահակը պտտվում եր կալի շուրջը:
Հետո կանգնում եր մուռքի մոտ ու քանի-
յերորդ անգամ կարդում քառակուսի տախ-
տակի վրա կարմիր ներկով գրված բառերը՝
«մուռքը կողմնակի դեմքերին արգելվում է»:

Նրանք շուտով զառու պարկերը կբառնան
զարդարված առաջին սայլերի վրա, կքշեն
քաղաք ու հաղթական յերթով կանցնեն հրա-
պարակով: Այդ ժամանակ Կոստանը, բրի-
զադիր Մեխակն ու Հովակ բիձեն հերոսի
հպարտությամբ պիտի ժպտան լինինի քա-
ղաքին:

— Մեխակ, քո խելքն ի՞նչ է կտրում,
փոխանցիկ դրոշակը պիտի կարենանք հետ
վերցնել, վոր աժոթով չմանաք,—պիտի ասի
Հովակ բիձեն:

Բրիզադիր Մեխակը՝ յեղների մեջքին զար-
նելով՝ անշուշտ կնայի Կոստանին, իսկ նա
համոզված պիտի ասի:

— Կտանենք, Հովակ բիձա, կտանենք:

ՊԱՅՈՒՆԱՅ

Պ Ա Տ Ա Ն Ի Պ Ա Հ Ա Պ Ա Ն Ն Ե Ր Ը

Գնացքը ծանր հեվալով կանգնեց կայանում: Առանց ժամադաճառ լինելու մեր բրեզավոր դիմեց դեպի քաղաք:

Հյուրանոցում փոքր ինչ հանդստանալուց հետո, բռնեցինք Համգաչիմանի ճանապարհը:

Մեքենան բարձրանում էր ծառուղիներով, հետևից թողնելով փոշու թանձր ամպը:

Ճանապարհի չորս կողմը փրված են կոլտնտեսական հացի բերքառատ արտերը, վորոնք հասել են արգին ու սպասում են հնձվորին: Բարձրանում ենք դեպի վեր, Վասկրեսենկա ոռոտական գյուղը: Արտերում յերեվում է կոլտնտեսական բազմությունը, ոռոտ կանայք նստած ֆուրգոններին, հացահատիկը դաշտից գյուղն են տեղափոխում: Այն կոծված ծովի ալիքների պես ծփացող հացահատիկի արտերը միմյանց հետևից իրենց հասակով մեկ պատկում են գերանդու առջև:

Մոտակա ըարձր թմբին, մեզանից մոտ 100 քայլ հեռավորության վրա, մի քարի վրա նստած է հրացանը ձեռքին մի կոլտնտեսական և անուշ յերգում:

Վոչ ծայր ունես վոչ ել վերջ,
Բեզի մեռնեմ կոլխոզի արտ,
Առատ-առատ հաց ունես



Հունձն անհւշ...
Բոյ ես քաշել չինարի,
Բեզի մեռնեմ կոլխոզ արտ,
Վոսկի ցորեն ու գարի,
Կալն անհւշ:

Պահպանում եմ յես քեզի,
Բեզի մեռնեմ կոլխոզ արտ,
Վոր թշնամին չկիզի,
Բերքն անհւշ:

Այս պահակը Համգաչիմանի կոլտնտեսության դաշտերի պահակն է:

* * *
Կուսըջջի քարտուղար Յերվանդը մեզ առաջնորդեց Տիգրանի բրեզավոր: Մի քանիսը գերանդիներով հնձում էյին, մյուսները հասկերի կիտուկ սարքում, մյուսները բլուրների չորս կողմն էյին մաքրում:

Մեր արտ մտնելը համարյա վոչ վոք չնկատեց, վորովհետև ամենքը տարված էյին մի հոգսով — հասկերը շուտ հավաքել ու տուն տանել:

Մի քանի քայլից հետո մոտակա դեղից աջ ու ձախ կողմերից վեղրոները ձեռքներին հասկեր հավաքելով բարձրացան յերկու պատանի:

— Միք շարժի,— ձեռքս բռնելով ասաց Յերվանդը,— կանգնենք խոսեցնենք մեր յերեխաներին, տեսնում եք, թե ինչպես մանրիկ-

մանրիկ հավաքում են հասկերը: Բն սրանց եղ փոքրիկ սիրտը ուտելու չի,— տո, բա սրանց ճակատը պաչելու չի...

— Ո՞վքեր են դրանք,— հարցրեց նկարիչը:

— Վոնց թե «ովքեր են», դրանք մեր գյուղի պիտեներն են, մեր կոլտնտեսու-թյան գավազները, վորոնք ծեգը-ծեգին ի-րենց ծնողներին հետ դաշտ են դուրս գալիս, չոքում են արտի բլին ու հասկերը հավաքում:

— Սքանչելի յի:

— Սքանչելին այն է, վոր նրանք արդեն արած պրծնելու վրա յեն, տեսնում են մե-շովները լեք լեք լցրել են: Նկարիչ ընկերս ոգտվելով առիթից, առանց աշխատանքը խանգարելու, զգուշությամբ նկարեց նրանց:

— Անունները:

— Մեկին՝ Վարդկես է, մյուսին Անուշա-վան:

Նրանք մեզ տեսան. մենք մոտեցանք, բարեկցինք: Պատվի առնելով. նրանք բար-ձրը գոչեցին.

— Բարե ձեզ:

— Ընկ. Գեվորգյան, — մի քանի քայլ առաջ գալով ասաց Անուշավանը, — տես, մեղոն սպասում է, վոր պահետք տանենք:

— Ընկ. Գեվորգյան, — միջամտեց Վարդ-կեսը, — ես ա վորտեղ վոր ա, արած պրծնելու յենք, ինչ ես ասում, վորը բրդադին բուք-սիրի գնանք:

— Ձե, տղերք ջան, — հայրական փաղաք-շանքով ասում է Գեվորգյանը, — բավականին հոգնել եք, մի փոքր հանգստացեք, հետո բուքսիրի կգնաք:

Նրանք նայում են միմյանց յերեսին: Նայում են դաշտերին, նայում Գեվորգյանին, ապա կրկին նայում է կրկին սպասում նրա վերջին պատասխանին:

— Ձե, չելավ, մենք համաձայն չենք, — ասում են յերեսաները, — հնձի հետեից հասկ հավաքողները քիչ են, հասկերը դաշտումն են մնում, եղ վոնց կլինի, վոր մենք հան-գստանանք:

— Հանգստացեք, նորից կաշխատեք, ելի, — պնդեց Գեվորգյանը:

Անուշավանը յերեսը կնձուտելով դար-ձավ ընկերոջը.

— Վարդկես, այ տղա, խի մենք բեզա-րած ենք, վոր ընկ. Գեվորգյանն ասում ա դինջացեք:

— Ձե, ինչի՞ յենք բեզարած, հլա ենքան կաշխատենք:

Ընկ Գեվորգյանն ընդառաջ է գնում պա-տանինների թախաձանքներին և խոստանում այդ արտի հասկերը հավաքելուց հետո մի ուրիշ տեղ ուղարկել:

Նրանց ուրախությանը չափ չկա: Յեռան-դը կրկնապատկվում է:

Նրանք հավաքում յեն վոչ միայն հա-կերը, այլև արտում պատահած քարերը վեր-ցնում և դաշտից դուրս են շարում:

* *

Յած ենք իջնում դեպի դաշտերի հեռուն. նույն տեսարանն է ամեն տեղ: Պիտենե-րը դույլերը ձեռքներին հավաքում են հասկերը:

— Եկավ, եկավ, — լսվեց հանկարծ մի ուժեղ աղաղակ:

— Ինչը յեկավ...

Քոչվորների նախիրներն արտերի կող-

քով բարձրանում էյին դեպի մոտակա սա-րերը:

Պիտեները փոցները ձեռքներին կանգ-նեցին ճանապարհի վրա, ուղիղ արտերի ափին, վորպեսզի անասունները դաշտ չմը-նեն և չփչացեն հացահատիկը:

Յերբ գյուղ էյինք վերադառնում, ընկ. Գեվորգյանը մեզ պատմեց հետևյալը:

— Մեր պիտեները վորոշել են, վոր կալի ժամանակ առավոտից մինչև յերեկո պահակ կանգնեն կալում:

* * *

Մութ էր, մենք բարձրանում էյինք դե-պի գյուղ, հանկարծ մեր աչքի առաջ բաց-վեց հետևյալ տեսարանը: Դաշտում կրակ-ներ էյին վառվում, ինչվոր մարդիկ էյին շրջում: Մտքներովս շատ վատ բաներ անցան: Շտապեցինք ներքև, հանդիպեցինք բշիջի քարտուղարին, հարցրինք կրակների մասին: Նա շատ հանդիստ պատասխանեց.

— Մենք ֆանարներով դիշերները նույն-պես հունձ ենք անում, վորպեսզի արտերը փրկենք, վորովհետև հարավային քամին փչելուց հետո հասկը կկծդի:

— Պիտեներն աշխատում են:

— Այո, նրանցից մի քանիսը լապտե-րներն են բռնել:

Ուրը տպավորությամբ ու հիացմունքով հեռացանք Համզաչիմանից:

Ինչե՞ր ասեա չեն անի այդ փոքրիկ բու-շիկները...

Ա.ՐԱՍԱՏՈՒՆԻ

Բ Ե Ր Ք Ի Յ Ե Ր Գ Ը

(Արձակ բանաստեղծություն)

1.

Յես ճանաչում եմ Հայրոյին, Մարոյին
ու Կարոյին: Հիշում եմ, նրանք քշտեցին
թևերն իրենց, նայեցին վոսկեշող արևին,
նայեցին վոսկեցան արտերին, նայեցին հե-
ռու, հեռու հորիզոնին...

— Ես ինչքան մեծ ե, լին ե, անսահման
ու բոլ ե մեր արտը, անսահման ու բոլ...
ժանրացել ե կոխողի արտը, բոյ ու բոլս ե
քաշել մեր գյոզալ արտը...

— Ես ինչքան աշխատող կա կոխողի
արտում, ես լին ու բոլ արտում: Ես լինչ-
քան քրտինք ե ծորում առճառաճառ, ես
ինչքան սիրտ կա թպլրտացող, ես ինչքան
մկան կա յարված...

— Ես ինչքան մխոտ ու մրոտ ձիեր կան
կոխողի դաշտում, ես ինչքան յերկաթ ու
յերգ կա...

Յես ճանաչում եմ Հայրոյին, Մարոյին
ու Կարոյին... Նրանք աշխատում եյին կո-
տնտեսական արտերում:

2.

Դովլաթը կանգնած արտի են ծերին,
նայում ե, աշխատում ե, ատամ ատամի
վրա յի սեղմում, փնջում ե...

Են սուսիկ-փուսիկ կոխողնիկ Դովլաթը:
Են լին ու բոլ, արձակ ու շին արտերը
Դովլաթին վառեցին, հալեցին...

Յես ճանաչում եմ Հայրոյին, Մարոյին
ու Կարոյին, յես ճանաչում եմ բոլոր կո-
խողնիկներին, նրանք նստել են Դովլաթի
բլին. Դովլաթը «կոխողնիկ» ե... Իրեն չեն

տեսնում, չեն ճանաչում... Դովլաթը կոխող-
նի արտերում գլուխը կախ, «հալալ» բո-
լորի հետ աշխատում ե, աշխատում ե Դով-
լաթը, սրտի տակ՝ կրակ ու պեծ, քեն ու
վոխի լիճ ե կիտվում...

Աշխատում ե վորպես կոխողնիկ—հին
գեղ Դովլաթը՝ ես լին ու բոլ արտերում:

ՀՆՁԻ ՅԵՐԳ

Դուրս քաշեց արեն իր թուրը վոսկեղեն,
Պատոնց գիշերվա անթափանց քողը,
Թափվեց լույսերի մի պայծառ հեղեղ,
Բերկրանքից ժպտաց բերքառատ հողը:

Դուրս յեկան մաղդիկ վաղ արշալույսին,
Քայեցին դեպի դեղնահաս արտը,
Արեն եր նստել սարերի ուսին,
Առավոտն այնքան, այնքան հանդարտ եր:

Նայեցին մարդիկ հրճվանքով ներքին,
Բարձրացավ նրանց ջահել յիտանդը,
Արտն եր ոլորվում լիառատ բերքից,
Լիառատ բերքից ծփում եր հանդը:

Իսկ հասկերն իրենց վարսերը հյուսել՝
Տես, սպասում են հնձվորի բազկին,
Ե՛ր, ջահել հնձվոր, դու ել ես հուզվել,
Քրտինքովդ աճած բերքառատ հասկից:

* * *

Հնձվորի յերգից թնդաց թալով ողր,
Յեվ բացվեց ամռան թեժ առավոտը:

Ս. ԱՌԵՈՒՆ

3.

...Յորենը պարկեց:
Յորենի սարեր բարձրացան:
Արտերը մերկացան:
Հայրոն, Մարոն ու Կարոն լիառատ բեր-
քից ժպտացին...

.....

4.

Դովլաթի վոսքերը...
Են ուր են գնում ես կես գիշերին
Դովլաթի վոսքերը... են ինչի՞ Դովլաթը
ծնկի ընկավ, մատները խրվեցին հողի
մեջ... սողեսող, փորսող տալով, գողեգող,
եղ ուր ե գնում Դովլաթը:

— Մտքին լինչ կա Դովլաթի:
— Մտքիդ լինչ կա Դովլաթ...

Ձեն չկա... մթության մեջ, ոձի պես
սողում ե Դովլաթը:

Ահա մոտեցավ ցորենի մեծ դեղերին,
ինչի՞...

— Ինչի՞...
Վախեցած աչքերով են ում ե փնտրում
են Դովլաթը...

— Ո՛ւմ...

Ես լինչ պեծ եր, վառվեց Դովլաթի ձեռ-
քին...

— Կրակ եր...
Առավոտը բոլորի հետ ինքն ել արտե-
րում քրտինք եր թափում ու չարչարվում,
հիմի լինչ ե ուզում անել Դովլաթը:
Պեճը մոտեցավ դեղին...

5.

...Դովլանան թ...

— Ով էր, ինչ էր, ինչ կամ...

— Դովլանան թ...

— Ի՞նչ ե, ի՞նչ կա, ո՞վ ե...

— Դովլանան թ...

Կարոն եր...

Տեսավ գիշերվա մթի մեջ Դովլանան Կարոյին, թռավ տեղից Դովլանան, ուզեց տակով անի Կարոյին, խեղդի Կարոյին...

Բայց տեսավ, վոր առաջը փռված են լուսապայծառ, լեն ու բոլ արտերն ու իշարը քամակից կանգնած են Հայրոն, Մարոն ու Կարոն, ելի Կարոն, ելի Կարոն ու շատ շատ Կարոններ... Հազար-հազար հատ Կարո... բոլորը թեկերը քշած, մեծ, վոնց վոր մի-մի հսկա...

Վճր մեկ Կարոյին տակով անի, վորին խեղդի, վորին կորցնի... շատ են, շատ, շատ են եղ Կարոնները:

Իսկ են լեն ու բոլ արտերում խնդու-

թյուն և աշխատանք, աշխատանք և խնդու-թյուն...


Սուրճերը կիտվում են, կուլուվում, պարկվում, շարժվում... Սուրճերը բարձրանում են, վոսկեվառ, լուսեղեն խուրճերը...

Իսկ արևը, վոնց վոր լերկնքից կախված վոսկեհյուս խուրճ, պայծառ ու տաք:

Են լեն ու բոլ արտերում... կոլխողի ծով արտերում...

Ս. Ա.

1933 թ.



Բամբակի բերանավաճի վաղաքապատի շրջանի Ֆրանգուհյան գյուղի կոլտնտեսությունում

ԿՈՆԽՈՋԻ ԱՂՋԻԿ

Վարսերդ ձեռիդ հասկերի պես վառ,
Կանգնել ես հպարտ կոլխոզի արևում,
Կոլխոզի աղջիկ աչքերդ պայծառ
Ու քո վառ սերն է ծաղկել իմ արևում:

Ձա՛ն ջահել աղջիկ, հաստատ ու համառ,
Վառ յերգեր եմ յես հյուսել քեզ համար:

Մեր ընթացքի հետ այս արագահոս
Անվախ քայլում ես դու մեզ հետ առաջ,
Կոլխոզի աղջիկ, յե՛վ արի, յե՛վ հաջ
Գարձել ես մեր նոր որերի հերոս:

Ձա՛ն ջահել աղջիկ, հաստատ ու համառ
Վա՛ռ յերգեր եմ յես հյուսել քեզ համար:

Ծփա՛ն արերի վոսկեվարս գրկում
Մի անհուն սիրով յես քեզ սիրեցի,

Կոլխոզի աղջիկ իմ սիրո գրկում
Անունդ այնքա՛ն պայծառ գրեցի:

Ձա՛ն ջահել աղջիկ, հաստատ ու համառ
Վառ յերգեր եմ յես հյուսել քեզ համար:

Մ. ԿՈՐՅՈՒՆ



Հունձր Հայրադի կոլսնեստությունում



Գյուլուստում Բաբայեվա—Աղգիբիրի կոլսնեստուհի


ՀՆՁՎՈՐ ԱՂՋՎԱՆ

Արեվն անուշ նայ է անում արերի վրա,
Արեվի տակ հունձ ես անում մանգաղդ արած:
Հարվածային կոլխոզ աղջիկ, քո բրդադուռ,
Աշխատանքն է յեռում հիմա, քրտնեղ կաթում:

Դու հնձում ես բերդ բարի, բերդ մեր առաս,
Քեզ ժպտում է մեր արերի արեվը վառման:

Փոխանցիկ ես տարել արդեն հնձի ժրոհում,
Փոխանցիկը խինդ է բարդել քո ջահել արևում,
Համայնավար մեր դաշերի կոմերիս հնձվոր,
Հնձիք, վոր մեր հաղթությունը լինի փառավոր:

ԲԱՏԻՍԿ ՀԱՅԵ



Հացահատիկի հունձը Վաղպաշի օրջամուս

ՈՎ ԻՆՉՊԵՍ ԵՐ ՀՆՁՈՒՄ

Մեր ցանքի 105 հեկտարը մի անգամից հասավ: 60 կանայք գիշեր-ցերեկ մանդաղները ձեռքներին չօքել ելին արտերի բերին և մեծ հողատարությամբ քաղում ելին թե ցորենը, և թե՛ գարին: Լուսնյակի հետ մեռնի յեղ բոլոր մյուս կոյսնեստականները դառնում ելին: Յես միայն մեկ որինակ կրեմ նրանց աշխատանքից:

Վարդուհ Հովհաննիսյանը (Հարեթի բերդադի № 2 ողակի ողակավար) մանդաղով որական լավ և վորակով հնձում եր 5 վար: Իսկ յերբ տեսավ, վոր իր ողակի խուրձկապողներից մի քանիսը լավ խուրձ չեյին կապում, թողեց և անցավ խուրձկապի աշխատանքին: այնքան արագ յեղ լավ եր խուրձ կապում, վոր 6 հնձվոր չեյին կարող մեռ հետ մեցել:

Վարդուհի որինակին հետևում ելին նաև մյուս կանայք: Այս բոլորի շնորհիվ մեր 105 հեկտարի հունձը 10—12 սրվա ընթացքում ավարտեցինք և կալը տեղափոխեցինք: Այս տարի մենք այնպես ենք հսկել, վոր չոճն իր պորտով և զուշն իր թևով չեն համարձակվել արտերը մտնել:

Այս տարի այնքան բերք ենք ստացել, վոր կարողացել ենք մեզ վրա մի քանի տարուց ի վեր մնացած պետական պարտքերը փակել: Հայթադի կոլխոզը, սկսած 1930 թվից մինչև որս, պետութայնը վոչ մի կիլո հացահատիկ չեր տվել, և ամեն կերպ աշխատել եր պոկել և ուտել: Այս տարի գրությունն այլ և Մեր բոլորիս տուղին մտանդուրյունն և յեղել կատարել պետության հանդեպ մեր ունեցած պարտավորու-

րյունները յեղ պարգեւես դուրս գալ: Մենք պետութայնը հանձնել ենք 45 ցենտներ հացահատիկ, ՄՏ կայանին տվել ենք 118 ցենտներ բնավարձ, վերադարձրել ենք 60 ցենտներ սեղմվարկ և այդպիսով փակել ենք մեր վերջին 3 տարվա բոլոր պարտքեր: Մեր պարտավորությունները լրիվ կատարելու գլխավոր պայմաններից մեկն ել այն յեղավ, վոր մենք այս տարի չավինք այն կորուստները, ինչ տվինք անցյալ և նախանցյալ տարիները: Մենակ անցյալ տարի կալից մեշոկներով գողացան 15 խավարի սահմաններում ցորեն և գարի, իսկ դաշտից՝ բավական քանակությամբ քյուլաջ:

Հայթադի կոլխոզի նախագահ՝

Ա. ԳԻՐԿՈՐՅԱՆ



Հացահատիկի հունձը Հայթադի (Վաղպաշ) կոլտնտեսությունում

ՀԱՎԱՔԵԼ, ԿԱԼՍԵԼ ՈՒ ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆՔ ՄԵԾ ԽՆԱՄՔՈՎ

Հացահատիկների բերքահավաքի գործում մենք մեր առաջ խնդրի զրեցինք առաջին իսկ կալից կատարել պետություն հանդեպ մեր ունեցած բոլոր տեսակի պարտավորությունները:

Հուլիսի ժամանակ մեր հիմնական լուրջագն էր—պայքար լավորակ հունձի համար, պայքար որվա արտադրական առաջագրանքները կատարելու և գերակատարելու համար և պայքար կորուստների դեմ:


Մեր արտադրական պլանում նախատեսել էինք, զոր մեկ աշխատավորն որական հունձ պետք է կատարի 5 էկիս լիտր, փաստորեն մեծ մասամբ կատարվել է 8 լիտր:

Այս տարի համարյա թե մենք մոռացանք հասկի կորուստ չենք ունեցել: Մեր ամեն մի հնձվոր փոշի էր միայն հսկում եր իր կողմի ընկերոջը, այլևս հսկում եր իր հարեվան բրիգադի աշխատակիցներին: Յեվ յեթե նկատելին, զոր մի վարեն բրիգադ կամ բրիգադի անդամ վատ է հնձում, իսկույն և յեթ հայտնում էին բրիգադի ղեկավարը: Մի որինակով քավակա նախաք:

Բրիգադի ղեկավարը Մարտի «աշխատանք» հոդամասում հասկահավաքի գործը չեն կազմակերպել, հասկերը թողել էին առանց հավաքելու: Այդ տեսակով կոտորածականները իսկույն և յեթ սեպտեմբերին են նրան և ապա հայտնում վարչությունը: Առաջին հերթին նրան բարձրացրինք սեվ

սախտակին, վորից հետո նա անմիջապես կազմակերպեց հասկահավաք:

Անցյալ տարի մեր թե կալերում և թե դաշտում դրված դեզերը փոխադրելու բավականին քանակությամբ հասկեր էին մընում թափված, իսկ այս տարի նման դեպք չի յեղել: սալապանը յեվ բարձրներն անմիջապես հավաքում էին յեվ փոշի մի հասկ դեզի տակ չեն մնում: Մյուս կողմից, վորպեսզի փոխադրության ժամանակ ճանապարհին մոռացվի հասկ չթափվի, սալը բարձրաց յեվ ամուր կապելուց հետո սալապանները փոխադրվում մամուր ամուրում էին սալի



Ն. Բայազետի Երզնայի Աղզիբի կոլեկտիվի փութը կալն են տեղափոխում

վրա կապված փութեր և նոր էլին սկսում տեղափոխել:

Այս քյուլալը կալը տեղափոխելու ժամանակ մեր սալապաններն արագ չեն քյուլալ սալերը, վորպեսզի հասկերը չթափվեն, կորուստներ չտան: Ամեն մի խուրձ, ամեն մի սալ տեղափոխելու ժամանակ հաշվի յեր առնվում, իսկ դաշտում մնացած խոտերը հավաքում էին մի մեծ փութում: Մյուս առավոտյան բրիգադի բրիգադի պահակից հաշվով ընդունում էր և հանձնում ցերեկային պահակին:

Բերքի բարձրացման համար մենք ձեռք ենք առել հետևյալ միջոցները: Մեր հողերի 50 տոկոսից ավելին պարտադրել ենք, զրեկու ժամանակ մարգերի մեջ մի մի քիչ չոր չենք բողբ: № 2-րդ բրիգադի «ՈՒՋՈՒՆ» ստանայի արտերից մեկի մի մարգում մի փոքր տարածություն բարձր են յեվ չեն զրվում, մենք այդ փոքրիկ տարածությունը վերանորոգել ենք:

Այս միջոցառումների շնորհիվ մենք մեր պարտավորությունները կատարեցինք ժամկետից շուտ: Հուլիսի 30-ին պետությունը հանձնեցինք մթերման ցորեն 47 ցենտներ, գարի 41½ ց. ՄՏ կայանի վարձ 59 ց., պարենավարի դրամաց 10 ց.: Այդ բոլորից հետո մոտավոր հաշիվներով մեր ամեն մի աշխատին հասնում է 5 կիլո ցորեն յեվ մեկ կիլո գարի:

Աղջկալի կոլեկտիվի նախագահ
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԻՆՉ Ե՝ ՄՏԱՑՎՈՒՄ, ՅԵՐԲ ԿՈՄՈՒՆԻՍՏԸ ԼԱՎ Ե՝ ԱՇԽԱՏՈՒՄ

Հայտնի չէ, Վոր մեր թե կենտրոնական և թե շրջանային մամուլում ամեն անգամ հարվածում, խայտառակում էյին «Անաստված»-ի կոմունիստներին, թե նրանց միայն մի չնչին տոկոսն է կոլտնտեսական արտադրություն մեջ աշխատում: Յեվ այդ միանգամայն ճիշտ եր: Քաղաքները կազմակերպվելուց հետո, շնորհիվ քաղաքային և շրջկոմի ձեռք առած վճարական միջոցների, «Անաստված»-ն արդեն դուրս է գալիս իր հին վիճակից: Աշխատանքի վատ կազմակերպման պատճառով անցյալ տարի 53 հեկտար ցորենը հնձել էյին ավել զրսի բանվորներին, այն ժամանակ, յերբ «Անաստված»-ն ուներ 600—700 աշխատանքի ընդունակ մարդ, 190 հեկտար այգու քաղը կատարեցին զրսի բանվորները:

Այս տարի մեր գործը յեղավ մաքրել կոլխոզը: Յեվ մաքրեցինք, դուրս շարեցով 204 տնտեսություն, վորոնց մի մասը կապ չունեն կոլխոզի հետ, մի մասը յողեր էյին, մի մասն էլ անհարգատներ: Դրանցից հետո բոլոր կոմունիստներին ուղարկեցինք արտադրության մեջ աշխատելու:


Թե անցյալ, թե նախանցյալ տարիներում հարվածայիններին հաշվի առնելու գործը կատարվում էր ձևականորեն: Այս տարի, ընդհակառակը, մենք ընտրել ենք 190 հարվածայիններ, վորոնք ստուգված և հաստատված են բոլոր ուղակներում, վորի շնորհիվ մենք կարողացանք մեր իսկ սեփական ուժերով 14 որում բաղել մեր 238 հեկտար արեք: Մեր գործը բավականին առաջ տարավ նույն այն, վոր մենք կարողացանք կարե ժամանակում պարզել, թե յուրաքանչյուր կոլսնեստական իր կատարած յուրաքանչյուր աշխատանքի համար ինչ է ստանալու: Սրա շնորհիվ էր, վոր հունիսի առաջին հնգօրյակում աշխա-

տանքի էյին դուրս գալիս 450 հոգի, հունիսի վերջին հնգօրյակում աշխատանքի դուրս յեկան 540 հոգի:

Մենք կուսակցականների աշխատանքների հաշվառման համար ունենք հոսունկ մասյան, վորտեղ գրանցում ենք այս կամ այն կուսակցականին հանձնարարված աշխատանքը յեվ նշված ժամկետին ստուգում ենք թե ինչպես է կատարված: Այսպես որինակ՝ կոմունիստ Վահան Բաբայանին հանձնարարված էր, վոր ճաշարանի ճաշերը վորակով պատրաստի, հանձնարարված էր, վոր ժամանակից դեռ մի ժամ առաջ ճաշերը պատրաստ լինեն, վոր պեսդի անմիջապես դաշտում աշխատողներին հասցվին: Սակայն նա ճաշերը վատ էր պատրաստել, մյուս կողմից, առանց մեր գիտություն, բամբակի մշակման վրա աշխատող բրիգադներին տալիս էր 500 գրամ հաց մեկ հոգու համար, իսկ հացահատիկի հնձվորներին մի կիլո 600 գրամ: Նման դրությունն ազդեց բամբակի մշակման արագ ընթացքի և վարի վրա, վորի համար կուսկոլլյուրոն Վահանին հետաքրքրեց կուսակցությունից, իսկ վարչությունը գործը սվեց դատարան:

Մի այլ որինակ: Կոմունիստ Հովհաննես Բաբայանին հանձնարարված էր կազմակերպել յեվ գլխավորել պարկեր հավաքելու գործը, յայց նա չէր կատարել այդ հանձնարարությունը, վորի համար պատասխանատվության յենթարկեցինք:

Աշխատանքի ղեկավարինայի և հունձը ժամանակից շուտ ավարտելու գործում մեզ մեծ ծառայություն մատուցեց ընկերական դատարանի կազմակերպումը: Ահա ձեզ մեկ որինակ: Ընկ. դատարանն արձանագրում է. «Ուղի ունենալով այն, վոր Վարդան Վարդանյանը յեվ Մուկուչ Պետրոսյանն առաջին անգամն է ինչ ցորենի հունձ են կատարում, յեվ որվա արտադրական առաջադրանքները բերակա-



Հունձն «Անաստված»-ում

տարում են 50 տոկ., յեկնելով դրանից ընկերական դատարանը գնում է, վոր նրանք ավելի մասնագետ են այգիների մշակման գործում, քան հացահատիկի հունձի, ուստի նրանց պետք է տեղափոխել այգիներում աշխատելու:

Վարչությունն անմիջապես ընդառաջեց դատարանին: Նրանց տեղափոխեց այգիները: Նրանք այգիներում կատարել են վորակով սուղ, նրանցից ամեն մեկն որակապատրաստել է 600 հատ խմոր և այլն:

Այսպես, մենք մեր ամենորոյա աշխատանքների ընթացքում ուսումնասիրում ենք յուրաքանչյուր կոլսնեստականի ունակությունները յեվ յուրաքանչյուրին տալիս ենք իր ունակությամբ համապատասխան աշխատանք:

ԶԱՎԵՆ ՎԱՍԿԵՆ

ԻՆՉՊԵՍ ՄԵՆՔ ՇԱՏ ԲԵՐՔ ՍՏԱՑԱՆՔ

Մեր կոլտնտեսությունը շրջանում առաջինը յեղավ: Վոր հուլիսի 24-ին պետություն հանդեպ կատարեց իր բոլոր պարտավորությունները՝ պետությանը տալով 113 ցենտներ հացահատիկ, վորից ՄՏԿ-ին՝ 24 ցենտներ բնավարձ, 45 ցենտներ սերմավարկի և 25 ցենտներ պարենավարկի դիմաց:

Այս հաջողությունները մենք ձեռք բերինք մեր աշխատանքի լավ կազմակերպման և կարգապահության շնորհիվ:

Ձեզ ուզում եմ ցույց տալ իմ բրեզգոյի աշխատանքի սխառնը, վորով դուք գաղափար կկազմեք նաև մեր մյուս բրեզգոյների աշխատանքների մասին: Իմ բրեզգոյի 17 հեկտար ցորենը և 7 և կես հեկտար գարին բաժանեցի յերկու ողակների միջև: Ամեն ողակը կցիցի 8 և կես հեկտար ցորեն և 3 ու կես հեկտար գարու: Քաղը կազմակերպեցի մանգաղով, վորպեսզի կորուսանե քիչ լինեն: Առաջին որը յես խիստ հեռակեցի դաշտ դուրս յեկողների քաղին, վորպեսզի ստուգեյի ամեն մի քաղվորի աշխատանքի վորակը: Այդ որը յես պարզեցի, վոր բրեզգոյի անդամ Մաքսիմու Խաչատրյանն անվորակ և քաղում, հրնձից գլուխ չի հանում, նրան անմիջապես ազատեցի հնձի աշխատանքներից և ուղարկեցի կալը:


Այս տարի, համեմատած մյուս տարիների հետ, մեր հացահատիկի բերքը բավական բարձր է:

Անցյալ տարի մեկ հեկտարից մենք ստացանք 60 փուր, իսկ այս տարի 80 փուր: Այս հանգամանքը պետք է բացատրել նը-

ՀՈՒՆՁ

Շոյում է հովը, շոյում դառներ,
Դառնում փովել են անտի արհեր:
Արհվել է ժպտում ծփացող դառնին,
Դառնում զնգում են մանգաղ, գերանդին:
Ջան, գերանդին ու մանգաղը արած,
Մենք գրոհում ենք դառների վրա:
Հնձում ենք մինչեւ արեւը մսնի,
Հնձում ենք նույնիսկ գիշերվա մրնին:
Ու բարձրանում են խորձերը հասուն,
Դառնում կովում են, գերանդի, բազուկ:

ՌՈՒՐԵՆ ԴԱՎԹԵԱՆ (կոլտոգնիկ սկանակ)



Հունձը Ալլանվերդում, Ուզունկոթ գյուղի կոլտնտեսությունում

բանով, վոր նախ՝ վարը կատարեցինք խոր, յերկրորդ՝ ջուրը սվինք ժամանակին յեղ վերջապես յերրորդ՝ վոր սերմն ազատեցինք գլուխը:

Ինչ վերաբերում է կորուստներին դեմ մղած մեր պայքարին, մենք հետեւյալ միջոցառումներին դիմեցինք: Քաղված հացահատիկը ամուր խուրձ եյին կապում և դիզում: Հենց դառնում, դեզերից մի քանի քալ հեռավորության վրա մենք պատասխանեցինք կալը: Այդ արիւնք այն նպատակով, վորպեսզի տեղավորության հետեւանով հասնի կորուստ չունենանք:

Դեզերը հրդեհից պաշտպանելու համար մենք ընդունել ենք հետեւյալ մեթոդը. ամեն մի դեզ մենք միմյանցից 100—150 քալ հեռու յենք դրել և ուժեղ հակողություն սահմանել: Կալում յեղած բոլոր խուրձերը հաղված են և գրանցվել են համապատասխան ձևով:

Իմ բրեզգոյի հացահատիկը կալելու ժամանակ յես կալումն եմ լինում և հսկում կալման, կշռելու և ապա պահեստ տեղափոխելու աշխատանքներին:

Վ. Ալլանվիկի կոլտնտեսություն
դաշտավարական
բրեզգոյի դեկավար՝

Հ. ՇԱՂԻԱԶԱՐՅԱՆ

Ճ Ե Ր Մ Ա Կ Ա Ր Տ Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն

Գյուղի ծայրին կանգնած ե նորակառույց դպրոցը Դասամիջոց ե. տղա ե աղջիկ ուրախ խաղում են, աղմկում: Դպրոցի մոտից դեպի դաշտ ձգվող ճանապարհով, յե-հսը քրտինքի մեջ կորած, քայլում ե մի յերիտասարդ, վորը բամբակի բարդան ե հասցնում աշխատավորներին:

Հեռվում, բամբակի կիսականաչ արտե-րում յերևում են կանանց սպիտակին տվող գլուխները, վոմանք ուսերի վրա դրված բամբակով լեցուն զամբյուղներ են տանում մի տեղից մյուսը:

Հետզհետե մոտենում ենք նրանց, շատե-րը յերգում են ե քաղցր յերգի ձայնը խառնվելով աշնանային հով քամու հետ, ավելի գուրեկան ե հնչում:

— Բարեւ ձեզ: Մի վարկյան յերգն ընդհատվում ե, ու բոլորը գլուխները վեր են բարձրացնում ե ապա նորից շարունակում իրենց աշխատանքը:

* *

Նկարիչ ընկերս ապարտան ուզդեց, իսկ բամբակ չանաքող կանայք սկսե-ցին խնդալ ու մեկը-մյուսին կանչել:

— Յեկե՛ք, նկարվում ենք...

Շահխաթունը, վորի գոքում հավաք-ված բամբակի վրա ընկույզ կկո-տրվեր, ամենաառաջը կանգնեց ու բա-ցականչեց:

— Տեսե՛ք, չնայած մեծ¹ եմ, համա որական հավաքում եմ 60—63 կիլո: Յես պետք ա ամենաառաջը կանգնեմ: Իսկ այն յերիտասարդին, տեսնում եք,


նա պետք ա ամենապոչին կանգնի, վո-րովհետե որական 17 կիլո յե հավաքում, ինձնից ել չի ամաչում...

— Սիրանուշ Ասլանյանն իսկապես լողը ե, փափստցին մյուս կանայք ու ծիծաղեցին: Ցածրահասակ Վարդուշը ծափ տվեց, բարձրացավ հողաթմբի վրա, վեր բարձրաց-նելով բամբակի լի դաբյուղն ու բացա-կանչեց իր ամբողջ ձայնով:—

— Նկարեցե՛ք ինձ, հենց եսպես, բամբա-կը ձեռքիս...

Բամբակի բրդադեր Բեյբուղը ե կոմ-սոմոյի կազմակերպիչ Արամայիսը, վորոնք մեզ մոտ էյին կանգնած, մատնացույց արին Վարդուշին ե ասացին:—

— Սա ե սրա նմաններն են մեր պար-ծանքը:



Չամաք Վ. Ղամարլուի կոլսիսեստուպյունում

Վարդուշը հարվածային ե, նա բամբակի դաշտումն ե լինում դեռ լույսը չբացված ե վերադառնում ե յերեկոյան մթին: Պլանի համաձայն մեկ որում պետք ե հավաքի 40 կիլո բամբակ, սակայն նա աշխատանքի դուրս գալու որվանից մինչև որս միշտ հավաքում ե 63—65 կիլո:

Իսկ Մարիամ Սիմոնյանի որակում ծա-նոթացանք 80 տարեկան Թեթևան տատի հետ:


— Տատի դու արդեն ծերացել ես, տանը հանգիստ նստիր, ինչո՞ւ յես գալիս աշխա-տանքի,— հարցրի յես: Նա ընդհատեց ինձ, պատասխանելով:—

— Քա իմ գլուխս մեռած ա, իմ սիրտը վճեց կհամբերի տանը մնա: Ուրիշներն աշխատեն ինձ համար: Չե, ետ ըլելու բան չի: Մենք սոցմրցման մեջ ենք մտել Ղուրդուղուղու, Վեդու, Ղամար-լույի շրջանների հետ, ուրեմն՝ պետք ա նրանց կանանց հաղթենք:

Թեթևան տատը յեզակի չի, Ֆրան-կանոցի կոլտնտեսությունում տաս-նյակների յե հասնում նրա նման բա-րիխիղձ աշխատող կանանց թիվը:

Գարուշի, կարապետի, Բեյբուղի հետ շրջում ենք բամբակի դաշտերը: Բեյ-բուղը բամբակի բրդադերն ե: Նա հաճախ մեզ ստիպում ե կանգնել ե ձեռքը մեկնելով հեռուն, վառվառն հայացքով ու վոգեմվորված բացա-տրում ե, թե ինչպես գարնանից մին-չեվ հիմա հերոսական աշխատանք ե

ՅԵՐԳ ԱՐԵՎԻ ՈՒ ՀՆՁԻ ՄԱՍԻՆ



Խաղողի բերեալաւաք Ղաւարովում

Թափվել բամբակի արտերում:

—Այսպիսի բերք վո՛չ մի տարի տեսած չեյինք: Մեջ ընկաւ կոմսոմոլի բջիջ կըց-ված Կարապետը,—պլանով մեկ հեկտարից պէտք է տայինք 5,5 ցենտներ, բայց փաստորին ստացվում է 10 ցենտներ: մինչև այսօր մեր տարեկան պլանը կատարել ենք 180 տոկոսով, սակայն յերկու ուրից հետո յեթե դաք, պլանը 200 տոկոսով կատարված կտեսնենք: Բա ըսենց բամբակ զուք տեսել ե՞ք, մի նայեցեք, ինձնից բարձր են բամբակի թփերը, կնգուղներին շատու-թյունից թփերը զուլաները կախել են:

Իսկ Կարապետը, վոր կցված է բամբակի բերդադին, իրեն արգարացրել է վորպես կոմյերիտական. նա աշխատավորներին մեջ զրույցներ է բարձրաձայն ընթերցանու-թյուններ է կազմակերպում:

Հեռանում ենք, բայց դեռ հեովից ել ժըպ-տում են սպիտակին տվող փարթամ դաշ-տերը:

ԱՆԿՐՈՒՇ ՍԱՐԳՍԵԱՆ

1.

Արեւը քափում է վոսկի ու կրակ,
Արեւը փայլում է արեւի վրա...

Քայլում է, վորպես մի լմեսարուն պահակ,
Ներքելում արեւը, արեւը պահած

Ամբողջ գարունը, ամառը ամբողջ
Արուն փայլել է իր ծանոթ համբով:

Հսկել է արեւը, արեւը ծանոթ,
Յերք բարձրացել է նա իր կածանով...

2.

Արեւը քափում է վոսկի ու կրակ
Իսկ մենք հեծում ենք—մանգաղները սրած:

Իսկ մենք հեծում ենք, հեծում հասկ առ հասկ
Ձե՞ սոցմրցում է, լարում է ու վազք...

Սոցմրցում հասիկի ու հասկի համառ,
Պե՞տ է մարտնչել, կովել համար:

Վոր դաւսում չմնա վո՛չ մի հասիկ...

Յեվ չսալ կորուստ վո՛չ մի հասկի

Մեր աշխատանքի ու մեր բազկի...

Վոր կոլխոզը մեր հաստաւ յիկի:

3.

Արեւը քափում է վոսկի ու կրակ,

Արեւը փայլում է արեւի վրա...

Իսկ մենք հեծում ենք, հեծում հասկ առ հասկ
Ձե՞ սոցմրցում է, լարում է ու վազք...

ԽԱՉԻԿ ՀՐԾՉԵԱՆ



Ուզունլարի (Ալլանվերդի) կոլսնեսու. կախիչ մեքենան աշխատելիս

Տ Ո Ւ Ր Մ Ա Ն Վ Ա Կ Ո Ւ Ո Ւ Մ

Անձրեմ տեղացի:

Աղջիկներին չիթ դեյրաները թրջվեցին: Զրի շողշողուն հատիկները նստեցին նրանց մազերի և արտեանունքների վրա:

Աղջիկները և յերիտասարդ տղաները գեռ կոացած առաջ ելին շարժվում: Նրանք գործի ելին գնում խորհրդային նոր մեքենան, Տուրման Վաղուումը: Մի նոր գեռը սոցիալիստական դաշտերում: Նրանք փորձում ելին իրենց սովորածը՝ այդ նոր մեքենան տիրապետելու համար:

Մեքենան վիթխարի գոմեշի նման շարժվում եր բամբակի արտում:

Աղջիկներն ու յերիտասարդ տղերքը, բռնած նրա ուտիկն կնճիթներից, կամ շլանգներից, ինչպես ասում ելին նրանք, առաջ ելին շարժվում: Փթթած բամբակը ներս սողալով կնճիթներից, գնում հավաքվում եր մեքենայի կենտրոնական մասում:

Տուրման-Վաղուումը չանաքում ե: Նրա կատարած չանաքը նախ մաքուր ե և ապա կրճատում ե ժամանակը: Տասը շլանգ ունեցող մեքենան, 8 ժամվա ընթացքում, միջին թվով չանաքում ե 700—800 կիլո բամբակ: Իր վրա աշխատեցնելով 11 մարդ, նա կատարում ե 15—16 մարդու աշխա-

տանք: Հետագայում շլանգիստների վորակավորման և հմտության պայմաններում, յերը յուրաքանչյուրը նրանցից կկարողանա զեկավարել յերկու շլանգ, այդ դեպքում 5 բանվորով կարելի կլինի կատարել 15—16 մարդու գործ:

Տուրման Վաղուումի առաջին փորձարկումը Ղամարլույի դաշտերում պսակվեց հաջողությամբ: Նոր մեքենայի վրա սովորող կուրսանտները (փորոնք մեծ մասամբ տրակտորիստներ ելին) ընդհանուր առմամբ լավ քննություն բռնեցին:

Յերեկոյան, նրանց աշխատանքի ավարտման առթիվ գումարված հավաքույթում, ուսհողի յերիտասարդ մարտիկները խոսք տվին, պայման ստորագրեցին Տուրման

Վաղուումի ռեաիսե կնճիթները հասցնել մեր բամբակենու վերջին փաթիլին անգամ:

Նրանք խոստացան բարձր պահել մեր բոլշևիկյան մեքենայի պատիվը, լինել նրա հմուտ զեկավարները, տիրապետել սոցիալիստական գյուղատնտեսության նոր տեխնիկային:


Նրանք, — հողից յեկած, Արարայան արելում թրծված այդ յերիտասարդ եւտուղիստները, նրանք, այդ բաղմաթիվ հերոսները, տրակտորից հետո՝ Տուրման Վաղուումով կարշավեն մեր սոցիալիստական դաշտերում: Բրոնզագույն թփերը կխլրտան: Բամբակենու արծաթե գանգուրները կուլ կգնան հսկա մեքենայի շնչառությանը:

Անձրեմից հետո կշողա ծիածանի վիթխարի կամարը: Արեվը հուր ու յերանգ կթափի: Աղջիկների չիթ դեյրաները կխշտան: Աղջիկները կոացած առաջ կշարժվեն: Նաե տղաները:

Տուրման Վաղուումը նրանց կհետևի:

Տուրման Վաղուումը նրանց ձեռքում միշտ սանձված, միշտ նրանց յեկալի:

ԱՆԱՂԱՆ



Տուրման-Վաղուումի Ղամարլույի արտում

ՇԻՐԱԿԻ ԴԱՇՏԻՆ

Սեգ Սեվանա լնի պես, դու ծփում ես ու նագում,
Շիրակ, քեզ պես ջինջ մի լին յես չեմ տեսել յերագում:

Ծուփ արտերդ ծածկել ես արևայական ծիրանով,
Յեզ հարսի պես նստել ես յերկնքի տակ ջինջ ու մով:

Յորենաւաս արտերիդ ալիքներդ ժողկեզես,
Այնպէ՛ս քննուռ ու սիրով համբուրվում եմ իրար հետ:

Ամեն հասկդ մի վառ հույզ, մի բուռ հողդ մի քնար,
Շիրկանալը մեզ մուսա՝ բերքի յերգը յերգեմք հար:

Թող Մանթաշի հովերը փողեր փչեն ցնծալի
Ու թող պար գան նրա տակ արտերն ալիք առ ալիք:

Շիրակ, դու մեր հաղթության դարձիւ պատկը դալար,
Ու յես մասդաւ մի պոետ յերգեմք յերգեր քեզ համար:

Սեգ Սեվանա լնի պես դու ծփում ես ու նագում,
Շիրակ քեզ պես ջինջ սի լին ո՛վ ե տեսել յերագում:

ՀՄ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

(Կոլեոգնիկ սկզմակ)

„ՊԱԺԱՐՆԻԿ“ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՅԵՎ ԿԱԼՎՈՐ ԶՈԶՈՅԻ ՄԱՍԻՆ



Յերբեմնի խոպան դաշտերի կրծքին հըպարտ ու հանդիստ նստել և Ազատաշենի դուռը: Նոր և կառուցված Ազատաշենը, ընդամենը 5 տարի առաջ: Ազատաշենի փողոցներն ու տները նման չեն վոչ Զաֆարադի, վոչ Փարաքարի, վոչ Մեհմանդարի և վոչ ել Շորլուլի ծուռ ու մուռ փողոցներին ու հին խրճիթներին, վորոնք ժառանգություն են ֆնացել անցյալից: Ազատաշենն աչքի յե ընկնում իր նոր, գեղեցիկ տներով, լուսավոր, մաքուր սենյակներով, հատակազծման յենթարկված լայն և ուղիղ փողոցներով:

Ազատաշենում կա ընդամենը 62 տնտեսություն, բոլորն ել նախկին բաղրակներ, վորոնք սկսած մայրերից մինչև մանուկները բաղրակություն են արել Զաֆարադի, Արբաթի, Գյոյ-Ղումբեթի, Փարաքարի ու Վարմադիարի կուլակներին: Խորհրդային կառավարությունն ոգնության հասավ նրանց ու ազատեց կուլակների զաղանային շահագործումից, նրանց դարձրեց տան տեր, հողի ու ջրի տեր, ապրուստի տեր:

— Ապրուստն ես ապրուստն ա,— գոհունակության պայծառ ժպիտը դեմքին ասում և ազատաշենցի Նիկոլը,— հնախ և մեր վոս-

կորները հանգստացել, վոր կասես մեզ վոչ մի բան չի պատահել, վոր կուլակները մեր մարմինը չեն կապտացրել:

1929 թվին եր, վոր բաղրակ Նիկոլը, Անուշավանը և մի քանի ուրիշները հիմք դրին Ազատաշենի «Ազատաշեն» կոլտոգին: Յեվ հիմա վողջ դուռը կոլեկտիվացած ե: Խոպան դաշտերի վրա մի քանի տարի յե աճում և արգեն բամբակենին: «Ազատաշենը» դարձել և բամբակադորձական, սերմարուծական կոլտնտեսություն: Ահա փուլած են բամբակի փարթոմ, մաքուր քաղահանված ու ծաղկուն դաշտերը: Բրիկադիր Խաչիկը ուշի ուշով հսկում և ջրվորներին:



Հոնքը, վիտալուսը յեվ Լալը Ալաաբեհի (Վաղայաթի քղան) կոլտնտեսությունում

*
*

Գյուղը դատարկ է: Մարդ չկա: Հսկում է միայն ժանկամասուրի յերեսաների ծով-ծվոցը: Բոլորը գաշա են դուրս յեկել, հունձ են անում, հասկեր են հավաքում: Մըր-ջյունի պես աշխատում են ամենքը: Կատա-ղի մրցում է գնում. ամեն մեկն աշխատում է շատ հավաքել, լավ հավաքել և շուտ բար-ձել ֆուրգոնը:

— Հը՛, ով մի կողմից գետնին թողնի, վայն յեկել է նրան,—կանչում է Զարիկը:

— Սուս կաց, գլուխդ քաշ արա, գործդ տես,—մեղունների պես վրա յեն պրծնում հասկ հավաքողները:

Կրակ ելին կտրել, կրակ: Նիկոյն ու Գրի-շան հրձվում են, բատրակ Անուշավանը յեղանն ուսին՝ ուրախ յերգելով արագու-թյամբ ինչպի կալն է վազում:

*
*

Ահա և կալը: Նրա չորս կողմը՝ կանգնած են զարու բարձր դեզերը: Որվա հնձածն արտում չի մնում, անմիջապես կալ է տե-ղափոխվում: Գարու արտը շատ հեռու չե կալից. ընդամենը 1000 քայլ հիլինի, վոչ ավել: Սակայն սայլը բարձում են կա-նոնավոր ու պինդ կապում, վորպեսզի վոչ մի հասկ և վոչ մի հատիկ գետին չթափվի:

—Անուշավան, հասանք կալը, բարձր ձայ-նով կանչում եմ յես:


—Նա հասկանում է, թե ինչ եմ ուզում ասել:

—Ընկեր Գաբո, կալն ամուր է, լավ ենք պատրաստել: Այ, պատմեմ լսիր: Սկզբ-րից քո ուղածի պես քերել ենք, հողի յերե-սի խոտերը քաշել ու տափանել:

— Հետո ջրել ենք ու տափանով նորից մի լավ, քո ուղածից դեռ շատ պնդացրել, դրանից հետո ել դարման ենք լցրել, նորից ամրացրել ու յերկար բարակ ստուգելուց հետո՝ նոր ենք միայն քյուլաշը կալը թա-փել:

—Բա անցյալ տարվա կալը,—հարցնում է մեկ ուրիշը:

—Անցյալ տարվա կալը... Ել մի հիշեց-նեք, են ուղղակի մնասարարություն եր, Գրիշա, մնասարարություն: Մենակ ջուր կապեցինք և առանց կալն ամրացնելու քյուլաշը մեջը թափեցինք, չթողեցինք վոր գոնե կալատեղը մի որ, կամ յերկու որ արևի յերես տեսներ և դրա համար ել ա-հագին հացահատիկ մնաց ցեխի մեջ թաղ-ված:



Բ Ե Ր Ք Ը

1.

— Հեյ...

— Հեյ, չմոռենա՛ք:

Ձայնելով դեպի մեզ եր վազում էր անտեսության դաշտերի պահակը: Գնում էինք արտերի յեզրով և յերբեմն շոշափում էինք ցորենի ձույլ հասկերը: Պահակը, մոռենալով մեզ, հանկարծ կանգ առավ: Նա շփոթվեց: Կարագուշն ու խիտ հոնքերի տակ փայլող աչքերը խոնարհվեցին դեպի: Ճիպտախ ծայրով փորվելու էր հողը, իսկ հետո թոնթորաց:

— Ներողություն...

— Ինչո՞ւ...

Հանկարծ մեր խոսակցությունն ընդհատեց մի ուժեղ ու դիլ ձայն:

— Ընկեր, պապիրոսիդ կրակը հանգցրու, նոր կալին մոտ արի:

Հետ նայեցինք: Կոմյերիտական «պաժառնիկ» Հովհաննեսն էր, վորն զգուշացնում էր դեռ 500 քայլ հեռավորության վրա գտնվող ինչ վոր մի կոլտնտեսականի:

Իմ ուղադրությունը գրավեց մի այլ հետաքրքիր տեսարան:

Կալը չորս կողմից շրջապատված է առվով և ջուրը շարունակ շրջան գործելով հեռանում է: Առվի ափին բոյ քաշած ջահել բարդիների վրա կախված են 5—6 հաս գույլ, վորոնց վրա գրված է «Պաժառնիկ № 1, 2, 3» և այլն:

Ահա մի այլ տեսարան: Հասկ ծեծող զառնախի մի կողքին կախված է մի գույլ:

— Կարծեցի թե կուլթներն էյիք կրում...

Ծիծաղեցինք: Ծիծաղեց նաև նա, բարի անհանգիստ, անհանգիստ՝ վորովհետև «վիրավորել» եր մեզ, կարծելով, թե մենք ել խուզողների շարքին ենք պատկանում: Հանգստացրինք նրան՝ ժպտաց, շոյեց բխերը:

— Գեղացի յենք, վճի՞նչ:

— Ո՞ւմ արտերն են:

— Մերը:

— Ձերը...

— Մերը՝ կուլտուրներ:

Հասկանալի յեր:

Դա նրա համար է, վոր յերը գոմեշները թրքեն, ջառջառ քշող Զոջոն իսկույն և յեթ վեղորոն բռնի դեմը, վոր կալը չկեղտոտվի:

Կալը շրջված էր: Զոջոն իր սև ու չաղիկ գոմեշները լծեց, սկսեց իր աշխատանքը քթի տակ յերգելով:

Յեյ, յեյ, Սիրուն ջան

Յեյ, յեյ, Ծաղիկ ջան

Հաշանը հավաքվել ա,

Մեր կալը խոնարհվել ա,

Մեր կալը ծանրացել ա,

Յեյ, յեյ, Սիրուն ջան...

Յեկ զգում ես, վոր Զոջոն իր այդ մեղմ յելեկեջների միջ իր հաղթանակի շեշտն է դնում...

ԴԱՐՈՑ ՀԱՆՈՐԱՅՆ

2.

Հովի հետ խոսում են արտերը: Գիտե՞ք քսվում են իրար, կարծես սիրո խոսք են փսփսում, կամ թվում է, թե նորահարսն և անցնում խառ միմեջանով: Բլուրներից իջնում է հոյն ու վազում է արտերի վրա և արտերը մեղմ ալիքում են, կարծես դեղնավուն մի ծով է ծվծվում արևի ջերմի տակ:

— Քիչ չէ, ծերը չես վորոշի...

Նա՛ կոլտնտեսության նախագահ Հակոբը: Վողկվորված, մատով ցույց է տալիս հեռու հորիզոնը: Ծիշտ է տեսում: Դժվար է տեսնել կոլտնտեսական արտերի ծայրը: Այնտեղ՝ Հակոբի ցույց տված տեղում չեն վերջանում նրանք: Այնտեղից նոր արտեր են սկսվում, սոցիալիստական նոր արտեր, վորոնք պատկանում են մի ուրիշ կոլտնտեսության: Յեկ արտերը ծիծաղում են, հասկերը ծիծաղում են:

— Հոյ, ... հոյ, հոյ, ... հոյ...


3.

Վոսկեղույն ցողունների մեջ դնում է դերանդին: Թույլ խշռոցով պատկում են հասկերը և հնձվորը հրճվում է զրանից: Հնձվորի ճակատին փայլում է արեւի և քրտինքի տաք կաթիլներ են զոյանում այնտեղ: Մագերի փոշոտ փունջը թրջվել է ջերմ քրտինքով և կպել ճակատին:

Դժվար է աշխատանքն արևի տակ, բայց ուրախ է հնձվորը:

— Ի՞նչ ես հնձում, Սեդրակ, ցորեն...

— Ձե, վոսկի յեմ հնձում, վոսկի...



Խաղաղի բերձահավաք Ղամարվան

Ճիշտ է ասում թխաչյա հնձվորը, կոլտնտեսական սիրված հարվածայինը: Հիրավի նա վռսկի յե հնձում, վոչ թե ցորեն: Կոլտնտեսականների համառ և բարեխիղճ աշխատանքով վսեկու պես թանկագին բերքովեցին նրանց արտերը: Յեվ բերքառատ արտերի այդ վոսկե ծիծաղով ծիծաղում են նրանք՝ ճլոխանի հարվածայինները:

Փոցխավորների ողակը մի յերգ է գլել և, արտվորը թռչում է կարծես այդ յերգի առկ: Նրանք ջահելաղջկերք են, նորահարսներ, նրանք յերգում են կոլտնտեսական արտերի ծով բերքի մասին: Յեվ թնդում է նրանց յերգի ձայնը.

Նա բերքը բարին ան,
Ցորենը՝ կալին ան,
Կնւլակի վաղեն թմմել ան...
Կալխաղի տարին ան...

Յերգի առկ աղելի արադ են շարժ վում փոցխերը, աշխուժի յեն դալիս գերանդիները և արտվորը հրճվում է խինդից և կըրկին ծիծաղում են արտերն ու հասկերը:

4.

Խորենը գնում է բարձած սայլի հետևից: Յերգ անիվը բարձրանում է քարի վրա և ընկնում, ցնցվում է սայլի բեռը: Սայլը գնում է, մեջքին առած հասուն ցորենի մի ահագին դեզ: Նրանից յերբեմն հասկեր են ընկնում գետին, ճանապարհի դեղնավուն փոշու վրա, Խորենը վերցնում է թափված հասկերը և թոնթորում.

— Ի՞նչ ել լալիս ե...

Դիմում ենք Խորենին:

— Չե՞ վոր դու հաշվապահ ես...

Խորենը ժպտում է: Նրա յերիտասարդ աչքերը լցվում են պայծառ ծիծաղով: Հետո նա լրջանում է և պատասխանում.

— Վարչության ապարատն ամբողջովին դաշտ է շարտված, ցերեկը տեղափոխում եմ, գիշերն ել հաշվապահական գործերը տանում: Բանվորական ձեռքերը քիչ են, իսկ բերքը շատ: Դաշտում թողնել չենք կարող:

— Ինքս նույնպես տեղափոխում եմ, — հնչում է կոլտնտեսական նախագահ Հակոբի ձայնը և հետո նա աղեկացնում է:

— Փաստ է, ղեկավարութունը չի առն ծում...

5.

— Կալը յեկավ...

— Կառավար բեր, Սուրեն:

Յեվ Սուրենը՝ ջահել մի կոլտնտեսական, թռչում է կառավարի հետևից: Քիչ հետո նա բերում է կառավար: Կամերն արձակում են: Մի գույգ յեղ լծում են կառավարին: Մի տասը հոգի, մեծ մասամբ պատանիներ, կանգնում են կառավարի վրա և աղաղ Կալսողը քշում է յեղները: Քիչ հետո կա եղ



Խաղաղի բերձահավաք Վաղպատի օրգանի Դուդսի կոյսնեստուբունում
Նկարում — հարվածային կոյսնեստուբի ՎԵՐԳՈՒՇ ՍՍՐԳՍՅԱՆԸ

կանգնած և արդեն կալաված, վոսկենատ
դարու վոչ այնքան մեծ բուրդը: Դա առա-
ջին բերքի առաջին կալն է:

Յերկու հազիւանգամ կոլտնտեսականներ
բուրգի մոտ են դնում քամհար մեքենան:

— Սկսենք:

— Ձե, քամին դիւ ա...

Պատասխանում է ավագ կալսողը, մյուս-
ները հնազանդում են:

Մի քիչ հետո կզաղարի քամին: Նրանք
կքամեն կալաված առաջին հացը: Վոսկենատ
դարու շեղը կզարկեն կալի մեջ: Գուցե
մեկը հանգես դա և ասի:

— Բաժանենք մեր մեջ...

— Ձե, առաջին կալից պետք է տանք
պետական պարտքերը...

— Այո, առաջին բերքը պետութեանը:

— Պետութեան շահերը մեր շահերն են...

Քամհարը կքամի առաջին բերքը: Ստաց-
ված վոսկենատ դարին կլցնեն պարկերը՝
և ոգոստոսի հինգին, լերը նոր կշողա վա-
ղորդյան աղջամուղջը, բրիգադիր Արտաշն
առաջին սայլաշարով դուրս կգա ծովափ
դուռից ու կըննի քաղաքի ճանապարհը:
Առաջին սայլի կատարին բաժրացած կփող-
փողա կարմիր դրոշմ, իսկ շուրջը նորեկ
կծիծաղեն արտերը, կծիծաղեն հասկերը:

— Հոյ...հոյ...հոյ...հոյ...

Յերբ հունձի 10-րդ որը լինի, գերանդին
կկտրի վերջին ցողունները: Գերանդիորը
կծպտա և կհնչի՝

— Վոսկու հունձը վերջացավ...

— Այ թե ելի կլինէր...

— Գալ տարի ավելի շատ կցանենք...

— Հա, տղերք հա...


Յեվ ալլես կչքանա արտերի ծիծաղը,
սակայն նորից՝

— Ջան...ջան...

— Ջան...ջան...

Ուրախ կծիծաղի բերքը:

Ա. ՇԱՀԱՍԶ



Կալն ավարտելուց հետո Արկիսի (Ալլամկերպու Շախան) կոլտնտեսականները
խնկնույժ են կազմակերպել

Մ Ե Ծ Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ի Ն

(ՓՈԲՐԱՔԱՆԴԱԿ ՊՈՆԵՄ)



ՆԱՆՆԵՐԳ

Համայնական դաշտերում,
Սիրով համայնական,
Տեսա ծովեր, յեռուն,
Վոսկե ծովեր տեսա,
Տեսա անախ հերկեր,
Մահուն բերքը տեսա,
Համայնական յերկիր,
Քո վերելքը տեսա:

Տեսա վերելքը քո,
Քո աճման վեհ դողը,
Վար բռնել ես անդարձ
Ղեկավարի ուղին,
Վոր ունեվոր լինեք,
Լինեք հոգով արի,
Դուք, վոր տերն եք հիմի
Անձայր մեր աշխարհի:

Իսկ նրանք, վոր ընկան
Հանուն լույսի, հացի,

Հատիկի պես մեռան,—
Վոր հողերում անծիր
Բարձրանան նոր կամքեր
Հաղթանակի յերգով,
Ու վողողեն կյանքը
Անպարտելի բերքով:

Ու թող յերգեմ հիմի
Մի եջ արնով գրված,
Ձեր պայքարի հիմնից
Հաղթական մի գրվագ,
Ի դիմաց քո գիզած
Անտրիտուր պարտքի,—
Պոետական խոսքի,
Պոետական պատվի:

1. ՔԱՆԴԱԿ ԱՌԱՋԻՆ

Յերկու զինվոր են նրանք
Մարտնչող մեծ վաշտում,
Յերկու պահակ հասարակ,
Համայնական դաշտում:

Նրանք հսկում են արթուն
Մինչև լուսարացը,
Վոսկեվողված արար
Յողաթարմ է, թաց է:

Բաց է նրանց հողին
Այն արտերի նման,
Մոռում են որ-որին
Հնձի հավաքման:

Պահպանում են արտը
Թշնամական ձեռքից.
Ու արթուն է հանդը
Նրանց զլարթ յերգից:

Քամին դաշտի վրա
Պարում է վար ու վեր,
Հասարակ են նրանց
Յերգերը, վառ ու վեհ:

Ու հպարտ են նրանք,
Հպարտ իրենց գործով,
Պահակներ անձնուրաց,
Ձինված կյանքի փորձով:

Վոչ մի հատիկ ընկած,
Յեվ վոչ մի հասկ ցորնի
Թշնամու ծիտն անգամ
Արտից չի թոցնի...

... Կուլակաթափ որերից
Տարիներ են անցել,
Բայց նա շնչում է ելի,
Աշխատում է անձեն:

Նստած է նա հաճախ
Հենց կոլխոզի շեմքին,
Կոլխոզում է նստած
Կեղծ ժպիտը դեմքին:

Նա կարող է մորմոքվել
Քո կոլխոզի բախտով,
Ուրախանալ, յերգել
Յերբ նա լինի հաղթող:

Բայց շրջում ե զգուշ,
Դանակը խոր պահած,
Ընթացքիդ ե հսկում,
Ու նայում ե առաջ:

Փսփսում ե յերկմիտ,
Ժպտում քթի տակից,
Ու յեթե դա ձեռքից
Կտա քեզ զնդակի:

Կուլակաթափ որերից
Տարիներ են անցել,
Նա շնչում ե նորից,
Աշխատում ե անձեն:

Թույլ ողակ ե փնտռում
Վոր բռնի ու թափ առ,
Սերմանում ե նա թույն,
Ու հնձում ե տազնապ:

Նա շրջում ե զգուշ,
Դանակը խոր պահած,
Մռթ անկյուն ե փնտռում
Ու նայում ե առաջ...

...Յերկու գիշվոր են նրանք
Մարտնչող մեծ վաշտում,
Յերկու պահակ հասարակ
Համայնական դաշտում...

2. ՔԱՆԴԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

Հնձի որեր են, հնձիբ,
Հունձգ վարար թող մնա,
Հունձգ թող արար ցնցի,
Հնձիբ, հնձի մեքենա:

Հնձիբ, հնձի մեքենա,
Յերգիբ մեր լեն հանդերում,
Թող վոչ մի հասկ չմնա
Կախողական արտերում:

Յանքս ենք արել լիասիրտ
Բազուկներով կոխողի,
Հասցրել ենք միասին
Սրեաշող ես վոսկին:

Յեւ թող թափվի քրտինքը,
Թող յերկիրը լիանա,
Ամուր լինի մեր հիմքը,
Հնձիբ, հնձի մեքենա...

3. ՔԱՆԴԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

Վերից արեն ե իր լույսը թափում,
Անձայր դաշտերի ծովերի վրա.
Հնձի մեքենան խրձեր ե կապում,
Դեղեր են կանգնում վրան առ վրան:

Բացվում ե որը, մթնում ե նորից
Ու մեղկանում են արտերը մեկ-մեկ.
Մշուշներ յելան հեռավոր ձորից,
Մշուշվեց որը, յերկինքը յերգեց:

Յերգեց յերկինքը զայրացկոտ, անմիտ,
Թափվեց անձրևի հորդահոս բողոք,
Խփվեց դեղերին մոլորված քամին,
Դիշերը մթնեց անհայտ մի վոխով:

Շրջում են նրանք, յերկու պահակներ,
Հսկում են ջուկ-ջուկ դեղերի վրա,
Ինչ լավ ե հիմի սենյակում քնել,
Ու թող անձրևը յերգի քո դռան:

Սիրած կնոջ հետ քչիչալ մոտիկ,
Խոսել կինոյից, խոսել քաղաքից...

...Ամրացնում ե Բենոն իր գոտին,
Անհանգիստ ե նա ետոր, անհանգիստ:

Ինչհեռ անհանգիստ...նա անհանգիստ չե,

Միթե չի յեղել որինակելի,
Կոխողի բաղդով մի՞թե չի շնչել,
Մի շյուղ չի գիշել նա շուն ու գելի:

Հակաների դեմ միշտ յեղել ե խիստ,
Սև աշխատանքով կոխող ե մտել,
Սիրվել ե վորպես ազնիվ կոմունիստ,
Հիմի ել արթուն պահակ ե կանգնել...
Ու ձայն ե տալիս ընկեր-պահակին,—
— Սահակ, էյ Սահակ...
— Եստեղ եմ, Բենոն...
Խավար՝ շնչում ե գիշերն անագին,
Յերկինքն ե յերգում իր հեռու ձենով:

...Ինչհեռ անհանգիստ, ումից ե վախում,
Ո՛ր, նա հիմար չե, լավ ե հասկանում,
Վոր թշնամիներ ունի արնախում,
Հենց են Գերորը, հենց ասենք՝ Սաքոն:

Բռնել ե նրանց, գողության տեղից
Գյուղ ե քաշ տվել, արել խայտառակ,
Քշել ե տվել հետո կոխողից,
Սպառնալիք ե լսել պատի տակ...

— Շուն շան վորդիներ,— մոտում ե Բենոն՝
Ու ձայն ե տալիս, ընկեր պահակին,
Յերկինքն ե յերգում իր հեռու ձենով,
Խավար՝ շնչում ե գիշերն անագին...

4. ՔԱՆԴԱԿ ՉՈՐՐՈՐԴ

— Եստեղ ես, Սահակ...
— Եստեղ եմ...
— Եսպես ել գիշեր...
— Ոյին...

Վախում ե քշի գեղերը,
Վախում ես չբռնե՞ք Սաքոյին...
— Գլխես ինչ Սահակ, ենպես վոր՝
Անցնում ե մաքովս հազար բան,
Եսպես մի գիշեր եր անձրևվոտ,
Բանդիտները սարից լջան:

Չեմ վախում, արեղ վկա,
Յես կյանքումս իսկի չեմ վախել,

Յեւ գիտեմ, վոր բանդիտ չկա,
Թաց դեզը չի կարող վառվել:

Իսկ եգուց կալում կը լինի,
Կը կանգնի շեղջը ցորենի...

— Հա-հա-հա,—ծիծաղեց Սահակը,
— Հա-հա-հա,—վախում ես, ընկեր,
— Հա-հա-հա,—ծիծաղը հատվեց,
Խաղաղում պայթեցին գենքեր:

5. ՔԱՆԴԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԻ

Առավոտյան գյուղը գտավ
Ընկած յերկու պահակներին,
Թշնամական յերկու գնդակ
Խնց նրանց մեր շարքերից:

Յերկու ժարտիկ հերոսական,
Յերկու քաջեր իրենց դիրքում
Նոր աշխարհի շեմքին ընկան,
Ու ճնացին կյանքի դրքում:

Եդպես ել դու... կռվիր անպարտ
Ընկիր, յերբ մեծ գործը ուղեց,
Ու քո մահով, մի ակնթարթ
Մեծ պայքարի ուղին լուսեց:

— Ու վորպես նոր Յոսիֆ Կոզան,
Վորպես Բենո, վորպես Սահակ,
Ընկիր մահով հերոսական,
Վորպես պատվի, փառքի պահակ...

ՎԵՐՋՆԵՐԳ

Համայնական դաշտերում,
Սիրով համայնական,

Տեսա ծովեր յերուն
Վասկե ծովեր տեսա,
Տեսա անափ հերկեր,
Անհուն բերքը տեսա,
Համայնական յերկիր,
Քո վերելքը տեսա:

...Ու նրանք, վոր ընկան
Հանուն լույսի, հացի,
Հատիկի պես մեռան,—
Վոր հողերում անծիր
Բարձրանան նոր կամքեր,
Հաղթանակի յերգով,
Ու փողոդեն կյանքը
Հասկի, բազկի բերքով...

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

1933 թ.



Բ Ե Ր Բ . .

ՅԵՐԳ ԱՐԵՎԻՆ

1.

Արարատյան շառագույն,
Հորիզոնի արգանդից
Յեղավ արփին զույնզույն
Մարի ուսին տվեց թիկն:

Յեվ շողերը վոսկենա,
Վորպես քողը նոր հարսի
Համբուրվեցին բաշի հետ
Հավերժաձյուն Մասիսի:

Յեվ ձյան շերտն է առկայծում,
Լանջից սահում դաշտն ի վար
Յեվ մարդ աշնպես է կարծում
Այնտեղ թափված է գոհար...

— Քաշիւ շողերդ արփի,
Մասի ձյունոտ կատարից,
Թավիշ քողդ ցած փոփր
Յեվ այս դաշտում վար արի:

Այստեղ մեր սիրտն է փռված
Անեղբական հույզով լի,
Անսանձ խինդով մի վառված
Դաշտն այս ջինջ է, հայելի:

Այստեղ բամբակ կա մաքուր,
Բոլշևիկյան արեոտ,
Թափիր քողդ վոսկենուր,
Վառիր պայծառ առավոտ:

Շողքերիդ տակ փայլեն թող
Վհիտ ջրերը Ջանգվի,

Թող բամբակը փթթող
Շողքերիդ հետ համբուրվի:

2.

Միշտս զարկում ե աշխուժ
Ինչպես քնարն իմ ձեռքում,
Այդ ովքե՛ր են, վոր անուշ
Մեղեդիներ են յերգում:

— Կոլխոզական խմբերն են,
Դաշտում հանաք են անում,
Նրանց ամենքի բերանին՝
Վերելքի յերդն է թռչում...

Ո՛ր, շողերդ թափիր վար,
Վոսկեղոծիր յերգերն այդ:
Զարկում ե սիրտս անդադար՝
Իմ հոգումն էլ ե լուսայգ:

ՀՐ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ



Կալն տվա՛րսեղաց հետ Արևիսի կոլսնեստականները խնջույլ են կազմակերպել

„Ի Մ Ը — Կ Ո Լ Խ Ո Ձ Ի Ն Ը“

«Բնօնեցե՛ք... փախա՛վ Սաֆոն Խելագար».

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ



1.

Կոլխոզի հացի հսկա դեղի մոտ
Պահակ է կանգնած Միկինյան Սաքոն:
Լուսինը ծածկեց յերեսը քնկոտ
Վաթսուն մետրանոց ամպի վերմակով:
Կոթավ խավարում ճամբան քարքարոտ
Վոնց, վոր քրքրված կանեփե չվան:
Խավարը ծածկեց անտառ և արոտ
Միլիոն մետրանոց վերմակի նման:
Կանգնած է Սաքոն արթուն պահապան
Կոլեկտիվ բերքի յերկնաքեր սարին,
Ու ծավալում է գիշերն անխափան,
Իր ծբագիւրը մուխ ու վիթխարի:
Դեղի չորս բոլոր մոտիկ ու հեռու
Վխտում է գիշերն ինչպես թշնամի:
Ու փափքսուկի շուկ և բերում
Մթնում փան յեկող գիշերվա քամին:
Ո՞վ է գիշերվա ես խավար ժամին
Թափառում զրսում զգուշ, նենգավոր...
Ու մատներն ամուր սեղմած հրացանին՝
Շրջում է Սաքոն դեղի չորս բոլոր:

2.

Ու հետո կրկին կանգնած դեղի տակ՝
Ուղարն է դիտում տափնապախրոով:
Գյուղն է դեմ ու դեմ հտալիտ, այլանդակ
Ուղարին ձուլված իր չարդախներով:

Նայում է Սաքոն անձե խավարին:
Ղև խավարի մեջ նշմարում է նա
Իր տունը՝ շինած հին գյուղի ծերին
Նոր թաղամասի սլանի վրա:
Փակ է: Լույս չկա լուսամուկներում:
Իր սիրուն Մաթոն գնացել է սար՝
Կոլխոզֆերմայում վոչխար կթելու,
Աշխոր անելու մարդու հավասար:
Ժպտում է Սաքոն...հպարտ է Սաքոն:
Ամբողջ իր կյանքում յեղել է հոտադ:
Յերազել և զուր սեփական մի կով:
Սեփական յեղներ, սեփական ոթախ...
Իր նոքարական ստոր վիճակից
Նա վեր բարձրացավ, դարձավ գրագետ:
Ու հենց վոր յեկավ կարմիր բանակից
Կոլեկտիվ մտավ մոր ու կնոջ հետ:
Դիմացավ բոլոր սուր քամիներին,
Վոր յեկան-անցան կոլխոզի գլխով:
Աշխոր շատ արավ և անցյալ տարի
Նոր տուն կառուցեց ու գնեց մի կով:
Յե՛վ կովի համար խոտ քաղել Սաքոն
Դիզել է սիրուն իր քարե տան քով:
Ծեր նանն ու Մաթոն գնացել են սար
Աշխոր են անում նրան հավասար:
Իսկ ինքը—Սաքոն հսկում է արթուն
Կոլխոզի հացի առաջին դեղին:

Ու յերիտասարդ պահակի սրտում
Հրճանք ու տափնապ իրար ձուլվեցին:

3.

Տափնապախրոով կանգնած է Սաքոն
Յերկու դեղերի սահմանագծում:
Կայծակը հեռվում իր շեկ մտրակով
Սարի վիթխարի կողերն է ծեծում:
Կողքին կոլխոզի դեղն է սարի պես,
Պահակն է Սաքոն եղ հսկա սարի:
Իսկ հեռվից ուրիշ մի տուն ու մի դեղ
Կանչում է նրան. ասում են. արի...
Արի աչք ածի, գող է մտել տուն,
Մոլորած մաքին քո խոտն է ուտում,
Կուլակն է շրջում, վոր դեղդ վառի...—
Եսպես են կանչում նրան խավարից...
Չեմ դա, մի կանչի,—ասում է Սաքոն,
Սիրա մի պղտորի, պստիկ սատանա,
Տես կանգնած է սա սարի հասակով...
Իսկ ձեզ, թզուկներ, ով կմոտենա:
Բայց կոլխոզի դեղն այրելու համար
Կճարեն, նրանք համ սիրտ, համ բենդին...
Ու կայծակն իրա խարազանը վառ
Խաղացրեց մթնում մեկի յերեսին:
—Ո՞վ է գիշերով մոտենում դեղին,—
Չեն տվավ Սաքոն ամպի վորոտով:
Փախչող քայլերի ձայներ լսվեցին,
Ստվերներ անցան չայրերի մոտով:
Սաքոն կատաղի յետիվեն վազեց
Ու դարձավ ելի... բան չի յերևում:
Կայծակն ես անգամ գիշերը կիսեց
Սաքոյի փոքրիկ դեղի վերեվում:

Ու խոռովահույզ լսում ե ...ելի...
Այն ով ե սուլում... Բամբուն ե հիմար...
Թե սե թշնամին նշան ե տալիս
Կոկեկտիվի դեզն ալբելու համար:
«Տաս գնդակ ունեմ. փորն եմ շարելու,
Հապա թող դեզին մեկը մոտենամ...»—
Սաքոն ինքնիրեն դաժանվում ե լուռ
Ու դեզի բոլոր շրջում ե անան:

4.

Կայծակն ե արդյոք... նայիր, տես,
Սաքո...
Կայծեր են թռչում... քննե՛ք ե պատահել.
Ծուխ ե բարձրանում անեղ հասակով..
Սաքո՝ քո փոքրիկ դեզն են հրդեհել:
Ու Սաքոն խայթված պոկ յեկավ տեղից՝
Վոնց վոր սարից վար գլորվող մի ժայռ..
Կաց,—մի ձեն սրտում գոռաց կատաղի,—
Սպասիր, Սաքո, սպասիր... յե՞տ դառ..
Թվաց մի բույս—կոխողի դեզի
Հրդեհից արդեն յերկինքն ե շիկնել..
Ու խավարի մեջ, մութ, ժանտատեսիլ,
Վխտում են անթիվ հրդեհաձիգներ..
Յեվ գնդակահար դազանի նման
Նա մոնչալով յետ վերադարձավ
Ու հսկա դեզի շուրջը մանեման
Պատվեց ինչպես անավոր կայծակ:
Վոչ ով չերեվաց խարդախ խավարում
Բացի խավարից կույր ու անդուման:
Դեզը կանգնած ե մենակ, պազարյուն
Մահն արհամարհող հակայի մնան.
Իսկ մի քիչ հեռու մութն ե պատովել,
Վոճիրն ե շնչում կեպտիշերային:
Կայծերը ցրում, թոցնում ե վեր
Հրդեհների ձախ ուղեկից քամին:
—Հեյ-հեյ... ոգնեցե՛ք... ոգնեցե՛ք...
ոգնեցե՛ք..
Կանչում ե Սաքոն խելագար թափով:

Բայց նրա կանչին իբրեւ պատասխան՝
Շնեքն են միայն հաջում խուճապով:
Ե՛յ—... կոխողներն ե... ընկերներ...
Վասիլ...

Կուլակներն հստեղ դեզ են հրդեհում:
Վառվում ե տո՛ւնըս, նոր տո՛ւնըս... հասիւր..
Գոռում ե Սաքոն, դոչում ե... բայց մու..
Բամու, ամպերի սայլ ու վորոտում
Խլանում ե սուր տազնապը նրա:
Կրակում ե նա դեպի գյուղ ողում,
Կրակում ե նա հրդեհի վրա:
Վոչով չի լսում... Այս անեղ ժամին,
Յերբ ծառերի հետ վիճում ե քամին,
Կայծակն ե շաչում պատուհանի մոտ,
Ամպն ե տրաքում անեղավորոտ,—
Բաղցը ե այդ հզոր աղմուկի ժամին
Տանը քնանալ անխոռով, խորունկ,
Մոռանալ մի պահ, վոր սեվ թշնամին
Շրջում ե հիմա գրսի ժխորում:
Բաղցը ե այդ ժամին քնել՝ բեզարած
Որվա պալքարից ու աշխատանքից:
—Հեյ-հեյ... նետվում ե Սաքոն յետ առաջ.
Բայց գյուղը հեռվում լուռ ե հանդիստ:
—Հեյ-հեյ... Սաքոյի ձայնը խոստում
Հետ ե դարձնում գյուղի մոտ քամին,
Առնում ու դոռով փախցնում ե դաշտ,
Վոր չհասնի վոչ մի բարեկամի:

5

Վոչով չի լսում տազնապը, Սաքո,
Վոչով չի տեսնում տազնապը ահագին
Վառվում ե ենտեղ դեզն ու տունը քո,
Դու քարացել ես պոստում պահակի:
Գուցե բոցն արդեն հարձակվել է ներս
Կանաչ փեղկերից-վայրի կառվի պես
Ու պարզած իր թեժ, իր ազան լեզուն
Բո հարսանիքի անդուկն ե լիզում..
Թանկադին շորերն ստացար նվեր

Իբրե հիմնադիր ու հարվածային:
Մետաքսե դեյրան յերեկ ես գնել
Բո՛ պատգամավոր սիրուն Սաթոյին..
Բոցերը գուցե մաղցում են վեր
Ոճերի նման վորոք. կատաղի:
Վազուց են գուցե նրանք փաթաթվել
Հաստ գերաններին քո առաստաղի:
Վոչը կգառնա կրակի բաժին.
Սեղան, մահճակալ, գարդ ու տեղաշոր,
Վոչինչ կմնա պատերից բացի,
Կդառնաս կրկին հետին չքավոր:
Հերիք ե. Սաքո, հասիր ոգնուլթյան,
Մաստկանում ե, տես, սրիկա քամին,
Յրիվ ե տալիս կայծերը քո տան
Թանձր խավարում գոթոթ թշնամին..
Ու Սաքոն կրկին պոկվելով արագ
Թռչում ե դեպի տունը սեփական,
Բայց կանգ ե առնում քսան քայլ չարած.
Լսելով ներքին մի յերկաթե ձայն,
Սպասիր... լսիր... լքում ես, Սաքո..
Դաժանանում ես քո բրիգադին..
Նա, վոր հրդեհեց դեզն ու տունը քո,
Սպասում ե դեռ մթում դավադիր:
Նա կրակ տվեց այն փոքրիկ դեզին,
Վոր այս մեծը դու լքե՛ս, հեռանա..
Բայց ումն ե, Սաքո, դեզը կոխողի,
Յեվ ով ե այնտեղ մթնում դարանած
Յեվ նա կատաղի մի պոռույտ արավ
Հսկա դեզի շուրջը—անեղ փնչոցով—
Վոնց խոցված գազան մի վորսի ծարավ
Բայց լուռ ե... մթնում չի շարժվում վոչով:
Հրդեհն ե միայն պատում անարգել
Ամպոս գիշերվա վարագույրը մութ,
Փոքրիկ խոտի դեզն արդեն ճարակել,
Բռնել ե արդեն դուռ ու լուսամուտ:
Բոցն ե բարձրանում ազադակի պես,
Կայծերն են ձաթում նման ձիգերի,
Անսիրտ Սաքոյին կանչում են ասես,

Ասում են, Սաքո, ոգնության արի...
 Մի գնա Սաքո,— ձայնում է ելի,
 Սրտի խորքերից ուրիշ մի Սաքո—
 Թշնամին է քեզ կանչում, ձեն տալի
 Վոր դու մոլորվես, լքես պոստը քո,
 Վառվում է ենտեղ մի բուռ խոտի դեզ,
 Գուցե է փոքրիկ տունդ սեփական,
 Բայց եստեղ, Սաքո, լեռնացել է, տես,
 Քո ընկերների է քո ապագան...
 Եստեղ է դիզվել քո բրդադի
 Գրախնքը, կյանքը, տանջանքը աղնիվ,
 Եստեղ է Սաքո, կոխողի պատիվն
 Բռնազանակը քո սոցիալիզմի...
 Հիշում է Սաքոն, կարծես յերգում,
 Գարնանացանի որբերը դաժան,
 Յերբ վոր կիսաքաղց մարդ ու անասուն
 Պայքարում էին հողից անբաժան:
 Յեզ եղ պայքարի բերքը սրբազան
 Սարի պես ետոր դիզված է կալում:
 Մարդիկ վատահել ընտրել են նրան
 Ես յերկնակառկա դեզին հակելու:
 Սա ույժն է, Սաքո քո բրդադի,
 Սա սոցիալիզմի բերդն է, յերկնահաս,
 Փաշտպանիր, Սաքո, հսկիսի պատիվ,
 Բիշ հերոսների համար է պահած:
 Թող թուներդ վառվի, թող վոռնա քամին,
 Թող սիրտդ վառվի տանդը բոցերում,
 Զոզի, ամբառնա, վոր չար թշնամին
 Ել տեղ չգտնի նրան խոցելու...
 Ու յերազում է Սաքոն խավարում
 Հաղթական ժպիտն ընկեր Ստալինի:
 «Տեսե՛ք,— կասի նա,— վրնց են
 պայքարում

կոխողներին, ահա հապեն կլինի...
 — Հեյ-հեյ ոգնեցե՛ք... — կանչում է
 Սաքոն

6.

Վերջին ճիշերով խոստատած բերի...
 Մնացել է միայն յերեք գնդակով,
 Ել ինչպես ողում է դուր արձակի:
 Ինչպես արձակի... շուրջը գիշերում,
 Վխտում են անթիվ հրդեհաձիգներ,
 Ու լուցիկ պահած՝ համառ համբերում,
 Վոր նա արձակի վերջին գնդակն էլ
 Ու խելագարված նետվի դեպի տուն,
 Վոր սեփական տան կրակը մարի,
 Թողնի անպաշտպան ամայի դաշտում
 Այս կոխողական բերդը վիթխարի:
 Նայում է Սաքոն մարմող կակիծով
 Իր տան բոցերին յերկինքը լիզող:
 Մի հարց է սրտում մորմոքում անձեզ,
 Վժրտեղ է Սաքոն, ...առտեղ, թե այնտեղ
 Ախ, մինչև հիմա կար յերկու... Սաքո,
 Մեկն այստեղ մնաց— իր պոստի վրա,
 Իսկ մեկը հիմանդ, խելագար հոգով
 Սլացավ այնտեղ ու նետվեց կրակ...
 Այրվում է նա իր տան բոցերով
 Ու մի քիչ հետո կդառնա մոխիր...
 Իսկ սա կանգնած է դաժան ու հերոս.
 Ու դավն է ծղրտում ստոր վոտխի:
 Ե՛յ... կայծակն էլի հրդեհն մատով
 Պատուեց վարագույն անհուն խավարի:
 Մի սովեր անցավ չափարի մոտով
 — Ո՞վ ես... վորտաց Սաքոն — մոտ՝ արի
 Բայց մարդը փախավ, ձուլվեց խավարին
 Ու չարագուշակ սուլեցին հեռվում...

Զոքում է Սաքոն տաքնապով արի
 Բռնառյուններին նշան է բռնում:
 Վորտաց գնդակն ու կայծակն էլի
 Պատուեց գիշերվա դիմակն անթափանց:
 Տեսավ նա կրկին կոխողի կալի
 Շուրջը ժուռ յեկող մի քանի մարդկանց:
 Հեռվում կայծ ու բոց էլի սասակացան,
 Տունը փուլ յեկավ ձայթ ու վորտում,
 Ու չորս կողմ հազար թրերի նման
 Կայծակները շեկ մուծն են թրատում:
 Նորից է Սաքոն կրակում, դոռում
 Ու տաքնապահույլ նետվում դեռ ու դեն.
 Վերջապես քամու, ամպի ժխորում
 Ծանոթ ձայներ է լսում նա արդեն,
 — Սաքո... տնաքանդ... նոր տունդ վառվեց
 Ի՞նչ ես քարացել, կանգնել դեզի մոտ...
 Մեկը կարեկից մթնում ձայն տվեց
 Ու հավաքվեցին տղերք վարանոտ:
 Վառվեց... յես տեսա... վառվեց... ի՞նչ անեմ...
 Մղկրաց Սաքոն— հոգնած ու դաժան,—
 Տունըս վառեցին իմ աչքերի դեմ...
 Յեզ յես չհասա տանս ոգնության...
 Ընկերներն այդ նոր, մեծ հերոսության
 Առջև խոնարհված մտածում են լուռ:
 Նրանք արժանի խոսքեր չգտան
 Իրենց հերոսին փառաբանելու:
 Միայն նախագահն զգուշ կմկմաց
 Մխիթարանքի մի քանի խոսքեր.
 — Սաքո, քո աղնիվ աղաքի դիմաց
 Բեզ կտանք է տուն... է անասնակեր:
 Ինձ,— պառսխանեց Սաքոն, ծանրաձայն
 Սիրտ ամրացնելու բաներ մի խոսի...
 Յես նոր հասկացա ես գիշեր մի բան.
 Պաշտպանել եմ յես ի՛մը— կոխողներ:

Լ Ի Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Առունը խնայարարն է բերում
Դեղին մրգեր հոսավեհ,
Վողջո՛ւյն ձեզ բազմաբեղուն—
Ծառեր իմ ծանրաբեռ:

Յերգում է այգիներում
Մրսերի յերգը հորդուն,
Վողջո՛ւյն քեզ, մրգի բուրմունք,
Առուն իմ վոսկեհունք:

Ու արսերում հեռու
Կոլեկսիվ կամքը մեր,
Յերգում է վոսկեվորիկ
Լիություն ու սեր:

Առունը լիություն է բերում
Դեղին մրգեր հոսավեհ—
Վողջո՛ւյն քեզ բազմաբեղուն
Համայնական յերկ:

Գ. ՄԱՍԵԱՆ

Գ. ԲԱԺԻՆ

ԻՆՉ ՏՎԵՑ ԱԶՆԻՎ ՅԵՎ

ԲԱՐԵԽԻՂՃ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԱՅՍ ԲԱԺՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ

- | | |
|--------------------|-----------------|
| 1. ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ | 6. ԱՂԱՎՆԻ |
| 2. ՀՈՎՀ. ՇԻՐԱԶ | 7. ՄՐԱԶԻ |
| 3. ԱԼԱԶԱՆ | 8. ԱՆ. ՏԻՏԱՆՅԱՆ |
| 4. ՀՈՎԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ | 9. ՍՐ. |
| 5. Ա. ՇԱՀԲԱԶ | 10. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ |

Ք Ե Ռ Ի Դ Ա Վ Ո Ն

Վոչ քո մասին, Հայկ վոչ Ա. Երբի և վոչ տղակավար Մարինայի և վոչ ել նույնիսկ Մխոյի «թուղցիկ բրիգադի» տղաների մասին և, վոր ահա գրում եմ, այլ այն մարդու մասին, վորը խրճիթում խոնաված բազմության մեջ իմ աչքին չեմ ընկնում, մինչև ներս վազեց գոմի տահակը և լեղապատառ կանչեր։

— Քեռի Դավո, քեռի Դավո, են անիրավ «խմբապետի» կապ փրթավ. յեւիւր, թե չե, Արաբ ենոր փորփորող կթափա։

Յեւավ միջահասակ և ամրակազմ մի մարդ, մեկը նրանցից, վորոնք լրացնում են քառասունը, հետև են թողնում հիսունը և նույնիսկ վաթսուներե հասնելով չեն փոխում իրենց քայլվածքը, դեմքի արտահայտութունը և առհասարակ իրենց։ Նըրանք ունենում են թունդ սև և ձյունի նման սպիտակ մազեր, և սևն ու սպիտակն իրար խառնած, նրանք ապրում են դեռ յերկար, և այն տարիքում, յերբ ուրիշ ծերունիներն ունենում են զառամյալ մարմին և հենվում են ցուպին, — այդպիսիները դեռ առույգ են և ունեն արթուն միտք։

Յեւավ այդ ամրակազմ մարդը, վորն եր ինքը՝ Քեռի Դավոն, նրա հետևից դուրս յեկավ նաև Մխոն, վորին անվանում են «Կես կոիվ», վորովհետև նա հանդարտ չի կարողանում խոսել և նույնիսկ, յերբ ժողովում խոսք ե առնում, նույնիսկ այդ ժամանակ թնդում ե նրա ահագնադորդ ձայնը և թվում ե, թե գոռում ե մի ամբողջ լեռ։ Յես ես դուրս յեկա «գլխին», ինչպես ասում

են այդ գյուղում, «Կես կոիվ» Մխոն արդեն վորոտալով սլանում եր, և լսելի չե, թե ինչպես նա անարգում եր ինչ վոր լողը Միհրանին, նրան անվանելով «կուլակի թեկնածու» «կոլխոզի տիգ» ու այլ այսպիսի խոսքեր։

Իսկ քեռի Դավոն գնում եր միջահասակ մարդու սովորական քայլերով, այն վարժ քայլով, վորով այդպիսի մարդիկ լուսաբացից մինչև որ-կեսոր կարող են կտրել լեռներ ու ձորեր և նոր միայն նեղանալով շոգից և վոչ հոգնածությունից՝ պառկել մի թփի ստվերում։ Դժվար չեմ գուշակել, վոր «Կես կոիվ» Մխոն պիտի փոթորիկ գցեր և ավելի բարձր վորոտալ լողրերի, ծույլերի, ավարանների և այլ այդպիսի մարդկանց հասցեյին և հենց այդ ժամանակ պիտի վրա հասներ Քեռի Դավոն և լուռ ու մունջ գործ աներ։

Պատահել եր ահա թե ինչ։

«Մմբապետը», վոր մի կիսախելագար յերիտասարդ ցուլ եր, անպատիվ համարելով յեղների շարքը դասվել և կամ գայթակղած այն աղնիվ և ընտիր կերով, վոր ախտապանները լցրել էյին ձիերի առաջ, կտրել եր վզի կապը և հարձած արջի նման ծառս յեղել կոլխոզի ընդարձակ գոմում, վորից և վախեցած պահակը վազել եր հավաքի։ Ձիերից վոչ մեկը նրան մոտ չեթողնում, իսկ Արաբը, չքնաղ մի նժույգ, դեռ շարունակում եր զայրագին վրնչալ, դոփելով գոմի սալ քարերը։

Յերբ Քեռի Դավոն ներս մտավ, գոմի մեջ

հետևյալ պատկերն եր։ Գոմի մյուս ծայրին կիսամութի մեջ ցուլը կռացրել եր վիզը և բռնում եր. մութի մեջ բոցկլտում էյին նրա արնախառն աչքերը։ «Կես կոիվ» Մխոն դռան մոտ ադմկում եր ավելի բարձր, քան վրնջում եր Արաբը, Յեղների և ձիերի յերկար շարքերը, վորոնց վերջը չեմ յերեկում. հանդարտ խժուռում էյին կերը։ Միայն մի յերիտասարդ քուռակ, վորին ավելի կվայելեր սնվել՝ որինակ առնելով հասակավոր և պատկառելի ձիերից, — շղային անհանգստությամբ ցցել եր ափանջները և ուղում եր ցույց տալ, վոր ինքն ես բաժանում ե յերևելի նժույգ Արաբի գայրույթը։ Իսկ յեղներից և վոչ մեկը վորևեկերպ ցույց չեմ տալիս իր վերաբերմունքը և նույնիսկ կարելի չե ասել, վոր նրանք ատելությամբ էյին լցված դեպի «Մմբապետը», վորին որերից մի որ պիտի ամորձատեյին և նա ես պիտի դառնար չարքաշ յեղ։

Քեռի Դավոն, առանց փոխելու քայլերի ութմը, անցավ գոմի յերկայնքով և ուղղակի մոտեցավ ցուլին։ Նույնիսկ «Կես կոիվ» Մխոն սարսափից լռեց և այլևս չվրնջաց Արաբը։ Քեռի Դավոն նման եր գազաններ սանձահարողին, վորն աներկյուղ մտնում ե առյուծների վանդակը և նույնիսկ տառկում ե առյուծների արանքում։ Բայց Քեռի Դավոն ցուլի մոտ չպառկեց. նա բռնեց «Մմբապետի» ափանջներից և առաջ յեկավ՝ հետևից ցուլը։ Ապա նա ցուլին հրեց յերկու պատվ յեղների արանքը, առավ ձի խոտից

հյուսիսած թելի կծիկը, գրպանից հանեց կեմրարը և զարմանալի արագությամբ ու ափելի զարմանալի վարպետությամբ վոլորեց ափսիսի ամուր կապ, վոր հուր-հա-վիտայան «Նմբապետը» չեւ կարող քանդել։ Նա յերկաթե սեպից կապեց ցուլին և մի-այն այդ ժամանակ նորից «փոթորիկ փրթալ» Մխոն ու դուրս գնաց։

Այդ ժամանակ Քեռի Դավոն վոչ մի բառ չարտասանեց և միայն, յերբ կապեց ցուլը, գրպանից հանեց ծխախոտի տուփը և հաստ մատներով փաթաթեց մատից ափելի հաստ ծխախոտը, նոր միայն, և այն ել կես հեղ-նանքով, ասաց գոմի պահակին։

— Հաբա հորի՛ ժողովքին կըսեյիր ընցեր և Քեռի Դավոյի ժամանակ, — և թեթե զարկեց նրա մեջքին. — սովորի, տղաս, սովորի . . .

Ապա մոտեցավ մի ծանր ձիու, վորն ահա-գին աղմուկով կրճտացնում եր ատամները, կարծես գարու հատիկները փշրվում էյին ջրաղացի քարերի տակ, — և շոյեց ձիու բաշը։

— Քրտնած ե ձին, տղա, — և ասաց նաև, վոր գոմն արդեն նեղ ե, հարկավոր ե ձիերի նոր գոմ կառուցել։

Քեռի Դավո, դու այս բրիգադի մեջ ես։

— Ձե, յես դաշտավար ես։

— Հապա ինչու եկար գոմը։

— Ձե ես ել մերն ե, — և ձեռքը մեկնեց ձիերի ու յեղնների կողմը, — բոլորը իմ ե։

Վորքան սեր, վորպիսի կամք և վճռա-կանություն կար նրա խոսքերում։

«Բոլորը իմ ե», և այդ ամենովին ել այն ազահությունից չեւ, վոր ունեւ հին գյուղի աշխարհակալ հարուստը. այդ նոր գիտակ-ցության և նոր վերաբերմունքի առաջին շո-ղերն են, վորոնք թափանցել են նրա ուղե-

ղը և այնտեղ փայլում են նոր իմաստով։ Քեռի Դավոն գնաց։

Գոմի պահակը, վորն իսկույն թողեց բարբառը, պատմեց այն ճանապարհի մա-սին, վորով նրանք ընթացել են, սկզբում չորս տարի առաջ՝ միայն տասներկու տուն, վորոնք ունեյին միայն մի յեղ և վորոնց ծաղրելով անվանում էյին «չլուտի խումբ»։ Ահա այս գոմը և նրա բակը հոչակված ի-ջևման եր Շարուրից և Որդուբաթից յեկող քարավանների համար։ Այժմ այդ ծածկերի տակ հանդիման են մեքենաները և մի ամ-բողջ գումակ։ Նրանք էյին տասներկու տուն և ունեյին միայն մի յեղ. առաջին հիմնադիրները մեջտեղ դրին ինչ վոր ունե-յին՝ վերջին պարկ գարին ու նույնիսկ փշուր ձավարը փոխեցին դարու հետ, և հա-մայնական առաջին դաշտում սերմնացանը ի բուռով շաղեց սերմը։ Հետո յերեսունից անցան և այս ձմեռ նրանք արդեն հարյուր վեց են, և հիմնադիրները պարծանքով նայում են հետ՝ չորս մեծ տարիներին։

Պահակը պատմում եր այդ տարիների մասին, և այդ թվում եր մի պարզ պատ-մություն. և լեռ չի փլվել, չի յեղել ամենի պատերազմ, հրաշք չի յեղել, և ահա քըր-տինք են թափել հողի մշակները և նրանք, վորոնք ունեյին միայն մի յեղ, այժմ իրենց վաստակով տեր են դարձել յերամակի և նախիրի, սայլաշարքի և մեքենաների, ունեն ցորեն և գալի, կանայք կով են կթում, իսկ նաղարաչի Զոյոն նրանց զվարճացնում ե և թնդում ե «գյոնդը»։ Այդ թվում եր մի պարզ պատմություն, և դժվար և հաղորդել այն ներքին ուրախությունը, վորով համակ-ված եր այդ յերիտասարդը, ինչպես այն մար-դը, վոր խեղճության, հոգու ալյապեման և ծայր չքավորության անդունդի ափից ան-

դարձ անցել ե մի ուրիշ ափ և ուրախու-թյունից կոխում ե այն հողը, վոր իրենն եր, բայց իրեն չեւ կերակրում, տեսնում ե նույնպիսի մի ձմեռ, յերբ լեռները ձյունոտ են, ահա դարձյալ Արթուրի ափից բարձրա-նում ե տաք գոլորշի, բայց իր դռանն այլ-ևս չի չոքել սովի ահը և նրա վաղը չի յե-րեկում վորպես անոգնական կրակ մթադ-նած բուքի մեջ, այլ բացվում ե վորպես նորոգ գարնան առավոտ։ Լեռ չի փլվել, բայց սասանել և հիմքից ճեղքվել ե սեփա-կանատիրության դարավոր բերդը. Քեռի Դավոն, առաջին կոտնտեսականներից ա-մենից ալիները, կարող ե նայել նախիրին և յերամակին ու հպարտությամբ ասել, վոր «բոլորը իմ ե»։ Յեղել ե և դեռ շարու-նակվում ե հաղթական մի կոխվ հողի մշակ-ների խեղճության դեմ ե նրանց լուսավոր կյանքի համար, մի կոխվ, վորի բովում թրծվում ե ինքը մարտիկը։

Խրճիթում հավաքվածների խորհրդ-դակցությունն ափելի նման եր պարզ գրույցի, բայց այդ հասարակ խոսքերը վորոշում էյին հարյուրավոր մարդկանց անելիքն ամբողջ տարվա ընթացքում։ Վորոշում էյին այս տարվա նորմաները և միաժամանակ ուրվագծում էյին կոլեկտիվի վողջ արտադրության սլանը։ Նստել էյին, ով ինչպես ուզում եր, և միայն նրանք էյին սեղանի մոտ, վորոնք զբոսում էյին։ Նույնիսկ մեկը խրճիթում գնում եր գալիս և յերբեմն բարձրացնում եր գլուխը, այդ ժամանակ նա հայտնում եր իր գիտողու-թյունը, և նրան ևս լսում էյին այնպես, ինչպես մյուսներին, վորոնցից վոմանք նստել էյին պատի տակ, վոմանք՝ վա-ռարանի շուրջը, իսկ մի քանիսը հաստ արկղի վրա, վոր անհայտ ե, թե ինչու յեւ

այդտեղ: Ամենքից գեղապետը տեղավորվել էր մի թիկնեղ մարդ, նա չոքել էր և միևնույն ժամանակ համարյա պառկել մեջքի վրա, այնպես վոր նրա գլուխը ցցված ծակների հետ հավասար էր:

Յեւ ներկաները, վորոնք կոխողի ակտիվ ելին, նրա առաջատար ուժը, բոլորը՝ համարյա առանց բացառութեան խոսում էին խելացի ծանրութեամբ: Ննջող չկար, ինչպես գլուզական այն ժողովներում, յերբ գեկուցողի միալար ձայնից կախվում էին ունկնդիրների հողնած գլուխները և արդեն մի անկյունից լսվում էր մրափի աղմուկ, կարծես այն կողմից գնում էր մի մենավոր սայլ և սայլը խուլ ձոնչում էր: Պատասխանաբանութեան զգացումի հետ, նրանց խոսքերի մեջ կար մի խստութիւն. և յերբ, լուռ ելին՝ այդ լուռութիւնն ևս վկայում էր, վոր մարդիկ կշռում և կշռադատում են: Յեւ նույնիսկ «կես կոխի» Մխոն այլևս յերկար չեր աղմուկում, այլ բավականանում էր, ընդհատ բացականչութիւններով, վոր թեպետ վորոտածայն էին, բայց և այնպես խելացի էին: Իսկ քեռի Դավան արդեն զբաղվել էր իր տեղը և լայն դանակով տաշում էր մի սեպ, տաշում էր և մտածում:

Հեշտ չի այն աշխատանքը, վորի համար նրանք ուղեղ էին մաշում: Չյունի բարակ շերտի տակ լուռ քնել են այն դաշտերը, վորտեղ վաղը նրանք պիտի քրտինք թափեն: Իսկ հարկավոր է ավելի լավ կազմակերպել համայնական դաշտերի վարը, հարկավոր է բարձր բերք ստանալ: Հարյուրավոր հեկտար դաշտերի վրա աշխատելու յեն տարբեր մարդիկ, և ահա պետք է այդ մարդկանց դասավորել այնպես, վոր ստացվի առավել արդյունք: Կա բխով Տիգրան, կա և Թիմարցի Տիգրան, կա Տիգրան, վոր անհայտ է,

թե ինչու կոչվում է «հայու տղա», վերջապես չորրորդ Տիգրանին կոչում են «կոմսոմոլ Տիկո», և ահա չկա ավելի լավ ջրվոր, քան բխով Տիգրանը: Թիմարցուն չի կարելի քաղհանի ուղարկել, վորովհետև նա կոչվում է քաղհանավոր կանանց հետ, այն ինչ նրանից լավ փուրգոն քող չկա: «հայու տղան» բամբակի հողում մեջն է», իսկ կոմսոմոլ Տիկոն որսիբուն մեքենաների հետ է: Կա տափ, բամբակի արաթ, պետք է վորոշել, թե վոր պատանին ձեռնհաս է հորիկ լինելու, քանի աղամարդ կարող է գետափի խոտատեղը հնձել, ով է դարձում բարձր բարդոց և այնքան ամուր, վոր նույնիսկ հարավի քամին չքանդի: Մեղանի մոտ նըստած մեկը, վոր ղեկավարում և խորհրդակցութիւնը, հարցնում է.

— Դեռի Դավան, յերկար արտի ներքեի մասը պիտի թանձր սերմել, թի՞ վերելի.

Դեռի Դավան մի քիչ մտածում է և պատասխանում: Յեւ դուրս է գալիս, վոր վոչ վերելք պիտի թանձր սերմել և վոչ ներքե չորս, այլ յերկու ծայրերը հավասար խտութեամբ, իսկ մեջտեղը թանձր:

Յեւ դեռ հարյուրավոր այսպիսի հարցեր՝ բամբակ ցանոցների, քաղհանավորների, սերմնացանների և հնձվորների, դարբնի և սայլապանների մասին, աղյուս թափողների և տուն կառուցող վարպետների աշխատանքի ու նրա վարձատրութեան չափի մասին և այն մասին, թե ինչպես սերմել, վոր արտերում անսերմ «խեց» չմնա, վոր հողի բոլոր գույձերը փշրվին, ով է քաղցր հնձում, ով է լավ առու քաշում, լաբ տալիս և մարդոց անում, յերբ է հարկավոր ցելաջուր և յերբ ակոսով ջուր, — և մի թե հնարավոր է մի առ մի թվել աշխատանքի այն բոլոր տեսակները և նկարագրել աշխատանքի

կազմակերպման դժվարութիւնները և նրանց փորձը, վորոնք չորս տարվա ընթացքում յեփվել են այդ դժվարութիւնների բովում և վորոնց յուրաքանչյուրը փակ աչքերով էլ տեսնում է իրենց հողերը, իրենց մեքենաներն ու մարդկանց, վորոնք միացրել են իրենց աշխատանքը:

Նրանց մեծ մասը հիսնալի հասկանում է աշխատանքի կատեգորիաների տարբերութիւնը և աշխուրի չափը, յեթի նույնիսկ աշխուր չափում է տոմարդական կոտորակով: Վոմանք ուղբու և կուպենների ոգնութեամբ են հասկանում: Մեջքի վրա գեղապետ պառկած այն թիկնեղ մարդուն «կես կոխի» Մխոն բավական յերկար բացատրեց խորանարդի և քառակուսու տարբերութիւնը և մարդը հասկացավ, յերբ նրան ցույց տվին սենյակի յերեք չափը: Իսկ մի ուրիշը, վորը և դժվար էր հասկանում և դժվարանում էր արտասանել «ինվենտարիզացիա» բառը, կես լուրջ ասաց.

— Յեղավ թամամ Զոկսի խոզանար... մինչև անունը սովորինք՝ փակին:

Յեւ դեռ յերկար ժամանակ և վոչ թե մի որ, անձրեկից ձեռնած և առկառ դեմքերով այդ փորձառու մարդիկ, համայնական հողի մշակների այդ նոր ցիղը պիտի ուղեղ մաշի և նրանց աշխատանքը պիտի ուռճանա լիքը հասկերով:

Յերբ ներս մտանք Դեռի Դավանի տունը, տնեցիների դեմքի վրա նկատեցինք մեր գալու հետ ընդհատված հետաքրքիր պատմութեան հետքեր: Իսկ Դեռի Դավան այնպես էր նստել և մյուսներն այնպես էին նայում նրան, վոր մատնում էին, թե այդ հետաքրքիր պատմողը հենց ինքը Դեռի Դավան էր, վորի յերկու կողքին, թախտի վրա, քոթոթների նման կծկվել էին յերկու թուխ

մանուկներ, ըստ յերևույթին Քեռի Դավոյի թոռները: Նրանցից մեկը դեռ բավական յերկար մնաց այդ դիրքով և նրա լայն չոած աչքերից յերևում էր, վոր մանուկը դեռ պապի սրտմածի ազդեցության տակ է:

Նրանց սենյակը շատ բան էր ասում իր տիրոջ, Քեռի Դավոյի նկարագրի մասին: Նույնպես ամուր նստել էյին պատերը, ինչպես Քեռի Դավոյի կազմվածքն էր, և ամեն ինչից հայտնի յիր, վոր տերը տունը կառուցել է խնամքով, ամեն ինչ իր տեղն էր և մտածված, ինչպես նրա խոսքերը, և դեռ շատ վաղուց, յերբ Քեռի Դավոն անութեան, թափառական էր, այդ դռան նախը յեղել է նրա մտքում:

Տան կառուցվածքի կոշտութունը մեղմացրել էր կանացի մի ձեռք, վորը պատահաններից կախել էր մաքուր վարագույրներ, պատերին նկարներ և գույնգույն թղթերից զարդեր: Լիքն էր տան ներսը, դռան մոտ կախված էր մի փափուկ յերեսսրբիչ, իսկ վերևից դաշտային չորացած ծաղիկների միջից նայում էր Բուդյոնին: Այդ լիքը տան բոլոր իրերի և մարդկանց վրա կար ապահով կյանքի կնիքը, իսկ փայլուն սամավարը կարծես ավելի զարդ էր և նորափեսայի նման ուռածփքված նայում էր:

Յերկար կլինի պատմել մեր գրույցը, վոր սկսվեց ինչպես սկսվում է պարզ գրույցը. Քեռի Դավոն հայտնեց, վոր հենց նույն օրը նրա առաջարկով կոլտոդի ակտիվի խորհրդակցությունը վորոշել է կառուցել ձիերի նոր դոմ:

— Ել վրնց ես:

— Գոհություն, — և հաստ մատներով սեղանի վրա հավաքում էր հացի փշրանքները: Միշտ անհանգիստ էն նրա ձեռքերը, միշտ ինչ վոր մի բան է անում. ահա հավաքեց

հացի փշրանքները և սկսեց հարդարել սրփռոցի խճճված ծոպերը: Իրենց կյանքում վորքան բարիք են ստեղծել Քեռի Դավոյի այդ կոշտ և ծանր ձեռքերը և այդ բարիքից վոր մասն է նրան բաժին ընկել:

Նա պատմում է այն, ինչ արդեն հայտնի յե, ինչ վոր վկայում են նրա տունը, տան իրերը, տանեցիները, նրանց հագուստը, նրա թոռները և վերջապես իր Քեռի Դավոյի անվրդով ու գոհ դեմքը, նրա զրույցի խաղաղ ընթացքը: Պատահել է ձեռք ձմռան բուքին լինել զրսում՝ խավարի մեջ, յերբ ձյունախառն բուքը ծածկում է բոլոր ճանապարհները, ձյունի փաթիլները, սուր ավաղների նման ծեծում են ձեր դեմքը, սառչում է ձեր շունչը և ահա թվում է, վոր այլևս փրկության ուղի չկա, փրկության ուղի՝ այդ խավար գիշերը՝ յերբ վոռնում է բուքը. և ահա հանկարծ ցուում է մի վիթխարի կրակ, դժվարությամբ հասնում էք կրակին, և յերբ արդեն տաքացել են ձեր ձեռքերն ու մարմինը, յերբ հնարավոր ժահը դառնում է անցյալ, իսկ փրկությունը՝ հրաշք, կրակի մոտ ուրիշներին հանդարտ ձայնով պատմում էք այն ուղիների մասին, վորտեղ խավար էր և վոռնում էր մահվան բուքը: Ահա այդպես իբրև մի մարդ, վոր հասել է ապահովության ափը, Քեռի Դավոն պատմեց իր և իր նմանների կյանքը: Նրանք և նրանց պապերը այդպիսի տուն չեն ունեցել, նրանք ապրել են մի մութ յերկրում, մյուս տների, թոռնաթախի մեջ: Նրանք ունեյին յեղեգնյա խտր վոր փոռում էյին ոջախի առաջ և ամբողջ գերգասառնը պառկում էր խտրի վրա, ինչպես քարայրի գազանը չոր տներների վրա: Յեվ նույնիսկ այդ կյանքը շատ յեղալ նրանց համար, և ինչպես կրակվող յեղեգնուտից փախչող թռչուններ, նրանք հեռա-

ցան իրենց բարձր քարափներից և քարափների խեղճ տներից:

Յերբվիցե մի գրիչ կպատմի Քեռի Դավոյի կյանքը և այդ գրիչը շատ կգտնի հերոսություններ նրա կյանքում: Յեվ նա կդարձանա, թե ինչպես է, վոր բոլոր պատուհանների ընթացքում չի անհետացել Քեռի Դավոյի զարմու Բարձր վոգեվորություն կհոսի նրա յերակներում, յերբ այդ պատմիչն իր պատմությունը հասցնի մինչև այն օրը, յերբ իրար հետ միացան տասներկու ծուխ և այս հողերի վրա վառվեցին նոր կյանքի կրակները և առաջին տասներկուսի հետ Քեռի Դավոն յսեց համայնական կյանքի կոչը: — Իսկ ինչ էս անելու այն ավելցուկը, վոր ունես...

Այստեղ մեր գրույցին խառնվեցին և կանայք՝ Քեռի Դավոյի կինը և նրա հարսը, այն թուխ մանուկների մայրը, վորի կանացի մատները քնքշություն եյին տվել Դավոյի կառուցած տան հաստ պատուհաններին և պատերին: Յերբվաց, վոր կանայք տարբեր կարծիքի յեն ավելցուկ ցորենի և մյուս մթթերքների ոգտադորման մասին. նրանք պահանջում էյին «կարի մեքենա» և «կռավաթշ», իսկ հարսը նույնիսկ պատեֆոն: Այն ինչ Քեռի Դավոն հակառակն է մտածում. նա կամենում է իր նոր տան կողքին կառուցել մի ավելի ընդարձակ սենյակ, գետնից բարձր, վոր ներքեղ լինի մառան, իսկ կտուրի վրա ամառվա չարդախը: Յեվ յերբ պատրաստ կլինի այդ սենյակը, այն ժամանակ նա կգնի յերկաթյա մահճակալ: Նրա թոռները գլորմլոր փաթաթվեցին պապին, կարծես այդ յեղանակով հայտնեցին, վոր իրենք չեն ուզում վոչ խոր մառան և վոչ յերկաթե մահճակալ, այլ միայն ուղում են, վոր միշտ ունենան այդպիսի պապ, բարձրանան նրա

ռանքը, գլորվին նրա գոգում և պապը նրանց զարմանալի պատմություններ պատմի: Զրազները վառվեցին:

Յերբ սեղանի արկղից հարսը լուցկի հանեց, իմ աչքին ընկավ յերկտրոլարի կապոցը, կոճակները, դեղին պատրոնը և նույնիսկ մի երկտրոլար:

— Ինչո՞ւ յես հավաքել, Քեռի Դավո:

— Հարա մեզ լուս կիսա Սիմիստրոն...

Սիմիստրոն, Յեմստոյը, Յեմշինը...

Քեռի Դավոյի պատահանից յերեմում եր հայկական հին գլուղին ոտաբոտի պեյգած: Դիմացի բլուրների ստորոտում թարթում էին բազմաթիվ ճրագներ, բլուրները վրա յերեմում էին ափսիս գործող կրակներ: Թվում էր, թե ամբողջ դաշտում փռվել է արդյունաբերական մի մեծ քաղաք և նրա բազմաթիվ կրակները վառվում են գիշերային մթության մեջ: Պատահանից նայում էի այդ հոյակապ տեսարանին, իսկ Քեռի Դավոն, պատմում էր, վոր գործարանի շաղախին քիչ քրտինք չեն խառնել և իրենք, նաև ինքը և ահա այդ վաստակի փոխարեն «Սիմիստրոն» նրանց լույս է խոստացել:

— Ե բարով մնաս, Քեռի Դավո:

— Բարով, բարով տեսանք:

Բակից ափսիս փառահեղ եր Յեմշինը: Քեռի Դավոյի տան պատահանից յերեմում էին միայն տների մի մասը և բլուրները, բայց

չէր յերեմում վիթխարի ծխնելույղը, վորից թանձր ծուխը բարթ-բարթ բարձրանում էր: Լսվում էին պայթյուններ և խուլ աղմուկ, յերեմի վազոնետների մեջ լցնում էին կրաքար:

Դյուղի նոր թաղով դառնում էի տուն: Յերկու կողմը միանման և մաքուր տներ էին և յուրաքանչյուր տան գույշ պատահանից լույսի բարակ շերտ եր ընկել նոր փողոցի մոտ: Յեմ ինչպես մի նետ, այդ փողոցը ձգվում էր դեպի յեղեգնուտը և Զույգ լեռը կարծես փողոցի ծայրն էր:

Մուգ մանիշակադույն շղարշ եր նստել լերան լանջերին և նրանց ստորոտներն ընկղմվել էին շղարշի խավար ծալքերում: Բայց այնքան սպիտակ եր լերան դագաթը, վոր նույնիսկ այդ մուգ շղարշի միջից ցլում եր նրա սպիտակութունը, ինչպես անարատ մարմինը թափանցիկ քողի միջից: Վոսկեղեն լուսինը, վոր արեմի նման եր, բայց առանց ճառագայթների, — լուսինը դողդողալով իջնում եր խոր անդունդի վրա: Այն կողմերում հովիվները հրդեհել էին յեղեգնուտը և թրվում եր, թե ծով է բռնկվել: Այրվող յեղեգնուտից բաղերը կանչերով պտտվում էին իրենց կրակվող բների վրա: Քամին բարձրացնում եր այրվող յեղեգնը և խավարի մեջ նրանք նման էին հրաթև թռչունների: Լեռը

բարձր եր բոլորից և նույնիսկ այդ հրդեհ վող ծովը չէր լուսավորում նրա խավար լանջերը:

Մի անից լավեցին խուլ ձայներ. կարծես բազմաթիվ կանայք միաժամանակ և խմբով ասացին նույն բանը: Պատահանից յերեմաց սենյակի ներսը, վորը հիշեցնում էր Քեռի Դավոյի տունը, միայն չկային յերեմաներ և տղամարդիկ: Ութը-տասը գեղջկուհիներ հասարակ սեղանի մոտ շուրջ բոլոր նստել էին և յերբ Մարինան բարձրացնում եր ձեռքը, նրանք խմբով ընթերցում էին. մեկը նույնիսկ մատը շարժում եր տողերի հետ, ինչպես դպրոցական յերեսա:

— Մեր կոմունան վոր կանի...

Յեմ խուլ դղրդացին այդ բառերը, ինչպես բազմության սրբազան յերգումը, յերբ ծովի նման ծփում է այդ բազմությունը, նրանց քայլերից թնդում է գետինը, հրդեհ է բռնկվել նրանց հողիներում և հողմը կրակին է մատնել հին յեղեգնուտները, և տիղմը և թունավոր ճահիճը, հրախանձում է ճահիճները գեղեցիկներին, կրակի լեզվակները ճեղքում են դարավոր խավարը և կարիքից ազատագրված մարդը ճախրում է վորպես հպարտ բաղի:

Լեռը բարձր է, բայց այդ բարձր լեռից ափսիս բարձր են հողի մշակները, վորոնք արդեն հերկել են համայնա կան յաշտերը:

Ա. ԲԱԼԿՈՒՆՑ

ԿՈԼԽՈԶՆԻԿ ՊԱՀԱԿԻ ԽՈՀԵՐԸ

1.

Արփաշայի կանաչ ափին,
գյուղին մոտիկ—սարի տակ,
փեթակի պես նստել ե մի
կոլխոզնիկի նոր տնակ:

Ծեր Ասոն ե ապրում այնտեղ
ինչպես արծիվը իր ընտւմ,
աչքերն տեսն լինեն կանթեղ
և մագերն են արծաթիւմ:

Դեմը՝ գոտին Արփաշայի,
ջրերի յերգ ու խոխոջ,
վոսկեսքող բոստանը հին
ու Շիրակի գաշտը վողջ...

Յեմ արտերը կոլխոզական
համայնական բնրք ու սեր.
գյուղը մոտիկ ուր ապագան,
կյանք ե ծաղկում վոսկեհեր:

2.

Ասոն դարն ե ուղիղ կիսել
սիրած գետի այս ափին,
մինչև պայծառ որն ե հասել՝
գրել արեւը իր սրտին:

Հիշում ե նա իր մանկության
որերն անցած, յերազուն՝
— «Ինքս սարի ջահել չորան,
արծիվը եր ինձ հետ խոսում:

Ու միշտ հոտս մտնում եր գյուղ՝
տունը լցնում աղմուկով.
բայց, իմ սիրտը, ինչպես սև ծուխ,
մոռյվում եր մութ ամպով:

Աղես՝ տերը վոչխարների
հայացքով եր ինձ մորթում—
— «Դու, աղանակ, չորան սարի,
ինչ ես պարապ որն ի բուն:

Քեզ պահել եմ վոնց իմ վորդուն
տվել շորեր խաղաղ կյանք».
հայհոյում եր գիշերն ի բուն,
տեղս զցում դռան տակ:

3.

Ու մի որ ել անձրև յեկամ,
սարը մթնեց ամպերից,
գայլն ինձանից մի գառ կերամ,
տարամ խնդումս իմ սրտից:

Այնուհետև յերբ իմացան՝
գայլն ե տարել գառը թուխ,
աղես մի մաղ կրակ դարձամ
մաղեց գլխիս հուր ու ծուխ...

— «Դու իմ տունն ես եղդես
քանգում,
կորիք, գնա այս տանից»...
ու հեռացա մենակ տրտում
իմ գմբուխտի սարերից:

4.

Անցան որեր ու տարիներ
վերջալույսի ամպի պես,
մինչև հասավ մեծ, անվեհեր
Հսկանմանի փայլը մեզ...

5.

Յերջանիկ եմ յես ել հիմա
մեր սարերի հովքի պես,
լույս ե իջել տանս վրա,
սիրտս վոսկի գանգի պես:


Յերեխեքս մի բուռ ծիծաղ
դ՝ գրում են և կարդում,
նրանց սրտում լուսաշաղախ
նոր մի կյանք ե փթթում:

Ու կոլխոզում իմ անունը
պսպղում ե աստղի պես
լիքն ե հիմա իմ նոր տունը
հացով մրգով՝ արեւեզ...

Ասաց ուրախ ու վարդերես
Ասոն՝ նստած գետափին
Արփաշայն աղջկա պես
յերգը փողում եր չորս դին:

Եուրջը նրա դաշտերն աշնան,
աշնան թափվող վոսկեներ,
շղարշի պես մի վոսկեման
պսպղում եր հանդն անձեր:

ՀՈՎՀ. ՇԻՐԱԶ



Բազմաթիվ կոլխոզային, վոն անոս բեր եր ստացել

Շ Յ Ո Ի Ք Յ Ո Ի Ր

Ամպերի լույծ վարսերը գետնին են քլա-
վում: Մաղում ե բարակ ու տաղտկալի
անձրեւը: Յեւ, ցեւոյ Բռնել ե խճուղիները,
կածանները: Ճպլում ե մեր վոտների տակ:

Քայլում ենք Շյուքյուրի հետ, դեպի նրա
տունը:

— Ինչի վարը ումիշըմ ¹⁾, — հարտու-
թյամբ ասում ե Շյուքյուրը:

Մեծ սպասողականությամբ շտապում եմ
տեսնելու յերեկվա թափառական ու սովա-
լուակ նոքայրի տունը:

Մի ծեր շուն մուտում ե: Նա ծուլանում ե
տեղից վեր կենալ ու հաչել մեզ վրա:

Շյուքյուրինց բակումն ենք:

Մտնում ենք տունը: Յերկու թովուռն
մանուկներ դիմավորում են Շյուքյուրին:

Կինն ամթից դեմքը շուռ ե տալիս:

Շյուքյուրի սենյակը: Ինչպիսի մաքրու-
թյուն: Այդ մաքրությունը մենք տեսանք
համարյա բոլոր կոլտնտեսականների բնա-
կարաններում:

Յերեկվա տնադուրկ ե թափառական
բառրակը, բոլշևիկյան կոլխոզի այսորվա
մարտիկը, համառ ու նվիրաշնայն աշխատան-
քով, հիրավի նվաճել ե ունեւոր կյանքի
ուղին:

— Կոլխոզ մտնելուց առաջ, — ասում ե
նա, — լափ զըռ քյասիբ ումիշըմ:

Նրա սենյակում, ահա յերկու մահճակալ,
յերկու թախթ, յերեք գորգ, մի մեծ ու գե-
ղեցիկ կարպետ. պատին փակցրած՝ վաղ-
րանկար մի գործվածք: Պրիմուս, գեղեցիկ
սմանեղեններ:

¹⁾ Հիմա ունեւոր եմ յեղել:

Շյուքյուրը մեծ վոգելորությամբ պատ-
մում ե, վոր սկսած այդ տան գերաններից
մինչև վերջին ափսոն՝ ձեռք ե բերել կոլ-
խոզ մտնելուց հետո միայն:

Չորս տարի անընդհատ յեղել ե դաշտա-
վարական բրիգադայի բրիգադիր, միայն
վերջերս ե, վոր առաջ ե քաշվել կոլխոզի
նախագահի պաշտոնում:

Անցյալ տարի բերքահավաքի ժամանակ
հավաքել ե որակյան 100 կիլո բամբակ:
Այդ ե պատճառը, վոր նա կուտակել ե 325
աշխուր:

— Նա չաթին իշա դ-ս կոյուրուան, իքի
աշխուր ալարըմ ²⁾, — հարտությամբ ասում
ե նա:

325 աշխուրով, անցյալ տարի Շյուքյուրն
իր տունն ե բերել 140 փութ ցորեն, 250
կիլո չաթուկ, 70 կիլո շաքար, 1 կիլո թեյ,
1600 ոտւրի գրամ, 1000 կիլո ձմերուկ ե
այլ բանջարեղեններ:

Շյուքյուրը վոչ միայն ունեւոր, այլ ե
կոլտուրական կյանք ե վարում: Կոլխոզ
մտնելուց հետո նա զրադեռ ե դարձել:
Կարգում ե «Կըզլ Շաֆակ» ե «Յենի Բենդ»
թերթերը: Այս տարի ամառն՝ յերկու ամսով
գնացել ե Օսդկաձորի կուս-ակտիվի կուր-
սերը: Փափագում ե ուղիտ ձեռք բերել:
Նրա կոլտուրական կյանքի լավագույն
ցուցանիշներից մեկն ել այն արտաքնոցն
ե, վոր նա վերջերս ե կառուցել:

Տախտակապատ, ծածկված առաստաղով,

²⁾ Ինչ դժվար գործի յել դենս, յերկու աշխուր
կառնեմ:

տախտակի հատակով, դռներով արտաքնոց:
Թող ներեն իմ ընթերցողներն այս անպա-
տեհ շեղման համար: Սակայն արտաքնոցը
գյուղում՝ այդ կարեւոր նվաճումներից
մեկն ե: Մեր բոլոր կոլխոզնիկները պետք ե
հետենն Շյուքյուրի որինակին. բավական
ե, ինչքան պըպեցին պատերի տակ, բա-
կերում, փողոցներում, «խարաբա»-ներում:
Չե վոր կուլտուրական, առողջ կենցաղի
համար արտաքնոցը նույնպես կարեւոր
նախապայման ե:

— Ձեր կոլխոզում բոլորն են այսպիսի
ունեւոր կյանքով ապրում, — հարցնում եմ
Շյուքյուրին:

— 70 տնտեսությունից՝ 30 ունեւոր
են. — պատասխանում ե Շյուքյուրը, — այս
տարվա բերքից հետո, բոլորն ել ունեւոր
են դառնալու:

Հիրավի բոլոր կոլխոզնիկները դոհունա-
կությամբ են արձանագրում, վոր Շյու-
քյուրը կոլխոզի նախկին ապիկար նախա-
գահին փոխարինելուց հետո՝ գործերը շատ
են լավացել. կոլխոզը վերակառուցվել ե,
աշխատանքներն աշխուժացել են: Այդ բա-
նին մեծապես ոգնել ե մեքենատրակտորա-
յին կայանի քաղաթինը, վորը բարձրացրել
կոլխոզի քաղաքական դեմքը: Կոլխոզում
տնցկացրած դտումով՝ կուլակային ագենտ
հանդիսացող 5 տնտեսությունները դուրս
են արվել, վորից հետո այսոր Շյուքյուրն
արդեն 15 նոր դիմում ե ստացել՝ կոլխոզ
մտնելու համար: «Միքս դեպի կոլխոզն ե
ձգտում», իր դիմումի մեջ գրում ե միջակ

գյուղացի Նազաթ Կոջայեվը, «իմ սրտով ուզում եմ հորիսող մտնել», շարունակում է,— Այլուքա Բարայեվը: Շյուքուլը մեծ հրճվանքով և չըջում ստացած դիմումները և ժպիտը տարածվում է նրա ցորնագույն դեմքին:

* *

Մոտենում են բամբակի մասսայական բերքահավաքի օրերը: Կոլտնտեսություններում մասսայական բերքահավաքն սկսվելու յե հոկտ. 1-ից:

Շյուքուլը, կոլտոզն ինչպես ես պատրաստել բերքահավաքին:

Շյուքուլը ժպտում է:

— Բերքագները պատրաստ են: Պլանները կազմված: Սոցմոցման պայմանները կընքված: Սև և կարմիր տախտակներ կան: Փոխադրական միջոցները պատրաստ են: 35 յերեխայի համար մսուրը պատրաստ ե: Դաշտում աշխատողների սնունդը պատրաստում ենք: Ի՛ր քեչի՛ր բայդաղ յո՛թ տուր, ո՛նի դա թափշիրմի՛ղմ ³⁾:

Հիրավի, Դոնդուգյանի կոլտնտեսական գյուղացիներն իրավունք ունեն պարծենալու իրենց գործունյա և նվիրված նախագահով:

* *

Սակայն Շուքուլը մենակ չի: Նրա շուրջը հաժախմբված են կոլտոզային ախտիվը, սոցալիստական դաշտերի առաջավոր մարտիկները:

Ահա կուսակազմակերպիչ, կոլտոզվարչության անդամ ընկ. Նավրուզը:

Նա նույնպես բատրակ է յեղել, չքավոր: Իսկ այժմ իր մասին հպարտություն չունի:

— Ունամոր քյանդչի ումի՛ղմ:

³⁾ Միայն փոխանցիկ գրողի չկա, այն ել պատվիրել եմ:

ՀՈՎԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
(Կոլտնտ. յերիտ. գրող)

Ա Շ Ն Ա Ն Ա Յ Ի Ն

Դորը ամպերն են դիզվել նորից,
Սեզ լեռների կատարներին
Ու փչում է հով սարերից,
Աշնանային ցուրտ քամին:

Դաշտերի մեջ միապաղաղ,
Բարակ անձրևն է մաղում,
Սերմանում է ասես խաղաղ
Աշնան ցանի հունդ բեղուն:

Ու դաշտերի սևատարած
Հողի մեջ թարմ ու փխրուն
Ահա յեռում է թև առած
Անասելի խնդուկյուն:

Գութանները յերկաթակող
Կտրատում են հողթմբեր
Ու ցանում ենք հողում կակուղ
Կոլտոզային լի հունդեր:

Զվարթագին այս աղմուկի,
Խնդուկյան մեջ հզորաձայն,
Լսում եմ յես աշխատանքի
Լուսակարկաչ յերգ պայծառ:

* *

Ասադուլլան Ալիյեվ: Բերքագիր: Նախ քան կոլտոզ մտնելը, ինչպես Շյուքուլըն է ասում, «լափ գըռ քյասիր» է յեղել: Այժմ ունեվոր է: Կոլտոզում գրագիտություն է սովորել: Կտրում է «Կըզըլ Շաֆակ» և «Յեն Քյենդ» թերթերը: Լավագույն հարվածային է: Անկուսակցական:

* *

Ասադուլլանը յերկու յեղբայր ունի, մեկը՝ կոլտոզիկ է, մյուսը՝ մենատնտես:

Ասադուլլանը թախանձում է վոր տեսնեք նաև իր բնակարանը:

Գնում ենք:

Միջանցքում իրար դեմ յերկու դռներ կան: Նախ բացում է ձախ կողմի դուռը. իր սենյակն է: Մահճակալներով, գորգապատ, պայծառ: Մենք հիանում ենք նրա սենյակովը: Ապա, նա շուռ է դալիս ու բացում է դեմի դուռը:

— Բնա դա անհատըն եովի գըր. ⁴⁾, — ասում է նա, ցույց տալով իր մենատնտես յեղբոր տունը:

Յեվ ինչ մեծ հակադրություն: Այստեղ յերևում է խեղճությունը, մահճակալների փոխարեն թախթեր, գորգերի փոխարեն՝ հին կարպետներ: Հետո ինչ վոր խունացած տեսք:

Ասադուլլանի կենդանի աղիտացիան վերին աստիճանի համոզիչ եր ու դաստիարակիչ:

Այդ է պատճառը, վոր նրա «անհատ» յեղբայրը նույնպես պատրաստվում է կոլտոզ մտնելու:

* *

Պարտիզում հանդիպում ենք Ասադուլլանի 116-ամյա հորը, Հաջի Բյազուլին: Նրա վողնաշարն արդեն ծալվել է, կռացել: Դեմքը պատած. ձեփ-ձեքմակ մազերով: Դեմքին վոչ մի կնճիռ, ինչ վոր ձուլածո, բրնձեղ, կարծես անիրական դեմք. փոսաբորիկ, ցեխի մեջ կանգնած, բահը ձեռքին, նա թուժե է կապում:

⁴⁾ Այս ել անհատի տունն է:

Բարեւում եմ Հաջի Քյազումին: Անդրըշի-
քիմյան մի նվագուն ձայնով և մեծ ուրա-
խությամբ ք պատասխանում իմ բարեկին:

— Ի՞նչ ես անում,— հարցնում եմ անի-
րական այդ ծերունուն:

— Քո առողջութանն եմ աղոթում— ծոր
ե տալիս սիրալիր:

— Կոլխոզնիկ ես:

— Բա վճնց: Կոլխոզ եմ մտել, վոր բոլոր
ջահեղներին ուրիշակ տամ: Համա կոլխոզում
ինձ աշխատանք չեն տալիս, ասում են
դինջացիր: Դինջանալ ել չեմ կարող:

— Հիմա ի՞նչ ես ասում:

— Թումբ եմ կապում, վոր հարեանի
տավարը մեր յոնջան չուտի:

Անցնում եմ ինտիմ հարցերի:

— Հաջի Բազում բարա, քանի կին ես
առել:

— Շատ,— ներքին մի հաճուքով բացա-
կանչում ե նա,

— Քանիսը, քանիսը:

— Աշի առվադ դըր դա, հա ալմիշամ.
քիմ բյուլուր ⁵⁾:

Հաջի Քյազումին թողնելով ցեխի մեջ ճղա-
ճ պալիս, մենք քայլում ենք դեպի բաժ-
բակի դաշտերը:

* *

Յերեկվա անձրևից հետո լվացված բնու-

⁵⁾ Աշի, կին ե, միշտ առել եմ, ով ե իմանում:

Թիունը շողշողում ե՝ յուզաներկի վիթխարի
կտավի նման: Ամպի փրփուրներում լողում
ե Մասիսի ալապաստրե կուրծքը: Մարերը
մանիշակագույն են ու մշուշոտ: Դաշտերը՝
անափ ու կանաչ: Դաշտերում կոլխո-
զային բամբակի անասհման տարածու-
թյունն ե, վորն ասես առաջ ե շարժվում
դեպի Մասիսի մանիշակագույն ստորոտը:

Շյուքյուրը պարծանքով ե ցույց տալիս
բամբակենու բարձր և բրոնզագույն թփերը:
Յուրաքանչյուր թուփ ծանրացած ե 60—70
կնգուղներով: Վաղն Արարատյան արևի
պայծառության մեջ կը բացվեն այդ կըն-
գուղները, արծաթե ժպիտը կծավալվի կոլ-
խոզական անափ դաշտերում:

Բրոնզագույն թփերը կը շարժվեն:

Հարյուրավոր Շյուքյուրներ, Ասադուլ-
լահներ, Նովրուզներ, Բայրամներ, Իբրա-
հիմներ կսուրան այդ թփերում՝ բուշեիկյան
բերքահավաքի հաղթանակի համար:

* *

Ամբողջ ժամանակ մեզ հետ քայլում ե
Նարիմանյուլայի յենթաշրջանի ագրոկայանի
վարիչ, 25-ամյա յերիտասարդ Ալաֆյաթ
Վելիյիվը: Նա կուսակցության անդամ ե. վոչ
միայն ագրոդիտելիքների տարածման ճակա-
տումն ե պայքարում, այլև կոլխոզների

կազմակերպման, ամրապնդման, կուս. մաս-
սայական աշխատանքների վերակառուց-
ման ասպարիզում:

Դյուզացի այս կոմյերիտականը, անցել ե
կուսգալրոցի բովովը, սովորել ե Անդրկով-
կասյան Կոմ. համալսարանում և այժմ մեկն
ե հանդիսանում գյուղի սոցիալիստական
վերակառուցման մարտիկներից:

Յեվ վճրքան Ալասքյարներ: Վորքան
Շյուքյուրներ: Յերբեմնի բատրակներ, չքա-
վորներ: Այժմ արակտորի դեկի մոտ տու-
ման վախուռմի վրա, կոլխոզների ղեկավա-
րության գլուխ, ագրո-պրոպագանդիստ,
ղեկավար:

Աճում, յեղնում, տիրապետում ե նոր
գյուղացին, նոր մարդը:

Նա ծնվում ե բամբակի բրոնզե թփերի
տակ, նրա արծաթե գանգուղներում:

Նա ծնվում ե ցորենի վոսկեծածան կո-
հակներում:

Նա ծնվում ե մեր սեահողի տրակտորա-
վար ակոսներում:

Նա սանձահարում, հնազանդեցնում ե
բնությունը: Տիրապետում մեքենաներին:

Նա լեցնում ե մեր կյանքը, մեր արվես-
տը, մեր գրականությունը:

Ա.Ա.ՋԱՆ

„ՅԵԿԵՔ ՀԱՇԻՎ ԱՆԵՆՔ, ԳՈՒՑԵ ԶՀԱՎԱՏԱՔ“...

Արտավազը Հարությունյանը Թափաղուկակ (Լենինականի շրջան) գյուղի կոլտնտեսությունն անդամ է: Նա կոլտնտեսություն լավագույն հարվածայիններից է:

Արտավազը, յերբ կոլտնտեսությունն ավարտվում է, վոչինչ չուներ, սակայն հետագայում նա բավականաչափ կազմակերպել կարողացավ իր տնտեսությունը: Անցյալ տարի կոլտնտեսության ոգնությունը նա մի լավ կով գնեց: Կոլտնտեսությունը նրան բավարարեց խոտով, դարմանով: Արտավազը կովը վարնանը ծնեց և ինչպես վոր ինքն է ասում՝

— Մածունն ու յուզը գյուղն էր...

Սակայն այս տարի, բերքի բաշխումից հետո, հարվածային կոլտնտեսական Արտավազը Հարությունյանը մի շարք նոր ծրագրեր ունի իրագործելու: Դրանցից առաջինն այն է, վոր նա աշնանը, յերբ «անասուններ

ըի գինն եծանանում է», մի նոր կով է գնելու:

— Թող յուզն ու մածունը ավելի բոլ լինի, ունեվոր եմ դառնալու, հանաք չի...

Բայց միայն մի կովով չի բավարարվելու Արտավազը Հարությունյանը: Նոր մի կովից բացի նա, նույնպես աշնանը, գնելու յե նաև 5 հատ վոչխար:

— Սերտս վոչխարի մածունն է ուզում,

— ծիծաղելով ասում է Արտավազը և աչքով անում կնոջը: Հետո նա պատմում է, վոր կովից ու վոչխարներից բացի գնելու յե նաև մի հատ լավ «փայլուն» մահճակալ, մի պահարան՝ շորերը պահելու համար, մոր ու կնոջ համար էլ լավ հագուստներ: Հետո նա պետք է սպիտակացնի տան պատերը, գնի լուսամտի ու ելկարական լամպի համար, վոր, հիմա կախված է տան մրտ առաստաղից: Արտավազը մի քիչ մտածում է և նո

րից շարունակում: Նա պատմում է նաև, վոր 3 ձեռք տանեցոց և մեկ ձեռք «դոնադի» անկողնու համար պետք է գնի նոր ու գեղեցիկ ծաղիկներով զարդարված «աչք ու յեքես»: Հարց է տրվում Արտավազը Հարությունյանին, վոր այդ բոլորը՝

— Ինչով ես գնելու...

— Իմ ստանալիք յեկամուտով...


— Վորքան պետք է ստանաս...

— Յեկեք հաշիվ անենք, գուցե ինձ չհաժտաք...

Շատ պարզ է Արտավազի հաշիվները: Ընտանիքը բաղկացած է յերեք անձից: Ամբողջ ընտանիքով մինչև այժմ 240 աշխոր արդեն ունեն: Մինչև տարվա վերջը կունենա ամենաքիչը նորից 80 աշխոր: Յուրաքանչյուրի դիմաց նա այս տարի պիտի ստանա ամենաքիչը 10 կիլո հացահատիկ: Ուրեմն $320 \times 10 = 3200$ կիլո կամ 32 ցենտներ, և կամ 200 փութ հացահատիկ: Բացի դրանից, նա ստանալու յե՝ 28 ցենտներ դազար, 20 ցենտներ 40 կիլո կաղամբ, 8 ցենտներ 40 կիլո կարտոֆիլ, յուզ, պանիր, ձեթ և այլ մթերքներ:

Յերեք անձի համար այդքան մթերքը չափ ազանց շատ է: Որինակ յերեք անձն ամբողջ տարին շատ շատ ուտեն, պիտի ուտեն 50 փութ հաց, իսկ 150 փութ Արտավազը կարող է ոգտադործել իր նպատակների համար: Նույնը կարելի յե ասել նաև մյուս մթերքների վերաբերյալ: Այսպիսով ապահովված է վոչ միայն նրա նոր կովը ու 5 վոչխարը, վոր պիտի գնի աշնանը, այլ և «Մահճակալը», անկողնու «աչք ու յեքեսը» և մի շարք այլ բաներ, վոր նա ցանկանում է:

Ա. ՇԱՀԱՅԱՋ



Ղափլիի կոլտնտեսության անդամ Պետրոսի մահճակալը

ԱՅՆ—ԻՆՉ ԶԵՐ ՏԵՍԵԼ ԲԱՅԱՆԴՈՒՐԸ

«ՂՈՒԱԹԸ»

Արձակ դաշտում արշավում եր յերկաթե յերիվարը: Դեռ շատ հեռվից լսվում եր նրա վրնջոցը: Ալիքվում եր դաշտի ցորենադորձ սավանը, խոնարհվում եր հասկը, խշշալով, յերգելով բեղուն բերքի, բազուկների, առնական, զրոհող բազուկների ու բախ յերգը:

Ռուբենը նստել եր «ղոաթի» թամբին և մազութոտ բազուկներով բռնել մեծ անիվը: Մազակալած, փոշոտ յերեսով Սենտոն կանգնել եր նրա բարձունքում և կապիտանի աչալը շուրթյամբ հետևում եր «ղոաթի» արշավին:

Նախկին խուժանը—մանկատնից յեկած Բագրատ Սերգոյանը պատանեկական մի զվարթ յերգ շուրթերին՝ մերթ այս կամ այն պտուտակն եր ամբասցնում՝ մերթ ձեռքերն եր թաղում ցորենի մեջ ու կատակում:

— Ռուբեն ապոր «ղոաթը» ջիրիդ ե խաղում:

Ռուբեն ապոր «ղոաթը»,—Լեն. ՄՏ Կայանից ուղարկված հաղթական կոմբայնը ջիրիդ եր խաղում Բայանդուրի կոլտոգական դաշտում:

Որն իրիկնանում եր, իսկ «ղոաթը» վերջին արան եր հնձում:

— Մարդ ափսոսում ե, վոր ես թավուր վիշապը պիտի պարապ կանգնի մի քանի որից հետո,—ասաց Մաչիկը:

— Չէ, պարապ չի կանգնի, կքշենք կալը, թող գնա կալսի, դեզերն սպասում են,—

լրացրեց Ռուբենը:

Յեկավ սայլը և դատարկեցին ամբարը: Սենտոն ձեռքով վերցրեց շողուն հատիկները և մոտեցրեց յերեսին:

— Մարդու գլուխն ուռչում ե. մաշինով ցանիւր, հնձիւր և արտի մեջ կալսիւր. առաջ վոր ասում եյին՝ չեյի հավատում:

Սայլը՝ կքած հատիկների ծանրության տակ՝ անիվեց դեպի գլուղ, իսկ «ղոաթը» դեռ հնձում եր, նրա սուր ատամների առջև մերկանում եր հողը, ազատվում եր իր կրճի հատիկային ծանրությունից ու մինչև յերեկո նրանք տուն եյին կրում կոլխոդային դաշտի մեկը հաղար դարձած բերքը:

«ՄԱՍԻՍՆԵՐԸ»

Նա ձեռքերը թաղել եր լայնանիստ շեղջի մեջ. մատները խաղում եյին հատիկների հետ, և ներքին հաճույքից կկոցվում եյին աչքերը:

— Մի քանի որ առաջ պետության ամբարները լցրեցինք 3 վագոն շեկ քահրուրար, իսկ հիմա բարձրացել են մեր կոլխոդի մասինները... Ամբարները լիքն են, ջվալները, մեշոկները. վոր թնդիրի ակն ել ցորեն լցնենք, դարձյալ մի քանի շեղջ դուրսը կմնա... հանաք բան չի կոլխոգական բերքը:

— Մի արանդի, Վարոս ամի, հնձողը հալթ կտեղավորի յել, դու ես ասա, քեզ հասանիլք ցորենը վո՞նց պիտի ծախսես...

— Վայ ե՛, բան ասացիր, քեզ նման ջահել-

ները լիքն են մեր կոլխոդում, կպսակեմ ու հարանվորներին փրփուր լալ կուտացնեմ... Լո՛ւ, վո՛ւ 7 տարեկան երեխեն փաթաթես մեջը՝ չի յերևա...

Այսպես կատակում եյին կալվորները: Վարոսը պտուվում եր իր «մասիսների» շուրջը և թոնթորում՝ «Յես վո՞նց տեղավորեմ ես բոլորը, վո՞նց...»:

Բոլոր հնարավորությունները մորիլիզացիայի եյին յենթարկել. 12 գույգ յեզներ պտուվում եյին՝ քաշելով քարակուռ կամերը. չքչքում եր սերմադաշիւր. մի քանի ջահելներ յեղաններով քամուն եյին տալիս դարձանը, երնում, գտում ցորենը. վինտիլյատորի պես ֆոռում եր քամհարը և այդ ամենի միջև, վորպես կենտրոնական դեմք, վորոտում եր «ղոաթի» փոքր յեղարյուրը,—կալսող մեքենան: Յերկու տասնյակ թևեր քրքրում եյին դեզերը և քյուլալ հասցնում կալսիչին:

Իսկ կալի մեջտեղում խփած «Իլիւ-չովկայի» խունացած տողերն ազդարարում եյին. «պահեստները լցվել են, վարչությունը պիտի ժամ առաջ նոր, պահեստներ պարաստի»: «Մեշոկները քիչ են, բանվորական ձեռքերը քիչ են...» Բոլորը, բոլորը քիչ են, չեն բավարարում... ասենք վոչ թե իսկապես քիչ են, այլ, բերքն ե շատ: Սնասնամանորեն շատ, հեղեղող բերք, վոր քառասուն տարուց ի վեր չի տեսել Բայանդուրը, ու հիմա տեսավ, վորովհետեւ պատմության մեջ առաջին անգամ բայանդուրցիներն աշխատեցին այսպես՝

ԲՐԻԳԱԴ № 4

Յերբ հողը սևացավ, 9 տղամարդ և 28 կին դաշտ դուրս յեկան: Հարկավոր եր ցանել 1941¹/₂ հեկտար հողամաս:

Ցանեցին, անգամ մատներով յետ արեցին հողը և ցանեցին:

Քարը, մոլախոտերը խանգարում էին և 37 հողագործ իրենց կանաչ մայիսն անցկացրին դաշտում, արևի տակ, հավաքեցին քարերը, պոկեցին մոլախոտերը. «դուշը սիրտ չեր անում թուշեր մեր հողամասի վրայով»: Նրանց աչքի առջև, հարատև խնամքի ու գուրգուրանքի ներքո հասան, լցվեցին արտերը: Այդ 37-ից յեղան մարդիկ, վոր չգիմացան, գլուխ պահեցին, «հիվանդացան», փախան աշխատանքից, բայց «իլիչովկան», արտադրական դատարանը, կուսխմբակը քնած չեյին:

Յեվ ամենից շուտ ու ամենից լավ հնձեց № 4 բրիգադը, Բաբկեն Մկրտչյանի բրիգադը:

— Արդեն պրծել ենք հունձը, հիմա մեր գեղերը կալում հերթի յեն սպասում, մի քանի օրից հետո մեզանից յուրաքանչյուրը տուն կտանի 2—300 փութ ցորեն: Դիտեմ, վոր պիտի հարցնեն.— Ի՞նչ պիտի անեք այդքանը:

Կարիքներ շատ կան... Մեզանից շատերը ջահելներ են, հարկավոր և «տուն ու տեղ անել», հարկավոր և մաքուր անկողին, մահճակալ, պահարաններ, հագուստ:

Ինչո՞ւ չունենալ պատեֆոն, ուղիորադարատ, ինչո՞ւ չունենալ հյուրասենյակ, սրանք անհրաժեշտ բաներ են և մենք

կգնենք, իսկ կլթան՝ բոլոր կոլխոզնիկներն էլ ունեն, նույնիսկ 2—3 հատ:

Ի հարկե ուտելուց և ծախսելուց հետո կըրկին կավելանա... Մենք այդ կտրամադրենք կոլխոզի կապիտալ ֆոնդին: Հարկավոր և կառուցել հյուրանոց, նոր ախուժ, փոքրիկ ճաշարան: Մշտական մսուր և հարկավոր, իսկ արանապորտը շատ և կաղում. ֆուրգոններ, ձիեր, յեղներ պիտի գնել... Մենք յուրաքանչյուրս մեր ամեն մի աշխորից 8 կիլո ցորեն կտանք կապիտալ ֆոնդին, ելի շատ կմնա, իսկ յեկող տարի աշխորին 21¹/₂ փթից փոչ պակաս... Մենք արդեն սովորեցինք, թե ինչպիսի պիտի աշխատել շատ բերք ստանալու համար:

Այսպես ասացին № 4 բրիգադի անդամները և այսպես եր ծրագրել տմբողջ 136 տնտեսութուն ունեցող Բայանդուրի կոլխոզը: Սակայն այսպես չեր ծրագրել այն՝

«ՄԱՐԴԸ, ՎՈՐ ԶԵՐ ԾԻԾԱՂՈՒՄ»

Նրա մորուքը Բրիատուսի մորուքի պես թուխ և խուճուճ եր: Դեմքը նույնպես թուխ եր, դուրեկան և կենսունակ: Վողջ կեցվածքից յերևում եր ջահելութունը, ուժը, առնականութունը: Միջահասակ և չահել այդ տղամարդու աչքերում, սակայն, նստած եր մշուշային, անորոշ մի բան... Նա խոսում եր դանդաղ և՛ տխուր, և՛ այդ նրա համար, վորովհետև, յերբ բացվեց դարուճը, և անգամ մանուկներն անգործ չմնալու համար դաշտ քեցին քամալընչած հորթերին, Արտավազը չզգաց զարնան գալը. նա ավելի խորը թաղվեց քուրսու տակը՝ աթարի կրակով ջերմաց-

նելու անգործութունից սառչող իր անդամները: Հասան արտերը, և անգամ կոլտնտեսունի Բերգոն ու Վարսենիկը շալվարավորների հետ գերանդի վերցրին, իսկ Արտավազը մի կողքից մյուսին շուռ գալով, հայտարարեց.— «Դողս բռնել ե, չեմ կարող աշխատել...»: Ու յերբ բազմաթիվ աշխատանքային գրքույկներում պիտենքական հպարտ կեցվածքով շարվեցին թվերը մեկից մինչև յերկու հարյուր՝ Արտավազը տան մի անկյունից գտավ իր փոշոտ, ծալծրված աշխորքույկը և այնտեղ գտավ մենավոր մի թվանշան՝ 6...

Բանը նրանում և, վոր մարդը հույս և ունեցել, թե անցյալ տարիների նման կհաջողեցնի և մի բան դուրս կկորդի կոլխոզից... Բայց «ավանդ փառացս անցավորի...», կոլխոզային աշխատանքի նոր մեթոդները փշրեցին Արտավազի և իր արյունակիցների այն շերեփը, վորով նրանք բերք ստանալու հույս ունեյին: Յեվ հիմա, կոլխոզական հույս ունեյին, աշխորքույկներում գրանցվող թվերը բարձրանում են այդ լողրաշեն շերեփի—Արտավազների վերջին հույսի բեկորների վրա...

Ո՞վ իր աշխատանքի արդյունքը նրան կտա...

Արտավազը վերջերս եր միայն այդ զգացել և գնացել եր կալում աշխատելու... Սակայն նա չեր ծիծաղում, վորովհետև 2—300 փթի զիմաց տուն պիտի տաներ միայն 10—12 փութ հացահատիկ:

Ա.ՂԱՎ.ՆԻ

ԱՐՏԱՇԱՐԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ ՄՈՏ

Գնում գնք դեպի Արտաշար:

Առջեկներս Արարատյան լայնածավալ
դաշան ե, ուր ել աչք ես ածում, անվերջ
այգիներ, արտեր, նորից այգիներ, առու-
ների կանոնավոր ցանցով պատած:

Մի ժամանակ, յերբ գյուղ մտնելիս հար-
ցնում եյիր, թե ո՞ւմն ե այս ջրադաշտը, կամ
այգին, արտը, պատասխանում եյին—«Մա-
թոս աղինն ե», կամ մի ուրիշ անուն եյին
տալիս, և այդ անունն ուղեկցում եր քեզ
մինչև գյուղի կենտրոնը. գնում տեսնում
եյիր նրա մեծ տունը, հետո իրեն, ծանր
բազմած գյուղամիջին...

Այժմ պատկերը փոխվել ե.

— Ո՞ւմն են ես այգիները

— Կոլխոզիներ...

— Ես բամբակը, ես ցորենը...

— Կոլխոզիներ...

Ինչ վոր խոշոր, աչքի ընկնող բան կա,
բոլորը կոլխոզինն ե:

Կոլխոզի այգիներն են. նրա արտերը,
կոլխոզն ե հիմա գյուղի աչքը, նրա ապա-
գան, նրա տերը...

* * *

Յերեկոյան կոլխոզի ժողովն եր ակում-
բում—նախկին յեկեղեցում: Զեկուցում ե
կոլխոզային համագումարից վերադարձած
ընկերը:

Զեկուցումից հետո անցնում են նոր
հարվածայինների հաստատման: Կարդում ե
յերկար ցուցակը ու ամեն անվան դեմ
ավելացնում.

— Հարվածային...

— Կարմիր տախտակ...

— Հետաձգել...

(Հասված)

Հարվածայինները խոշոր տոկոս են կաղ-
մում և որեցոր նրանց թիվն աճում ե:

Ժողովը կանոնավոր սկսվում, կանոնա-
վոր վերջանում. նա կարող եր պատիվ բե-
րել և քաղաքին:

Ակամա հիշում եմ անցյալը...

Ու՞ր են մեր գյուղերի «կլասիկ» ժողով-
ները—անկապ ու անկարգ, իրենց դոկտորով,
տուր ու դմփոցով, միշտ անվճիռ ու անտ-
րոշ կամ խաղալիք դարձած կուլակների
հա՞ ու «չե»-ին...

* * *

Հետևյալ որը կոլխոզի նախագահ ընկեր
Նիկոլի հետ նորից գնում ենք դաշտերը:
Կանանց խմբերը քաղհան եյին անում բամ-
բակի արտերում, իսկ տղամարդիկ ժան-
գյառ եյին փչում այգիներում:

Անցնում ենք մոտակա այգիները, գրու-
ցում առանձին կոլխոզիկների հետ: Ահա
մեր առաջ և հարվածային Գալուստ Հովհան-
նիսյանը. նա կոլխոզ ե մտել 1929 թվից:
Առաջ նա բատրակ ե յեղել, աշխատել ե
կուլակների մոտ: «Ամբողջ ընտանիքով—
հինգ հոգով աշխատում եյինք,—ասում ե
Գալուստը, բայց կուլակը միայն վաճա-
չարի կերակրում եր մեզ, ել ուրիշ վոչինչ
չեք տալիս, մինչև անգամ անձրևախափան
որերին հաց ել չեք տալիս. ասում եր.—

— Եսոր ի՞նչ ես արել, վոր ի՞նչ տամ...

Այժմ Գալուստն իր ընտանիքի հետ աղ-
բում ե կոլխոզի տված սենյակում: Անցյալ
տարի նա կոլխոզից ստացել ե մոտ 15000
ռուբլու յեկամուտ պետական գներով. (իսկ
շուկայի գներով մի քանի անգամ ավել):

Ստացել ե կոլխոզից ցորեն և մի շարք

ուրիշ մթերքներ (գինի, խաղող, չամիչ, պա-
նիր և այլն). սրան պիտի ավելացնել և
մանուֆակտուրան, շաքարը, և այլ ար-
դյունաբերական ապրանքները, վորը պար-
բերաբար ստանում ե: Աշխատանքի որերին,
ինչպես և բոլոր կոլխոզիկները, կանոնա-
վոր ճաշ և հաց ե ստանում:

Գալուստը, վորպես հարվածային, ստացել
ե նվերներ: 1932 թվին նրան ուղարկել են
Բաղու եքսկուրսիայի: Ինքը յեղել ե կիսա-
դրադիտ, այժմ կոլխոզի լիկկայանից անց-
նելով, կարողանում ե լրագրեր ու զըր-
քեր կարդալով առաջ տանել իր ինքնակրթ-
թուփյունը:

Ահա և մի ուրիշ հարվածային—Վասակ
Նազարյանը:

Սա միջակ գյուղացիներից ե. կոլխոզ ե
մտել 1929 թվից. սկզբում տատանվելիս ե
յեղել, կամ ինչպես ինքն ե ասում—«լավ
ու վատ եյի մտածում կոլխոզի մասին»:
Այժմ նա սերտ կալած ե կոլխոզին. գովա-
սանքով ե խոսում այս տարվա աշխատանքի
մասին: Անցյալ տարի ստացել ե մոտ 10000
ռուբլու յեկամուտ, վորից մի մասը մթերք-
ներ պետական գներով: Իր աշխոթերի հա-
մաճայն ստացել ե ցորեն և բոլոր մթերք-
ները համապատասխան չափով:

Գալուստ Հովհաննիսյանն իր աշխոթերի
քանակով միջակ յեկամուտ ստացող ե (120
աշխոթ), իսկ Վասակը—ամենաթերի (80 աշխ-
ոթ):

Յեթե աչքի առաջ ունենանք, վոր կոլ-
խոզիկների աշխոթերը հասնում են 80-ից
մինչև 470-ի, ապա պարզ կլինի, թե ի՞նչ-
պես ե բարգավաճել Արտաշարի կոլխոզը:

ԱՐՏԱՇ

ԹՎՈՒՄ Ե, ԹԵ ՄՈՏԵՆՈՒՄ ԵՍ ՄԻ ՓՈՔՐԻԿ ՈՒ ԿՈԿԻԿ ՔԱՂԱՔԻ

Յերբ Սանահին կայաւանից դեպի վեր ձգվող զառիվայրով վեր ենք մաղցում և ամեն րոպէ անդունդը գլորվելու վտանգից ազատվում, հսկա քարաժայռի հենց պռունգին մեր առաջ ցցվում են քարաշեն սպիտակ շէնքերը՝ կարմիր ներկած թիթեղյա տանիքներով:

Թվում է, թէ մոտենում ես մի փոքրիկ ու կոկիկ քաղաքի, վորը թաղված է պարտեզների մեջ:

Սակայն այդպես չէ: Քաղաք չէ մեր առաջ փռվածը, այլ Ուզունլար գյուղն է իր կոկիկ շէնքերով:

Մոտենում ենք գյուղի ներքևի ծայրին շարված սպիտակ շէնքերին:

— Կոլխոզինը կլինեն անպայման—ասում է րնկերս:

Յեւ իրոք, այդ նորակառույց քաղաքատիպ շէնքերը կոլխոզինն են: Յեւ այնտեղ ապրում են... կոլխոզի կովերն ու հորթերը: Շէնքերից մեկն էլ ֆերմայի պանրագործարանն է, մյուսը՝ ճաշարանը, իսկ այն մյուս ծայրին՝ տրակտորադար:

Մտնում ենք № 2 գոմը:

Գոմ մի ասի, պալատ ասա:

Մի ընդարձակ ու լուսավոր շէնք է այս, վորի պատերը մաքուր սպիտակացրած են կրով: 60—70 կով կապված են կանոնավոր շարքով և հենց առաջին հայացքից յերեւում է, վոր կուշտ են ու առույգ: Նրանցից շատերը նստել են չոր դարմանի վրա ու փնչացնելով վորոճում են, շատերն էլ հանգիստ պառկել ու քուն են մտել:

Գոմի մի ծայրում անասնապահ Լեոնը թիմարում է իր սիրելի Ջուլին, վորը ֆերմայի պարձանքն է: Նա որական 16 կիլո կաթ է տալիս:

Լեւոնը մեղ տեսնելով առաջ է գալիս ու բարձում:

— Գոմդ լալն է ու մաքուր,—ասում եմ յես:

— Կոլխոզական ա, ինչո՞ւ պլտի վատ լինի—պատասխանում է նա:

— Քանի կով ունի Ձեր ֆերման,

— Ութսունութ կով, դրանից ծնած է 54-ը:

Քաղում ենք գիրուկ կովերի մոտով ու անցնում մյուս շարքը: Այստեղ կովերի տակը մաքուր չէ, թաց է և կովերը կեղտոտ են:

— Ինչո՞ւ յե այսպես—հարցնում ենք Լեւոնին:

— Ես շարքի կովերը Պատվականն ա պահում:

Պարզվում է, վոր Պատվականը կովերին կեր է տալիս ու զրանով իր ռնելիքը վերջացած համարում: Նա կովերի տակը չի մաքրում, նրանց չի թիմարում և որվա մեծ մասն իր տանն է անցկացնում. գոմում շատ քիչ է լինում:

— Իսկ վորքան կաթ էք վերցնում ես շարքի 30 կովից:

— Այ, տեսնում եք են բիդոնը,—մատով ցույց է տալիս անկյունում դրած կաթնաժանր,—որակսն յերկու տնգամ լցնում ենք, իսկ բիդոնը տանում է 150 կիլո կաթ:

Ուրեմն՝ 30 կովն որական 300 կիլո կաթ է տալիս:

Լեւոնը մեղ առաջնորդում է դեպի հորթանոց: Ներս ենք մտնում մաքուր ու կոկիկ հորթանոցը, վորտեղ շարված են սիրուն ու մաքուր հորթերը: Նրանք ականջները խլշում և մեղ են նայում. ըստ յերեւոյթին անսովոր այցելութունը դարմացրել է նրանց: Լեւոնը հերթով մոտենում է նրանց, փայփայում, շոյում, դնչները համբուրում ու հանգստանում:

Հորթանոցում ամենահետաքրքիրը պատից կախված ջերմաչափն է, վոր ցույց է տալիս 13 աստիճան տաքություն:

— Ուրեմն դուք ջերմաչափ ել ունեք գոմում:

— Վոնց չէ, ամբողջ ձմեռը 12-ից պակաս չենք արել, 14-ից բարձր չենք արել: Եղպես է յեղել մեր հորթանոցի տաքությունը:

— Իսկ ինչպե՞ս եք կերակրում հորթերին:

— Սուսնց մոր. հիմա կտեսնեք, շուտով ժամը 5-ը կլինի:

Հորթանոցից դուրս ենք գալիս և իմ աչքին է ընկնում գոմի պատին կախված թիթեղյա հասարակ ժամացույցը, վոր չլրկել է միայլաբ ու համաչափ:

Իրոք, ժամը 5-ին քիչ է պակաս:

Շարունակում ենք դիտել գոմը, ֆերման և զրուցում ենք աշխատանքի նվաճումների ու թերությունների մասին:

Ժամը 5-ին Լեւոնի գոմում անսովոր աղմուկ է սկսում, միաբերան բառաչում են

և կովերը և հորթերը: Լեվոնն շտապ հանում և շինելը, հագնում և մաքուր խալաթը, լվանում և ձեռքերը և կովկիթն առած սկսում և կիթը:

Վոչ մի հորթ կովի տակ չի գցվում: Լեվոնը կթում և առանց հորթի և կթվող կովը սիրալիր լիզում և Լեվոնի ձեռքերը, գլուխը, շորերը:

Իր 30 կովը կթելուց հետո Լեվոնը բաց արեց հորթանոցի դուռն ու ինչ վոր անուն ազնեց, Հորթանոցից դուրս յեկավ մի հորթ և շտապ դունչը կախեց դուլլի գտած կաթի մեջ: Իր բաժինը խմելուց հետո նա հետ գնաց հորթանոց ու նրա փոխարեն դուրս յեկավ մի ուրիշը: Այսպես կերակրվեցին բոլոր հորթերը:

— Ինչ՞պես ես կարողացել սովորեցնել այս անասուններին,—հարցնում ենք մենք զարմացած ու հիացած:

— Սովորեցրել եմ ելի,—ներքին հալարտուլթյամբ պատասխանում և Լեվոնը—յես անասնապահության մասին շատ գրքեր ունեմ ու շատ եմ կարդացել:

Բացի այդ, անցած ամառը «Սոցգյուղ»-ի ուղարկած գիտահետազոտական բրիգադը ինձ շատ բան սովորեցրեց. յես լրիվ կատարում եմ նրանց խորհուրդները:

Յեվ իրոք, Լեվոնը կովերին ու հորթերին խնամում և գիտական մեթոդներով, գիտության ցուցմունքներով: Նրա վերին աստիճանի հոգատար աշխատանքի շնորհիվ

և, վոր 54 ծնած կովերից 44-ն արդեն հղիացել են դեռ գարուն չմտած և գյուղում մատով են ցույց տալիս կոլխոզի ֆերմայի կովերն ու հորթերը:

Մյուս ուրը դյուղից հեռանալիս մենք նորից անցանք կոլխոզի դոմերի մոտով: Յես նայեցի դոմերին, հիշեցի Լեվոնին, առաջին հանդիպումը նրա հետ ու նրա առաջին խոսքը, «Կոլխոզական ա, ինչի՞ պիտի վաճ լինի»:

Այո, կոլխոզի անասուններն ինչի՞ պիտի վատ լինեն, յեթե կոլխոզում Լեվոններ կան, յեթե կոլխոզը լավ և կազմակերպված, ամուր հիմքերի վրա յե դրված:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՏԻՑԱՆՅԱՆ



Կույսուրական կլանք Գողակույի կոլեկտիվում

ՓԱՌԻ ՄԵՐ ԿՈՎԻՆ ԵՍ ՏԱՐԻ

Հողն անուժ եր,
Փողն անուժ եր,
Կյանքն դառն եր են սարի,
Հողի մարդը
Աչի փուռ եր,
Ահր արսում են սարի:
Սովի առաջ
Դուռը բաց եր,
Աչքը բաց եր են սարի,
Վոչ կարող եր
Ցավը լացել,
Վոչ ել բաղդը են սարի:
Աշխարհը վառ
Բոցերի սեջ,
Մահ, կոտորած են սարի,
Կրակը թեժ,
Աղբաք խեղճ,
Մերկ ու սոված են սարի:
Ջանել-անել
Կովի սարան,
Դյուղը դասարկ են սարի,
Հողը մնաց
Առանց վարել,
Արք՝ կծողուն են սարի:
Սովը յեկավ,
Դուռը բաց եր,
Վողք ու լաց եր են սարի,
Մահը յեկավ,
Սրբեց սարավ են սարի,
Սրբեց սարավ

(ԳԵՂՈՍ ՍՍԲՅԱՆ)



Յե՛կ գյուղերից,
Մահը կուժս եր են սարի,
Կյանքն ծանր
Դժոխք դառավ,
Արե՛կ չկար են սարի:
Ու հիմա, յերբ
Մի՛սք եմ անում
Բերք առաս ես սարի,
Արք հասուն
Հեսս խոտում,
Ծիծաղում ե ես սարի,

Յե՛կ հասկերի
Ծփանքից մեղմ
Ինձ են նայում հազար դեմք,
Նրանք ընկած
Ընկերներն են,
Վոր մահացան են սարի:
Նրանք կարծես,
Բարձրանում են,
Որորվում են ու ժպտում,
Ու կարծես թե
Արե՛րք մեր
Նրանց արյամբ են փոքում:
Ու կարծես թե
Վարդերն յերկրի
Նրանց ծիծաղը լինի,
Ու կարծես թե
Նրանց հետ լուռ
Ձուցում եմ յես հիմի:
Հողն անուժ եր,
Յերգն անուժ ե
Կյանքն ուրախ ե ես սարի:
Հողի մարդու
Աչքը կուժս եր,
Ան չունի նա ես սարի:
Յերգ ու խնդում
Մեր արե՛րում,
Կյանքն մերն ե ես սարի,
Փառք մեր քերթին,
Ձեռքին, յերգին,
Փառք սեր կովին ես սարի:

1933 թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՃՅՑԻՆ, ՑԱՆՔԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑԱՎ, ԴԱՇՏԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1933 թ. Խորհրդային Հայաստանը բոլոր տեսակի կուլտուրաներից ունեցավ 424000 հեկտ. ցանք, վոր նախորդ տարվա ցանքից 34300 հեկտ. կամ 9,20%-ով ավելի յե: Այս նոր տարածությունը ձեռք է բերված միջնակների, թմբերի վերացումով և նոր յուրացված հողամասերից: Կուլտնտեսությունների ցանքերի տարածությունը 1933 թ. հասնում էր 162055 հեկտարի, նախորդ տարվա համեմատությամբ տալով 14⁰/₀ աճ:

Բացի ցանքերի աճումից, 1933 թվին մշակումն անհամեմատ ավելի լավ յեղավ, քան նախորդ բոլոր տարիներին: Ցանքը կատարվեց ժամանակին և վերակով, զտված և ախտահանված սերմացուով: Ցանքից հետո յեղած մշակման բոլոր պրոցեսները կատարվեցին կազմակերպված, խնամքով և ժամանակին. հապաղումներն ու ձգձգումները բացառիկ յերեվոյթներ էյին: Ագրոնոմի, ագրոտեխնիկի և նրանց փոխարինող ագրոավագի խորհուրդն անպակաս յեղավ կուլտնտեսական բրիգադներից ու ողակներից: Աշխատանքի բոլոր ողակներում լայն ծավալ ստացավ սոցմրցումն ու հարվածայությունը, վորը հզոր խթան հանդիսացավ ագրոմի-նիսմի կիրառման գործում:

Ահա այս բոլորի շնորհիվ մեր դաշտերն այս տարի տվին անսովոր բարձր բերք: Յեթե 1932 թ. աշնան ցորենի միջին բերքը Հայաստանում յեղել է հեկտարից վեց ցենտներ, այս տարի վորոշ շրջաններում աշնանացանը հեկտարից տվել է մինչև 10 ցենտ-

ներ բերք, իսկ մի շարք կուլտնտեսություններում՝ նույնիսկ մինչև 14—15 ցենտներ:

Գարնան ցորենի բերքն անցյալ տարի յեղել է միջինը՝ 4,5 ցենտներ, այս տարի մի շարք շրջաններում (Դիլիջան, Ստեփանավան և այլն)՝ մինչև 9 ցենտ., իսկ վորոշ կուլտնտեսություններում՝ մինչև 12 ցենտներ:

Առանձնապես բերքի բարձր ցուցանիշներ է տվել գարնան գարին: Անցյալ տարվա 5,5 ցենտ. միջին բերքի դիմաց՝ այս տարի գարնան գարու հեկտարից ստացվել է մինչև 12 ցենտներ (վորոշ շրջաններում), իսկ մի շարք կուլտնտեսություններում՝ մինչև 17—18 ցենտ.:

Տեխնիկական կուլտուրաների մշակման բնագավառում ևս 1933 թվիվը հաղթանակի տարի հանդիսացավ: Մենք վոչ միայն կտուրեցինք մեր բամբակի հանձնման տարեկան պլանը, այլ և անցյալ տարվա պարտքի մի մասը փակեցինք: Յեվ այդ հնարավոր յեղավ կատարել, վորովհետև մեր բամբակի դաշտերն այս տարի տվին հեկտարից 6,5 ցենտներից վոչ պակաս բերք, իսկ բաղմաթիվ կուլտնտեսություններում՝ 10—12, անգամ մինչև 15—16 ցենտներ (Արբաթ, Դյոյդյունմբիթ, Զաֆարաբադ, Ագատաշեն և այլն), մինչդեռ անցյալ տարի միջին բերքը յեղել է չորս ցենտներ:

Ահա այն հաստատուն հիմքերը, վորոնց վրա կուլտնտեսությունները և կուլտնտեսական գյուղացիությունն ամրացնում են իրենց տնտեսությունները և ունեվորի մակարդակին հասնում:

30 ՆՈՐ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վեր աշխատավոր մենատնտեսը կարող է անտարբեր նայել կուլտնտեսությունների այս տարվա կազմակերպված աշխատանքին և բոլոր բնագավառներում ձեռք բերած աննախընթաց հաջողություններին: Յեվ իրոք բաղմաթիվ փաստեր են արձանագրված՝ թե ինչպես աշխատավոր մենատնտեսը, դեռ կուլտնտեսություն չմտած, արդեն կամավոր կերպով աշխատում է կուլտնտեսության համար, ոգնություն է հասնում նրան, քաջ գիտակցելով, վոր վաղն այդ նույն կուլտնտեսությունը պիտի դառնա նաև իր ոջախը:

Կուլտնտեսությունների նվաճումների արդյունքը պիտի համարել 1933 թվին ստեղծված կուլտնտեսական վերելքը:

Միայն մի տարվա մեջ մեր կուլտնտեսությունների թիվն ավելացավ 30 նոր կուլտնտեսություն, անցյալ տարվա 892 կուլտնտեսության դիմաց՝ 1933 թվի դեկտեմբերի 15-ին մենք ունեցել ենք 922 կուլտնտեսություն, վորոնք ընդգրկել են 67811 տնտեսություն, կամ գյուղական տնտեսությունների 40,3 տոկոսը: Այս տոկոսի արժեքը շատ ավելի բարձր է, քան ինքը-թիվն և ցույց տալիս, վորովհետև այս տոկոսի վորակն անհամեմատ բարձր է անցյալ տարվա վորակից. 2700 խորթ ու անհարավատ կամ լողր տնտեսություններ 1933 թ գտվել, վտարվել են կուլտնտեսություններից

և նրանց փոխարեն ընդունվել են ակտիվ ու աշխատասեր տնտեսություններ, վորոնց թիվը հասնում է 9000-ի: Առանձին շրջաններում, (Ղուրղուղուլի, Ղամարու, Իջևիան, Ղափան, Մեղրի, Գորիս), կոլեկտիվացման միջին տոկոսը 50-ից էլ բարձր է, իսկ Վաղպատում, Ղարաքիլիսայում, Լենինականում, Արթիկում, Կոտայքում և Սիսյանում 40—50-ի յե հասնում:

ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ- ՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և բերքատվության բարձրացման գործում խոշոր դեր է վերապահված մեքենայացմանը: 1933 թիվն այդ տեսակետից դարձյալ նշանակալից է: Բավական է ասել, վոր այդ տարին Հայաստանում գյուղատնտեսության մեջ աշխատել է 640 տրակտոր, (վորից 23-ը նոր ստացված), 9092 ձիու ուժի կարողությամբ, 7 կոմբայն (2-ը նոր), իսկ առանձնապես Հողօդկոծատի ցանցում՝ 21 ներքին այրման շարժիչ (10-ը նոր), 733 հացահատիկի շարքացան (80-ը նոր), 843 սերմազտիչ (30-ը նոր), 320 խոտհար մեքենա (154-ը նոր), 174 խոռոչկալ մեքենա (30-ը նոր), 95 կալսիչ (31-ը նոր), 80 սիլոսահատ մեքենա (42-ը նոր), 50 տուրմանավազում (45-ը նոր), 402 քահմար մեքենա (165-ը նոր) և այլն: Ել չենք խոսում գութանների, փոցիների և այլ բազմաթիվ գյուղգործիքների մասին, վորոնք այժմ մասսայական գործածության մեջ են մեր գյուղատնտեսության մեջ: Չենք խոսում նույնպես անասնապահական մթերքների վերամշակման ասպարիզում ոգտագործվող միքենաների մասին:

Մեքենաների դերն առանձնապես հրաշալիան էր 1933 թվի գարնանացանի և բերքահավաքի ժամանակ: Հենց միայն ՄՏԿ-ների գծով 1933 թվին 42900 հեկտար տրակտորով և կոմբայնով: Իսկ մենք, գիտենք, վոր խորհրդային տնտեսությունում նույնպես գործում էին 255 տրակտոր, իսկ կոլտնտեսություններում, բացի ՄՏԿ տրակտորներից, աշխատում էին նույնպես 58 տրակտոր:

Այս տարվա առատ բերքի հավաքումն ու կալսումը նույնպես հնարավոր չեր լինի առանց հնձող, խոռոչկալ, կալսող և քամհար մեքենաների:

Վերանորոգման արհեստանոցները, վորոնց թիվը 1933 թ. հասնում էր 284-ի (նախորդ տարվա 141-ի դեմաց), նույնպես խոշոր գործ կատարեցին՝ մեքենաների և գյուղգործիքների աշխատանքը տեվական դարձնելու համար:

ՄՏ ԿԱՅԱՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՅՈՒ- ՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԴԱՑՄԱՆ ԼՍԱԿՆԵՐ

Գյուղատնտեսության մեքենայացման գործում ավանդարդային դերը վերապահված է ՄՏ կայանին: Այդ են ցույց տալիս նրանց կատարած աշխատանքներն իրենց մի քանի տարվա գոյության ընթացքում: Յեվ իրոք, 1933 թ. Հայաստանում գործող տրակտորների 50 տոկոսից ավելին գտնվում էին ՄՏԿ-ների տրամադրության տակ: 1932 թ. 4 ՄՏԿ-ների փոխարեն 1933 թ. Հայաստանում յեղել է 7 ՄՏԿ (չհաշված աշանք կազմակերպված 3 նոր ՄՏԿ-ներ), վորոնք տրակտորով վարել են 42900 հեկտար, ցանել են 4154 հեկտ., հավաքել են բերքը 1666 հեկտարի, կալսել են 7518 հեկտարի բերքը և այլն:


ՄՏԿ-ների քաղաքիները խոշորագույն գործ կատարեցին՝ կոլտնտեսությունները կազմակերպչորեն, տնտեսապես և քաղաքականապես ամրացնելու խնդրում, որինակելի կարգ ու կանոն հաստատեցին կոլտնտեսական հողի վրա: Նրանց հերոսական աշխատանքները շնորհիվ է մեր ձեռք բերած վիթխարի հաջողությունները:

ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ

Կոլտնտեսությունները 1933 թվին զգալի նվաճումներ ունեցան նաև սոցիալիստական անասնապահության բնագավառում: Տարվա սկզբի 84900 խոշոր անասունի փոխարեն տարվա վերջում կոլտնտեսություններն ունեն 97400 գլուխ, 115500 վոչխարի փոխարեն՝ 153600 վոչխար. 7700 խոզի փոխարեն 14100 խոզ և այլն: Այս աճը կատարվել է գլխավորապես հոտի վերարտադրության գծով:

1933 թ. դեկտեմբերի մեկին Հայաստանի կոլտնտեսություններն ունեին 223 կաթնապրանքային ֆերմա 37140 գլ. խոշոր անասունով, իսկ նույն տարվա սկզբին՝ 175 ֆերմա՝ 29400 գլուխ խոշոր անասունով: Վոչխարաբուծական ֆերմաների թիվը հասել է 209-ի, 107900 գլ. վոչխարով, վոր տարվա սկզբի համեմատությամբ 46 տոկոսի աճ է ներկայացնում:

Լավ խնամքի և ուժեղ կերի շնորհիվ բարձրացել է կովերի կաթնատվությունը (տարեկան մեկին 8—12 ցենտ.), ավելացել է նրանց քաշը, նվազել է անկման տոկոսը (Կուրթան և այլն) սահմանված տեղ-տեղ նորմայից էլ ցած իջնելով:



ԳԻՆԸ
ЦЕНА 2 руб.

4

**ПО ПУТИ ЗАЖИТОЧНОЙ
ЖИЗНИ**
СЕЛЬХОЗГИЗ ССР АРМЕНИИ
ЭРИВАНЬ—1934

ՀՀ Ազգային գրադարան



NL0283638

72.682